ՎԱՏԻԿԱՆԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՊՐՈՂ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

GAUDIUM ET SPES

Թարգմանեց՝

ՄԱՇՏՈՑ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Ա. Եկեղեցու սերտ միութիւնը մարդկային ամբողջ զարմի հետ 5
Բ. Ում է դիմում Ժողովը 5
Գ. Ծառայելով մարդուն 6

Ներածական ծանուցում. ՄԱՐԴՈՒ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Դ. Ցոյսեր եւ տագնապներ 7
Ե. Խորին փոփոխութիւններ 8
Զ. Հասարակական փոփոխութիւններ 8
Է. Հոգեբանական, բարոյական եւ կրօնական փոփոխութիւններ 9
Ը. Անհաւասարակշռութիւններ ժամանակակից աշխարհում 9
Թ. Մարդկութեան միշտ աւելի համատարած ձգտումները 10
Ժ. Մարդու ամենախոր հարցադրումները 11

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԿՈՉՈՒՄԸ

ԺԱ. Պատասխանել Հոգու ազդակներին 12

ԳԼՈՒԽ Ա. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

ԺԲ. Մարդն Աստծոյ պատկերով 12
ԺԳ. Մեղքը 13
ԺԴ. Մարդու կազմուածքը 13
ԺԵ. Բանականութեան, ճշմարտութեան եւ իմաստութեան արժանապատուութիւնը 14
ԺԶ. Բարոյական խղճի արժանապատուութիւնը 15
ԺԷ. Ազատութեան գերագանցութիւնը 15
ԺԸ. Մահուան խորհուրդը 16
ԺԹ. Անաստուածութեան կերպերն ու պատճառները 16
Ի. Համակարգուած անաստուածութիւնը 17
ԻԱ. Եկեղեցու դիրքորոշումը անաստուածութեան դիմաց 18
ԻԲ. Քրիստոսը՝ Նոր Մարդը 19

ԳԼՈՒԽ Բ. ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԻԳ. Ի՞նչ է մտադիր անել Ժողովը 21
ԻԴ. Մարդկային կոչման հասարակական բնոյթը Աստծոյ ծրագրում 21
ԻԵ. Անձի եւ մարդկային հասարակութեան փոխկախուածութիւնը 22
ԻԶ. Ընդհանուր բարիքի զարգացումը խթանելու համար 23
ԻԷ. Մարդկային անձի հանդէպ յարգանքը 23
ԻԸ. Հակառակորդների նկատմամբ յարգանքն ու սէրը 24
ԻԹ. Բոլոր մարդկանց հիմնական հաւասարութիւնը եւ հասարակական արդարութիւնը 25
Լ. Հարկաւոր է յաղթահարել անհատապաշտական մտածելակերպը 25
ԼԱ. Պատասխանատուութիւն եւ մասնակցութիւն 26
ԼԲ. Մարդացեալ Խօսքը եւ մարդկային համերաշխութիւնը 26

ԳԼՈՒԽ Գ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԼԳ. Խնդիրը 27
ԼԴ. Մարդկային գործունէութեան արժէքը 28
ԼԵ. Մարդկային գործունէութեան կանոնակարգը 29
ԼԶ. Երկրային իրականութիւնների օրինաւոր ինքնուրոյնութիւնը 29
ԼԷ. Մարդկային գործունէութիւնն ապականուած է մեղքով 30

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

ԼԸ. Մարդկային գործունէութիւնը կատարելութեան աստիճանի է բարձրացուել Զատկական խորհրդի մէջ 31
ԼԹ. Նոր երկիր եւ նոր երկինք 31

ԳԼՈՒԽ Դ. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Խ. Եկեղեցու եւ աշխարհի միջեւ փոխադարձ յարաբերութիւնները 32
ԽԱ. Օգնութիւնը, որը Եկեղեցին մատուցանել է ընծայել անհատներին 34
ԽԲ. Օգնութիւնը, որը Եկեղեցին մատուցանել է ընծայել մարդկային հասարակութեանը 35
ԽԳ. Օգնութիւնը, որը Եկեղեցին մատուցանել է ընծայել մարդկային գործունէութեանը քրիստոնեաների միջոցով 36
ԽԴ. Օգնութիւնը, որը Եկեղեցին ստանում է ժամանակակից աշխարհից 38
ԽԵ. Քրիստոս. Այբը եւ Քէն 39

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ. ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՒԵԼ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽԶ. Նախաբան 40

ԳԼՈՒԽ Ա. ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ

ԽԷ. Ամուսնութիւնն ու ընտանիքը այսօրուայ աշխարհում 40
ԽԸ. Ամուսնութեան եւ ընտանիքի սրբութիւնը 41
ԽԹ. Ամուսնական սէրը 42
Ծ. Ամուսնութեան արգասաւորութիւնը 43
ԾԱ. Ամուսնական սիրոյ համաձայնութիւնը կեանքի հանդէպ յարգանքի հետ 44
ԾԲ. Բոլորի յանձնառու ներդրումն ի նպաստ ամուսնութեան եւ ընտանիքի բարիքի 45

ԳԼՈՒԽ Բ. ՄՇԱԿՈՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

ԾԳ. Նախաբան 47

ԲԱԺԻՆ Ա. ՄՇԱԿՈՅԹԻ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՅՍՕՐՈՒԱՅ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԾԴ. Նոր ապրելակերպեր 48
ԾԵ. Մարդը մշակոյթի հեղինակ 48
ԾԶ. Դժուարութիւններ եւ առաջադրանքներ 48

ԲԱԺԻՆ Բ. ՄԻ ՔԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔ ՄՇԱԿՈՅԹԻ ՃԻՇՏ ԽԹԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԾԷ. Հաւատք եւ մշակոյթ 49
ԾԸ. Բազմապիսի յարաբերութիւնները Քրիստոսի Աւետարանի եւ մշակոյթի միջեւ 50
ԾԹ. Մշակոյթի տարբեր տեսանկիւնների ներդաշնակեցումը 51

ԲԱԺԻՆ Գ. ՄՇԱԿՈՅԹԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՒԵԼ ԱՆՅԱՊԱՂ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կ. Իւրաքանչիւր անձի մշակութային իրաւունքի ճանաչումը եւ այդ իրաւունքի կիրառումը 52
ԿԱ. Մարդու դաստիարակումը ամբողջական մշակոյթի 53
ԿԲ. Մարդկային մշակոյթի եւ քրիստոնէական վարդապետութեան միջեւ համաձայնութիւնը 53

ԳԼՈՒԽ Գ. ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԿԳ. Տնտեսական կեանքը եւ ժամանակակից մի քանի յատկանշական երեւոյթներ 55

ԲԱԺԻՆ Ա. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԿԴ. Տնտեսական զարգացումը պէտք է ծառայի մարդուն 56
ԿԵ. Տնտեսական զարգացումը պէտք է մարդու յսկողութեան ներքոյ լինի 57
ԿԶ. Տնտեսական-հասարակական վիթխարի անհաւասարութիւններ, որոնք հարկաւոր է վերացնել 57

ԲԱԺԻՆ Բ. ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔ

ԿԷ. *Աշխատանք, աշխատանքի պայմաններ եւ ազատ ժամանակ* 58
ԿԸ. *Ձեռնարկութեան եւ տնտեսական ընդհանուր ուղղուածութեան մէջ մասնակցութիւնը. աշխատանքային ընդհարումներ* 59
ԿԹ. *Երկրի բարիքները եւ նրանց սահմանումը բոլոր մարդկանց* 60
Հ. *Ներդրումներ եւ դրամ* 62
ՀԱ. *Սեփականութեան ձեռքբերումը եւ բարիքների առանձնական տիրապետումը. երկրագործական կալուածքների խնդիրները* 62
ՀԲ. *Տնտեսական-հասարակական գործունէութիւնը եւ Քրիստոսի Արքայութիւնը* 63

ԳԼՈՒԽ Դ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԸ

ՀԳ. *Ժամանակակից հանրային կեանքը* 64
ՀԴ. *Քաղաքական հասարակութեան էութիւնն ու նպատակը* 65
ՀԵ. *Բոլորի համագործակցութիւնը հանրային կեանքին* 66
ՀԶ. *Քաղաքական հասարակութիւնը եւ Եկեղեցին* 68

ԳԼՈՒԽ Ե. ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

ՀԷ. *Նախաբան* 69
ՀԸ. *Խաղաղութեան բնոյթը* 69

ԲԱԺԻՆ Ա. ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

ՀԹ. *Պատերազմի անմարդկային դաժանութիւնը մեղմելու պարտականութիւնը* 70
Ձ. *Ամբողջական պատերազմը* 71
ՁԱ. *Զինուելու մրցավազքը* 72
ՁԲ. *Պատերազմի բացարձակ դատապարտումը եւ միջազգային շարժումը՝ նրանից խուսափելու համար* 73

ԲԱԺԻՆ Բ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ

ՁԳ. *Տարաձայնութիւնների պատճառները եւ դրանց լուծումները* 74
ՁԴ. *Ազգերի հասարակութիւնը եւ միջազգային հաստատութիւնները* 75
ՁԵ. *Միջազգային համագործակցութիւնը տնտեսական հարթութեան վրայ* 75
ՁԶ. *Որոշ պատշաճ կանոններ* 76
ՁԷ. *Միջազգային համագործակցութիւնը ժողովրդագրական աճին վերաբերուող հարցերում* 77
ՁԸ. *Քրիստոնեաների պարտականութիւններն ուրիշ երկրներին հասցուելիք օգնութեան գործում* 78
ՁԹ. *Եկեղեցու արդիւնաւէտ ներկայութիւնը միջազգային հասարակութիւնում* 78
Ղ. *Քրիստոնեաների մասնակցութիւնը միջազգային հաստատութիւններին* 79

ՎԵՐՋԱԲԱՆ

ՂԱ. *Անհատ հաւատացեալների եւ տեղական Եկեղեցիների պարտականութիւնները* 80
ՂԲ. *Երկխօսութիւնը բոլոր մարդկանց միջեւ* 80
ՂԳ. *Աշխարհ, որն հարկաւոր է կառուցել եւ հասցնել իր կատարումին* 81

© «Ընդհանրական» Հրատարակչություն

ՊՕՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՍՏՇՈՅ ՇԱՌԱՆԵՐԻ ՇԱՌԱՅ
ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՐԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ
Ի ՅՈՒՇ ՅԱՒԵՐԺԱԿԱՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՊՐՈՂ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ[1]

Ա. *Եկեղեցու սերտ միութիւնը մարդկային ամբողջ զարմի հետ*

Ուրախութիւններն ու յոյսերը, վշտերն ու տագնապներն այսօրուայ մարդկանց – յատկապէս աղքատներինը եւ բոլոր նրանց՝ ովքեր տառապում են – ուրախութիւններն ու յոյսերը, վշտերն ու տագնապներն են նաեւ Քրիստոսի աշակերտների, եւ չկայ հարազատօրէն մարդկային մի բան, որ արձագանք չգտնի նրանց սրտում: Նրանց հասարակութիւնն, իրօք, կազմուած է մարդկանցից, որոնք ի Քրիստոս միմեանց միացած՝ Սուրբ Հոգու կողմից առաջնորդւում են դէպի Հօր Արքայութիւնն ուղղուած իրենց ուխտագնացութեան մէջ, եւ ստացել են փրկութեան մի պատգամ, որը պէտք է առաջադրեն բոլորին: Ուստի, քրիստոնեաների հասարակութիւնն իրեն զգում է մարդկութեան եւ նրա պատմութեան հետ իսկապէս եւ սերտօրէն համերաշխ:

Բ. *Ում է դիմում Ժողովը*

Այս իսկ պատճառով, Վատիկանեան Բ. Ժողովը, Եկեղեցու խորհրդի մէջ աւելի խորը ներթափանցած լինելով, արդ առանց երկմտանքի անցնում է իր խօսքն ուղղելու ո՛չ միայն

---

[1] *«Եկեղեցին ժամանակակից աշխարհում» Հովուական Սահմանադրութիւնը բաղկացած է երկու մասից, բայց մի միասնական ամբողջութիւն է: Կոչւում է «Հովուական», ճիշտ որովհետեւ վարդապետական սկզբունքների հիմքի վրայ մտադիր է ներկայացնել Եկեղեցու դիրքորոշումն այսօրուայ աշխարհի եւ մարդկանց նկատմամբ: Ուստի, ո՛չ առաջին մասին պակասում է հովուական դիտաւորութիւնը, ո՛չ էլ երկրորդին՝ վարդապետականը: Առաջին մասում Եկեղեցին ներկայացնում է իր վարդապետութիւնը մարդու վերաբերեալ, աշխարհի՝ ուր մարդն ապրում է, եւ յարաբերութիւնների՝ որ ունի այս իրականութիւնների հետ: Երկրորդ մասում առաւել սերտօրէն քննարկւում են ժամանակակից կեանքի եւ մարդկային հասարակութեան տարբեր երեւոյթներ, յատկապէս հարցերն ու խնդիրները, որոնք այս բանակարգում այսօր առաւել հրատապ են թւում: Այս իսկ պատճառով, այս երկրորդ մասում, վարդապետական սկզբունքների լոյսի ներքոյ քննարկուած նիւթերն ամբողջովին կազմուած չեն անփոփոխ տարրերից, այլ պարունակում են նաեւ պարագայական տարրեր: Ուստի, Սահմանադրութիւնը պէտք է մեկնաբանուի աստուածաբանական մեկնութեան ընդհանուր կանոնների համաձայն, սակայն հաշուի առնելով նաեւ, յատկապէս երկրորդ մասում, փոփոխական պարագաները, որոնց սերտօրէն կապակցուած են քննարկուած նիւթերը:*

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

Եկեղեցու զաւակներին, ո՛չ էլ միայն նրանց՝ ովքեր դաւանում են Քրիստոսի Անունը, այլ բոլոր մարդկանց առանց զանազանութեան, կամենալով նրանց բացատրել՝ թէ ինչպէս է հասկանում Եկեղեցու ներկայութիւնն ու գործունէութիւնը ժամանակակից աշխարհում:

Աշխարհը, որը Ժողովն ի նկատի ունի, հետեւաբար մարդկանց աշխարհն է, այսինքն՝ մարդկային ամբողջ ընտանիքը, այն բոլոր իրականութիւնների բանակարգում, որոնցից ներս այն ապրում է. աշխարհը, որը մարդկային զարմի պատմութեան բեմահարթակն է եւ կրում է նրա ջանքերի, նրա պարտութիւնների ու նրա յաղթանակների նշանները. աշխարհը, որի վերաբերեալ քրիստոնեաները հաւատում են, որ ստեղծուել է եւ գոյութեան մէջ պահպանւում է Արարչի սիրոյ կողմից. աշխարհը, որն ընկել է, անշուշտ, մեղքի ստրկութեան մէջ, բայց խաչուած եւ յարութիւն առած Քրիստոսի կողմից, սատանային պարտութեան մատնելով, ազատուել է եւ, աստուածային դիտաւորութեան համաձայն, սահմանուել է կերպարանափոխուելու եւ հասնելու իր կատարումին:

Գ. Ծառայելով մարդուն

Մեր օրերում, իր գիւտերի ու իր զօրութեան նկատմամբ զգացած հիացումից ցնցուած մարդկութիւնը յաճախ սակայն յառաջ է քաշում տագնապալի հարցադրումներ աշխարհի ներկայ յեղաշրջման, տիեզերքի մէջ մարդու ունեցած տեղի ու պաշտօնի, իր անհատական ու հաւաքական ճիգերի իմաստի, ինչպէս նաեւ՝ գոյութիւն ունեցող ամէն ինչի եւ մարդկանց վերջին նպատակակէտի վերաբերեալ:

Այս իսկ պատճառով, Ժողովը, վկայելով եւ ներկայացնելով Քրիստոսի կողմից ի մի հաւաքուած Աստծոյ ամբողջ Ժողովրդի հաւատքը, մարդկային ամբողջ ընտանիքի նկատմամբ – որի ներսում է ինքը ներփակուած – համերաշխութեան, յարգանքի ու սիրոյ առաւել պերճախօս վկայութիւն չի կարող տալ, քան վերոնշեալ զանազան խնդիրների շուրջ նրա հետ երկխօսութիւն հաստատելով, բերելով Աւետարանից բխող լոյսը եւ մարդկանց տրամադրութեան ներքոյ դնելով փրկութեան զօրութիւնը, որն Եկեղեցին, Սուրբ Հոգու առաջնորդութեամբ, ստանում է իր Հիմնադրից: Խօսքը վերաբերւում է մարդկային անձը փրկելուն, խօսքը վերաբերւում է մարդկային հասարակութիւնը կերտելուն: Մարդն է, հետեւաբար – բայց ամբողջական մարդը, մարմնի եւ հոգու, սրտի ու խղճի, մտքի ու կամքի միասնականութեամբ – որ լինելու է մեր ամբողջ քննարկման առանցքը:

Ուստի, Սուրբ Ժողովը, հռչակելով մարդկային կոչումի բացարձակ մեծութիւնը եւ նրանում աստուածային ծիլի ներկայութիւնը, մարդկութեանն ընծայում է Եկեղեցու անկեղծ համագործակցութիւնը, որպէս նպատակ ունենալով հաստատել այն տիեզերական եղբայրութիւնը, որը կը համապատասխանի այդ կոչմանը:

Եկեղեցին մղուած չէ երկրային որեւէ յաւակնոտութիւնից: Եկեղեցին սրա՛ն է միայն ձգտում. Մխիթարիչ Հոգու առաջնորդութեամբ շարունակել Քրիստոսի իսկ գործը, որն աշխարհ եկաւ վկայելու համար ճշմարտութեանը, փրկելու եւ ո՛չ թէ դատապարտելու, ծառայելու եւ ո՛չ թէ ծառայութիւն ընդունելու[1]:

[1] Հմմտ. Յվհ 3, 17; 18, 37; Մտթ 20, 28; Մրկ 10, 45.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

Ներածական ծանուցում

ՄԱՐԴՈՒ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Դ. Յոյսեր եւ տագնապներ

Այս պաշտօնը կատարելու համար, Եկեղեցու մնայուն պարտականութիւնն է քննել ժամանակների նշանները եւ դրանք մեկնաբանել Աւետարանի լոյսի ներքոյ, այնպէս՝ որ, իւրաքանչիւր սերնդին պատշաճ եղանակով, կարողանայ պատասխանել մարդկանց յարատեւ հարցումներին, որոնք վերաբերւում են ներկայ ու ապագայ կեանքի իմաստին եւ մարդկանց փոխադարձ յարաբերութիւններին: Յիրաւի, հարկաւոր է ճանաչել եւ ըմբռնել աշխարհը, որի ներսում ապրում ենք, ինչպէս նաեւ նրա սպասումները, իղձերն ու յաճախ եղերական նկարագիրը:

Ահա թէ ինչպէս կարելի է ուրուագծել ժամանակակից աշխարհը բնութագրող ամենացայտուն գծերը:

Մարդկութիւնն այսօր մի նոր շրջան է ապրում իր պատմութեան մէջ, որը բնորոշւում է խոր եւ արագընթաց փոփոխութիւններով, որոնք աստիճանաբար տարածւում են ամբողջ աշխարհով մէկ: Մարդու իմացականութիւնից եւ ստեղծարար գործունէութիւնից դրդռուած, նոյն ինքն մարդու վրայ էլ հետադարձ ազդեցութիւն են ունենում, նրա դատողութիւնների եւ նրա անհատական ու հաւաքական ցանկութիւնների, լինի առարկաների՝ թէ մարդկանց նկատմամբ ունեցած նրա մտածելակերպի ու գործելակերպի վրայ: Այսպիսով, կարող ենք խօսել հասարակական եւ մշակութային իրական կերպարանափոխութեան մասին, որն իր արտացոլումն է ունենում նաեւ կրօնական կեանքում:

Եւ ինչպէս տեղի է ունենում աճման ընթացքում գրանցուող իւրաքանչիւր ճգնաժամում, այս կերպարանափոխութիւնն իր հետ բերում է ոչ թեթեւ դժուարութիւններ: Այսպէս, մինչ մարդն այսքան ընդարձակ կերպով տարածում է իր զօրութիւնը, միշտ չէ՝ որ կարողանում է այդ զօրութիւնը ծառայեցնել իր շահերին: Ջանում է ներթափանցել իր էութեան ամենախորքերը, բայց յաճախ ինքն իր նկատմամբ առաւել անորոշ է թւում: Կամաց կամաց առաւել յստակօրէն բացայայտում է հասարակական կեանքի օրէնքները, բայց յետոյ կասկածամիտ է մնում՝ թէ այդ հասարակական կեանքին ի՛նչ ուղղութիւն պէտք է հաղորդի:

Մարդկութիւնը երբեք իր տրամադրութեան ներքոյ չի ունեցել այսքան հարստութիւններ, հնարաւորութիւններ եւ տնտեսական կարողութիւն, որքան ունի այսօր, բայց այսուամենայնիւ՝ մարդկանց մի մեծ մասը տակաւին տառապում է քաղցից ու թշուառութիւնից, եւ ամբողջական զանգուածներ դեռ ամբողջովին անգրագէտ են: Մարդիկ երբեք այսքան ուժգին չեն զգացել ազատութիւնը, որքան այսօր, եւ սակայն այսօր յայտնւում են հասարակական եւ հոգեբանական ստրկութեան նոր ձեւեր: Եւ մինչ աշխարհն այսքան յստակ կերպով զգում է իր միասնականութիւնը եւ անհատների միմեանցից փոխկախուածութիւնը անհրաժեշտ համերաշխութեան մէջ, միմեանց ընդդիմադիր ուժերի պատճառով բռնի կերպով քշւում է տարբեր ուղղութիւններով: Յիրաւի, տակաւին ներկայ են քաղաքական, հասարակական, տնտեսական, ցեղային եւ գաղափարախօսական ծանր հակառակութիւններ, ո՛չ էլ վերացել է ամբողջական պատերազմի վտանգը, որն ի վիճակի է ամէն ինչ ոչնչացնելու: Աճում է գաղափարների փոխանակութիւնը, բայց խօսքերն ինքնին, որոնցով արտայայտւում են ամենակարեւոր իմացքները, տարբեր գաղափարախօսութիւնների մօտ ստանում են բաւականին տարբեր իմաստներ: Ի վերջոյ, մարդիկ ամէն ջանք գործադրելով կամենում են կերտել երկրային մի առաւել կատարեալ կարգ, առանց որ դրան համընթաց քայլի հոգեւոր զարգացումը:

Այսպիսի հակադիր պայմանների մէջ ընկղմուած, մեր ժամանակակիցներից շատերն ի վիճակի չեն իսկապէս ճանաչելու յարատեւ արժէքները եւ դրանք հարկ եղածի պէս ներդաշնակեցնելու այն միւս արժէքներ հետ, որոնք կամաց կամաց բացայայտում են:

Այս պատճառով է, որ զգում են խռովքի ծանրութիւնը, յոյսի ու տագնապի միջեւ չարչրկուելով, մինչ հարցադրումներ են կատարում աշխարհի ներկայ ընթացքի վերաբերեալ: Ինչը որ մարտահրաւէր է ուղղում մարդուն, մանաւանդ թէ՝ նրան հարկադրում է պատասխան գտնելու:

Ե. Խորին փոփոխութիւններ

Հոգիների ներկայ խռովքը եւ կեանքի պայմանների փոխակերպումը կապակցւում են մի առաւել արմատական փոփոխութեան հետ, որն իմացական գետնի վրայ աճող կշիռ է տալիս թուաբանական, ֆիզիկական եւ մարդկային գիտութիւններին, մինչ գործնական գետնի վրայ ապաւինում է այդ գիտութիւններից ծնունդ առած գործիքաշինութեանը:

Այս գիտական մտայնութիւնը անցեալ ժամանակներից տարբեր կերպով է կաղապարում մշակոյթն ու մտածելակերպը: Գործիքաշինութիւնն, ապա, այնքան է յառաջադիմել, որ ձեւափոխում է երկրի երեսը եւ այլեւս հետամուտ է նուաճելու անդրերկրային տարածքը:

Մարդկային բանականութիւնն իր տիրապետութիւնը որոշակի իմաստով տարածում է նաեւ ժամանակի վրայ. անցեալի վրայ՝ պատմական հետազօտութեան միջոցով, ապագայի վրայ՝ հեռանկարի ու ծրագրաւորման ջանքով:

Կենսաբանական, հոգեբանական եւ հասարակական գիտութիւնների զարգացումը մարդուն տալիս է ո՛չ միայն լաւագոյն ինքնաճանաչումի հնարաւորութիւն, այլ նաեւ ի վիճակի է դարձնում նրան ուղղակիօրէն ազդելու հասարակական կեանքի վրայ, պատշաճ մեթոդների գործածութեան միջոցով:

Նմանապէս, մարդկութիւնը միշտ աւելի է մտահոգւում կանխատեսելու եւ հսկելու համար ժողովրդագրական սեփական աճը:

Այս ամէնը ծնում է պատմութեան մի այնպիսի արագացում, որ անհատ մարդիկ դժուարութեամբ են կարողանում հետեւել նրան: Միասնական է դառնում մարդկային հասարակութեան ճակատագիրը, առանց այլեւս բազմաթիւ, մէկը միւսից բաժան պատմութիւնների մէջ զանազանուելու:

Այսպիսով, մարդկութիւնը կարգի աւելի կայուն ընկալումից անցնում է աւելի շարժուն եւ յեղաշրջուող ընկալումի: Սա նպաստում է նոր գերխնդիրների մի վիթխարի համալիրի առաջացմանը, որը խթանում է նոր վերլուծումներ ու համադրումներ կատարելու:

Զ. Հասարակական փոփոխութիւններ

Այս ամէնի հետեւանքով, միշտ աւելի խոր փոփոխութիւններ են տեղի ունենում տեղական աւանդական հասարակութիւններում – ինչպիսիք են նահապետական ընտանիքները, տոհմերը, ցեղախմբերը, գիւղերը – , տարբեր խմբերում եւ հասարակական կեանքի յարաբերութիւններում:

Աստիճանաբար տարածւում է արդիւնաբերական հասարակութեան տիպարը, որը որոշակի պետութիւններում նպաստում է տնտեսական հարստութեանը, եւ գրեթէ ամբողջովին կերպարանափոխում է կեանքի դարաւոր ըմբռնումներն ու պայմանները: Նմանապէս աճում է քաղաքային կենսաձեւի նախընտրութիւնն ու փնտռտուքը, որոնց նպաստում է քաղաքների ու նրանց բնակիչների բազմապատկումը, ինչպէս նաեւ՝ գիւղերում նոյնպէս քաղաքային ապրելաձեւի տարածումը:

Հասարակական հաղորդակցութեան նոր եւ լաւագոյն միջոցներն ամենաընդարձակ ու ամենաարագ կերպով նպաստում են իրադարձութիւնների ճանաչմանը եւ գաղափարների ու զգացումների տարածմանը, այդպիսով առաջացնելով նաեւ շղթայական, փոխկապակցուած հակազդեցութիւններ:

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

Եւ չպէտք է թերագնահատել նաեւ փաստը, որ բազմաթիւ մարդիկ, որոնք տարբեր պատճառներով հարկադրուած են գաղթելու, փոխում են իրենց կենսաձեւը:

Այսպիսով, առանց արգելակման բազմապատկւում են մարդու յարաբերութիւններն իր նմանների հետ, մինչ այս «հաղորդակցականութիւնն» իր հերթին ստեղծում է նոր կապեր. միշտ չէ, սակայն, որ նպաստում է նաեւ անձերի համապատասխան հասունացմանը եւ իսկապէս անձնական յարաբերութիւնների հաստատմանը, այսինքն՝ «անձնականացումին»:

Այսօրինակ յեղաշրջումն աւելի բացայայտ կերպով տեսանելի է այն պետութիւններում, որոնք արդէն իսկ վայելում են տնտեսական ու գիտարուեստական յառաջընթացը, բայց շարժման մէջ է դնում նաեւ տակաւին զարգացող այն երկրներին, որոնք փափաքում են իրենց բնակչութեան համար ձեռքբերել արդիւնաբերականացման եւ քաղաքաշինութեան տարածման օգուտները: Այս ժողովուրդները, յատկապէս եթէ կապուած են առաւել հնամենի աւանդութիւններով, միաժամանակ զգում են կարիքը՝ աւելի հասուն եւ աւելի անձնական կերպով կիրարկելու իրենց ազատութիւնը:

Է. Հոգեբանական, բարոյական եւ կրօնական փոփոխութիւններ

Մտայնութիւնների ու կառոյցների փոփոխութիւնը յաճախ հարցականի տակ է դնում աւանդական արժէքները, յատկապէս երիտասարդների մօտ, որոնք, շատ անգամ անհամբեր լինելով, իրենց ներքին վրդովմունքի ու խռովքների պատճառով դառնում են ըմբոստ, եւ հասարակական կեանքում ունեցած իրենց կարեւորութիւնը գիտակցելով, կամենում են հնարաւորինս շուտով ստանձնել իրենց դերը: Այս պատճառով, ծնողներն ու դաստիարակներն իրենց պարտականութիւնների կատարման գործում յաճախ յայտնւում են օրէցօր աւելի ծանրացող դժուարութիւնների դիմաց:

Անցեալից ժառանգուած հաստատութիւնները, օրէնքները, մտածելու եւ զգալու կերպերը միշտ չէ, որ լաւ յարմարւում են ներկայ իրավիճակին. սրանից էլ ծնւում է մի խորին խռովք վարուելակերպի եւ ինքնին կենցաղավարութեան կանոնների մէջ:

Ի վերջոյ, կրօնական կեանքը նոյնպէս յայտնուել է նոր իրավիճակների ազդեցութեան ներքոյ: Մի կողմից, քննադատական մի առաւել նրբամիտ զգացողութիւն այն մաքրագործում է աշխարհի ամէն տեսակի մոգական ըմբռնումներից ու նախապաշարումների մնացորդներից եւ միշտ աւելի պահանջում է առաւել անձնական եւ առաւել ներգործական յարում հաւատքին: Այս իսկ պատճառով, բազմաթիւ են նրանք՝ ովքեր հասնում են Աստծոյ առաւել նրբիմաց զգացողութեան: Միւս կողմից, սակայն, աճող բազմութիւններ գործնական գետնի վրայ հեռանում են կրօնից: Ի տարբերութիւն անցեալ ժամանակների, Աստծոյ կամ կրօնի ժխտումը, կամ գործնական գետնի վրայ նրա հետ կապ չունենալը, այլեւս կղզիացած եւ անհատական եղելութիւն չէ: Մեր ժամանակներում սա ո՛չ հազուադէպ ներկայացւում է որպէս գիտական յառաջընթացի կամ մի նոր տեսակի հումանիզմի պահանջ: Այս բոլորը բազմաթիւ երկրներում չի դրսեւորւում միայն իմաստասիրական մակարդակով, այլ ընդարձակ ճակատով խուժում է գրականութեան, արուեստների, մարդկային գիտութիւնների եւ պատմութեան մեկնաբանութեան ասպարէզից ներս, եւ դե՛ռ աւելի՝ մինչեւ իսկ քաղաքացիական օրէնքների մէջ. այնպէս՝ որ այս պատճառով շատերն են ապակողմնորոշուած մնում:

Ը. Անհաւասարակշռութիւններ ժամանակակից աշխարհում

Այսքան արագընթաց յեղաշրջումը, որն յաճախ անկանոն կերպով է իրականացւում, եւ աշխարհում գոյութիւն ունեցող տարբերութիւնների առաւել խոր գիտակցութիւնն ինքնին, ծնում են հակասութիւններ ու անհաւասարակշռութիւններ, կամ աւելացնում են դրանք:

Նախեւառաջ անձնական մակարդակում շատ յաճախ նկատւում է անհաւասարակշռութիւնը արդի գործնական հասկացողութեան եւ տեսական մտածելակերպի միջեւ. անձը չի կարողանում տիրապետել, ո՛չ էլ գոհացուցիչ համադրութեամբ կանոնաւորել իր գիտելիքների ամբողջութիւնը: Անհաւասարակշռութիւն է ծնւում նաեւ գործնական

արդիւնաւորութեան հետ կապուած մտահոգութեան եւ բարոյական խղճի պահանջների միջեւ, ինչպէս նաեւ շատ յաճախ՝ հաւաքական կեանքի պայմանների եւ անձնական կերպով մտածելու կարողութեան պահանջների, եւ ինքնին հայեցողութեան միջեւ: Այստեղից բխում է անհաւասարակշռութիւնը մարդկային գործունէութեան մասնագիտականացումների եւ կեանքի համընդհանուր տեսութեան միջեւ:

Ընտանիքում, ապա, լարուածութիւնները ծնւում են լինի ժողովրդագրական, տնտեսական եւ հասարակական պայմանների ծանրութեան, լինի իրար յաջորդող սերունդների միջեւ ծագող բախումների, լինի տղամարդու եւ կնոջ միջեւ հասարակական նոր ձեւի յարաբերութիւնների պատճառով:

Մեծ հակադրութիւններ են առաջանում նաեւ ժողովուրդների եւ հասարակութեան տարբեր խմբերի միջեւ. հարուստ եւ նուազ օժտուած ու աղքատ պետութիւնների միջեւ. ի վերջոյ, ժողովուրդների խաղաղութեան բաղձանքից ծնուած միջազգային հաստատութիւնների եւ սեփական գաղափարախօսութիւնը, ինչպէս նաեւ պետութիւններում կամ ա՛յլ կառոյցներում գոյութիւն ունեցող հաւաքական եսապաշտութիւնները պարտադրելու յաւակնութեան միջեւ:

Այստեղից յառաջ են գալիս անվստահութիւններ ու թշնամանքներ, ընդհարումներ ու ոխակալութիւններ, որոնց՝ մարդը միաժամանակ պատճառ է եւ զոհ:

Թ. Մարդկութեան միշտ աւելի համատարած ձգտումները

Մինչ այդ աճում է համոզումը, որ մարդկութիւնը ո՛չ միայն կարող է եւ պէտք է միշտ աւելի զօրացնի արարչութեան նկատմամբ իր տիրապետութիւնը, այլ նաեւ՝ պարտականութիւնն ունի հաստատելու քաղաքական, հասարակական եւ տնտեսական մի կարգ, որը միշտ աւելի եւ լաւագոյնս ծառայի մարդուն, եւ անհատներին ու խմբերին օգնի հաստատելու եւ զարգացնելու սեփական արժանապատուութիւնը:

Որտեղից էլ ծնունդ են առնում շատերի խիստ պահանջարկումները, որոնք յստակ գիտակցութիւն ձեռքբերելով հաստատում են, որ այդ բարիքներից զրկուել են անարդարութեամբ կամ նուազ անկողմնակալ բաշխման պատճառով: Զարգացող կամ նորանկախ Պետութիւնները կամենում են մասնակցել արդի քաղաքակրթութեան ընձեռած հնարաւորութիւններին, ո՛չ միայն քաղաքական, այլ նաեւ տնտեսական դաշտում, եւ ազատօրէն կատարել իրենց դերն աշխարհում. ամէն օր, սակայն, աճում է նրանց հեռաւորութիւնը եւ յաճախ նաեւ տնտեսական կախուածութիւնը ուրիշ՝ աւելի հարուստ երկրներից, որոնք աւելի արագ են առաջադիմում: Քաղցի ճիրաններում տառապող ժողովուրդները դատաստանի են կանչում աւելի հարուստ ժողովուրդներին: Կանայք պահանջում են, այնտեղ՝ ուր այն տակաւին չեն ստացել, տղամարդկանց հետ հաւասարութիւնը ո՛չ միայն իրաւական, այլ նաեւ գործնական հարթութիւններում: Բանուորներն ու գիւղացիները չեն կամենում շահել միայն ապրուստի համար անհրաժեշտը, այլ՝ աշխատանքի միջոցով կամենում են զարգացնել իրենց անձնականութիւնը եւ իրենց մասն ունենալ տնտեսական, հասարակական, քաղաքական եւ մշակութային կեանքի կազմակերպման գործում: Մարդկութեան պատմութեան մէջ առաջին անգամ լինելով, ժողովուրդներն այսօր համոզուած են, որ քաղաքակրթութեան ընձեռած հնարաւորութիւններն իսկապէս կարող են եւ պէտք է որ հասանելի լինեն բոլորին:

Այս բոլոր պահանջների տակ ծածկուած է մի աւելի խոր ու համընդհանուր բաղձանք: Անհատներն, իրօք, եւ կազմակերպուած խմբերը ձգտում են մի ամբողջական եւ ազատ կեանքի, մարդուն արժանի, որը սեփական ծառայութեան տակ դնի այն ամէնն՝ ինչ աշխարհն այսօր իրենց ընծայում է այսքա՜ն առատ կերպով: Պետութիւնները նոյնպէս միշտ աւելի են ջանք գործադրում հասնելու մի որոշակի համաշխարհային հասարակութեան ձեւաւորմանը:

Իրավիճակն այսպիսին լինելով, աշխարհն այսօր ներկայանում է միաժամանակ հզօր եւ տկար, ընդունակ գործելու լաւագոյնը եւ վատթարը, մինչ իր առջեւ բացւում է ճանապարհն ազատութեան կամ ստրկութեան, յառաջադիմութեան կամ յետադիմութեան, եղբայրութեան կամ ատելութեան: Ինչպէս նաեւ, մարդը գիտակցում է, որ իրենից է կախուած ճիշտ

կողմնորոշել ուժերը, որոնք հէնց ինքն է արթնացրել, եւ որոնք կարող են ճզմել իրեն կամ ծառայել:

Ուստի, իր առջեւ դնում է հարցականներ:

Ժ. Մարդու ամենախորին հարցադրումները

Իրականում, անհաւասարակշռութիւնները՝ որոնցով տառապում է ժամանակակից աշխարհը, կապակցւում են այն աւելի խոր անհաւասարակշռութեանը, որն արմատացած է մարդու սրտում: Հէնց մարդու ներաշխարհում է, որ բազմաթիւ տարբեր փոխադարձ ընդդիմութեան մէջ են: Մի կողմից, իրօք, որպէս արարած, հազար կերպով փորձառութիւնն է ունենում իր սահմանների. միւս կողմից նկատում է, որ անսահմանափակ է իր ձգտումներում եւ կոչուած է մի բարձրակարգ կեանքի: Բազմաթիւ հրապոյրների կողմից առինքնուած, միշտ հարկադրուած է ընտրելու դրանցից մէկը եւ հրաժարուելու միւսներից: Ինչպէս նաեւ, տկար եւ մեղաւոր լինելով, հազուադէպ չէ, որ անում է այն՝ ինչ չէր կամենայ, եւ չի անում այն՝ ինչ կը կամենար[1]: Ինչի հետեւանքում էլ ինքն իր ներսում տառապելով կրում է մի բաժանում, որից են սերում նաեւ բազմաթիւ եւ այսքա՜ն ծանր երկպառակութիւնները հասարակութեան ներսում: Անշուշտ, ովքեր ապրում են գործնական նիւթապաշտութեան գաղափարներով, հեռու են այս եղերական վիճակի շուրջ յստակ ընկալում ունենալուց, եւ չքաւորութեան մէջ ընկճուածները նոյնպէս հնարաւորութիւնը չունեն սրա շուրջ խորհրդածելու: Բազմաթիւ անձինք կարծում են՝ թէ կարող են խաղաղութիւն գտնել աշխարհի շուրջ տրուող զանազան մեկնաբանութիւններով, որոնք առաջարկւում են իրենց: Ոմանք, ապա, սոսկ մարդկային ջանքերից են ակնկալում մարդկութեան իրական եւ ամբողջական ազատագրումը, եւ համոզուած են՝ թէ երկրի վրայ մարդու ապագայ թագաւորութիւնը յաղեցնելու է իրենց սրտերի բոլոր իղձերը: Կան նաեւ ոմանք, ովքեր կեանքին նպատակ տալուց յուսահատ, գովաբանում են խիզախութիւնը նրանց՝ ովքեր մարդկային գոյութիւնը սեփական որեւէ իմաստից զուրկ համարելով, ջանում են նրան ամբողջական մեկնաբանութիւն տալ լոկ իրենց հանճարով:

Այս ամէնի հետ մէկտեղ, աշխարհի ներկայ յեղաշրջման դիմաց, միշտ աւելի բազմաթիւ են դառնում նրանք՝ ովքեր իրենց առջեւ դնում են, կամ նոր կորովամտութեամբ զգում են հիմնական հարցականները. «Ո՞վ է մարդը», «Ո՞րն է ցաւի, չարի, մահուան նշանակութիւնը, որոնք շարունակում են գոյութիւն ունենալ հակառակ բոլոր տեսակի զարգացումների», «Ի՞նչ արժէք ունեն այս ձեռքբերումները, որոնց մարդկութիւնը հասել է այսքա՜ն թանկ գնով», «Անհատն ի՞նչ նպաստ է բերում հասարակութեանը եւ ի՞նչ կարող է ակնկալել նրանից», «Ի՞նչ է մարդուն սպասւում այս կեանքից յետոյ»:

Ահա, Եկեղեցին հաւատում է՝ որ Քրիստոս, բոլորի համար մեռած եւ յարութիւն առած[2], միշտ տալիս է մարդուն, Իր Հոգու միջոցով, լոյս եւ ուժ, որպէսզի մարդը կարողանայ պատասխանել իր գերագոյն կոչմանը. եւ երկրի վրայ մարդկանց ուրիշ Անուն տրուած չէ, որով կարող են փրկուել[3]: Նմանապէս հաւատում է, որ յանձինս իր Տիրոջ եւ Վարդապետի գտնում է մարդկութեան ամբողջ պատմութեան բանալին, կենտրոնն ու նպատակակէտը: Ինչպէս նաեւ, Եկեղեցին հաստատում է՝ որ փոփոխական ամէն ինչից անդին կան իրականութիւններ, որոնք անփոփոխ են. դրանք իրենց վերջին հիմնաւորումը գտնում են Քրիստոսի մէջ, որ միշտ միեւնոյնն է. երէկ, այսօր եւ յաւիտեան[4]: Այսպիսով, Քրիստոսի լոյսի մէջ – Քրիստոսի, որ անտեսանելի Աստծոյ Պատկերն է, Առաջնեկը բոլոր արարածների[5] – Ժողովը մտադիր է դիմելու բոլորին, լուսաբանելու համար մարդու խորհուրդը եւ գործակցելու համար մեր ժամանակուայ գլխաւոր խնդիրներին լուծում գտնելու ջանքին:

---

[1] Հմմտ. Հռմ 7, 14...

[2] Հմմտ. 2Կր 5, 15.

[3] Հմմտ. Գրծ 4, 12.

[4] Հմմտ. Եբր 13, 8.

[5] Հմմտ. Կղս 1, 15.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԿՈՉՈՒՄԸ

ԺԱ. *Պատասխանել Հոգու ազդակներին*

Աստծոյ Ժողովուրդը, մղուած հաւատքից, որով հաւատում է՝ որ առաջնորդւում է Տիրոջ Հոգու կողմից, որով լի է տիեզերքը, իրադարձութիւնների, խնդրարկումների ու ձգտումների մէջ, որոնց մասնակցում է մեր ժամանակուայ միւս մարդկանց հետ միասին, ջանում է կշռադատել՝ թէ որոնք են Աստծոյ ներկայութեան կամ ծրագրի ճշմարիտ նշանները: Հաւատքն, իրօք, ամէն ինչ լուսաւորում է մի նոր լոյսով, եւ բացայայտում է մարդու ամբողջական կոչման վերաբերեալ Աստծոյ դիտումները, եւ հետեւաբար՝ իմացականութիւնն առաջնորդում է դէպի լիովին մարդկային լուծումներ:

Այս լոյսի մէջ, Ժողովը նախեւառաջ մտադիր է կարծիք արտայայտել այն արժէքների վերաբերեալ, որոնք այսօր առաւել յարգուած են, եւ դրանք վերադարձնել իրենց աստուածային ակունքին: Այդ արժէքներն, իրօք, քանի որ սերում են մարդկային հանճարից, որը մարդուն տրուել է Աստծոյ կողմից, ինքնըստինքեան շատ լաւ են ու բարի, բայց մարդկային սրտի ապականութեան պատճառով ո՛չ հազուադէպ խեղաթիւրւում են իրենց պատշաճ կարգից, ուստի՝ մաքրագործուելու կարիքն ունեն:

Ի՞նչ է մտածում Եկեղեցին մարդու մասին (Գլուխ Ա.): Իր կարծիքով ինչպիսի՞ կողմնորոշումներ պէտք է առաջարկուեն արդի հասարակութեան կերտման համար (Գլուխ Բ.): Ո՞րն է տիեզերքում մարդկային գործունէութեան վերջին նշանակութիւնը (Գլուխ Գ.): Այս հարցերը պատասխան են պահանջում: Յաջորդաբար, է՛լ աւելի յստակ կերպով կ՚երեւայ, որ Աստծոյ ժողովուրդը եւ մարդկութիւնը, որի ներսում է այն հաստատուած, փոխադարձ ծառայութիւն են մատուցում միմեանց, այնպէս՝ որ Եկեղեցու առաքելութիւնը երեւում է որպէս կրօնական, եւ այդ իսկ պատճառով՝ խորապէս մարդկային բնոյթ ունեցող (Գլուխ Դ.):

ԳԼՈՒԽ Ա.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

ԺԲ. *Մարդն Աստծոյ պատկերով*

Հաւատացեալներն ու ո՛չ հաւատացեալներն ընդհանուր առմամբ համաձայն են այն հարցում, որ երկրի վրայ գոյութիւն ունեցող ամէն բան պէտք է կապակցութեան մէջ դրուի մարդու հետ, որպէս իրենց կենտրոնի ու գագաթնակէտի:

Բայց ի՞նչ է մարդը: Բազմաթիւ կարծիքներ է նա արտայայտել եւ շարունակում է արտայայտել ինքն իր վերաբերեալ, տարբեր եւ նաեւ հակասական կարծիքներ, որոնց համաձայն՝ կա՛մ ինքն իրեն այնքան է պանծացնում, որ ինքն իր համար դառնում է բացարձակ կանոն, կա՛մ էլ ցածրանում է մինչեւ յուսահատութեան աստիճան, այդպիսով ընկնելով կասկածի ու տագնապալի անձկութեան մէջ: Եկեղեցին խոր կերպով զգում է այդ դժուարութիւնները եւ դրանց կարող է տալ մի պատասխան, որն իրեն գալիս է աստուածային Յայտնութեան ուսուցումից, պատասխան՝ որ նկարագրում է մարդու ճշմարիտ իրավիճակը, ներկայացնում է նրա թշուառութիւնների պատճառը, բայց որի մէջ միաժամանակ հնարաւոր է արդարացիօրէն ճանաչել նրա արժանապատուութիւնն ու կոչումը:

Աստուածաշունչն, իրօք, ուսուցանում է, որ մարդը ստեղծուել է «Աստծոյ պատկերով», ընդունակ՝ ճանաչելու եւ սիրելու իր Արարչին, եւ որ Նրա կողմից կարգուել է երկրային

բոլոր արարածների վրայ որպէս նրանց տիրակալ[1], նրանց վրայ իշխելու եւ նրանց գործածելու համար ի փառս Աստծոյ[2]: «Ի՞նչ է մարդը, որ Դու յիշում ես նրան, կամ մարդու որդին, որի նկատմամբ հոգատար ես: Նրան Քո Հրեշտակներից մի քիչ խոնարհ ստեղծեցիր, փառքով ու պատուով պսակեցիր, եւ նրան Քո բոլոր ձեռակերտների վրայ կարգեցիր: Ամէն բան ենթարկեցիր նրա ոտքերի ներքոյ» (Սղմ 8, 5-8):

Բայց Աստուած մարդուն չստեղծեց նրան միայնակ թողնելով. սկզբից եւեթ «նրանց այր եւ կին ստեղծեց» (Ծնդ 1, 27) եւ նրանց միութիւնը կազմում է անձերի միջեւ հաղորդութեան առաջին կերպը: Մարդն, իրօք, իր բնութեամբ իսկ խորապէս հաղորդակցական էակ է եւ առանց ուրիշների հետ յարաբերութիւններ հաստատելու չի կարող ապրել, ո՛չ էլ դրսեւորել իր ձիրքերը:

Ուստի Աստուած, կրկին ինչպէս ընթերցում ենք Աստուածաշնչում, տեսաւ «այն ամէնը, որ ստեղծել էր, եւ ահա յոյժ բարի էին» (Ծնդ 1, 31):

ԺԳ. Մեղքը

Աստծոյ կողմից արդարութեան վիճակում հաստատուած լինելով, մարդը, սակայն, Չարի կողմից փորձութեան ենթարկուելով, պատմութեան սկզբից եւեթ չարաշահեց իր ազատութիւնը, Աստծոյ դէմ խոյանալով եւ ցանկանալով իր գոյութեան նպատակակէտին հասնել Աստծուց դուրս: Աստծուն ճանաչած լինելով հանդերձ, մարդիկ «Նրան պատշաճ մեծարանք չմատուցեցին ... , այլ անմտութեամբ մթագնեցին նրանց սրտերը ... »[3], եւ Արարչի փոխարէն նախընտրեցին արարածին ծառայել: Այն՝ ինչը մեր առջեւ բացայայտում է աստուածային Յայտնութիւնը, համապատասխանում է ինքնին փորձառութեանը: Իրօք, եթէ մարդը հայում է իր սրտի ներսը, տեսնում է՝ որ նաեւ հակուած է դէպի չարը եւ խորասուզուած է բազմաթիւ թշուառութիւնների մէջ, որոնք անշուշտ չեն կարող Արարչից բխել, որը բարի է: Յաճախ, մերժելով ճանաչել Աստծուն որպէս իր սկիզբը, մարդը խզել է իր վերջին վախճանի կապակցութեամբ պատշաճ կարգը, եւ միաժամանակ՝ ամբողջ ներդաշնակութիւնը լինի՛ ինքն իր, լինի՛ ուրիշ մարդկանց եւ արարուած բոլոր էակների նկատմամբ:

Այսպիսով, մարդը գտնւում է ինքն իր մէջ բաժանուած: Այս իսկ պատճառով, մարդկային ամբողջ կեանքը, լինի՛ անհատականը թէ՛ հաւաքականը, ներկայանում է բարու եւ չարի, լոյսի եւ խաւարի միջեւ եղերական պայքարով բնորոշուած: Մանաւանդ թէ, մարդն իրեն տեսնում է անկարող՝ ինքն իր ուժերով արդիւնաւէտ կերպով յաղթահարելու չարի յարձակումները, այնպէս՝ որ իւրաքանչիւր մարդ իրեն կարծես կապանքներով շղթայուած է զգում: Բայց Տէրն Ինքը եկել է ազատելու մարդուն եւ նրան ուժ հաղորդելու, վերանորոգելով նրա ներաշխարհը, եւ դուրս նետելով «այս աշխարհի իշխանին» (Յվհ 12, 31), որը նրան մեղքի ստրկութեան մէջ էր պահում[4]:

Մեղքը, նշենք նաեւ, ինքնին մարդու համար մի նուազեցում է, որ խոչընդոտում է նրան հասնելու սեփական լիութեանը:

Այս Յայտնութեան լոյսի ներքոյ, միասին իրենց վերջին գոյապատճառն են գտնում ե՛ւ վսեմապանծ կոչումը ե՛ւ խորին թշուառութիւնը, որոնց փորձառութիւնն ունեն մարդիկ:

ԺԴ. Մարդու կազմուածքը

Հանդիսանալով որպէս հոգու եւ մարմնի միութիւն, իր մարմնական վիճակի բերումով իսկ մարդն իր մէջ համադրում է նիւթական աշխարհի տարրերը, այնպէս՝ որ դրանք իր

[1] Հմմտ. Ծնդ 1, 26; Իմ 2, 23.
[2] Հմմտ. Սրք 17, 3-10.
[3] Հմմտ. Հռմ 1, 21-25.
[4] Հմմտ. Յվհ 8, 34.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

միջոցով հասնում են իրենց գագաթնակէտին եւ ձայն են ստանում՝ ազատօրէն գովաբանելու համար Արարչին[1]:

Հետեւաբար օրինաւոր չէ արհամարհել մարդու մարմնական կեանքը: Ընդհակառակն, մարդը պարտաւոր է բարի եւ պատուարժան նկատել սեփական մարմինը, ճիշտ որովհետեւ ստեղծուել է Աստծոյ կողմից եւ սահմանուած է վերջին օրն յարութիւն առնելու: Եւ սակայն, մեղքից խոցուած լինելով, մարդը մարմնի ընդվզումների փորձառութիւնն է ունենում: Ուստի ինքնին մարդու արժանապատուութիւնն է պահանջում, որ նա փառաւորի Աստծուն իր մարմնում[2] եւ թոյլ չտայ՝ որ այն դառնայ սրտի այլասերուած հակումների ստրուկը:

Մարդը, սակայն, չի սխալւում, երբ իրեն մարմնական իրողութիւններից գերադաս է նկատում եւ իրեն համարում է աւելին՝ քան բնութեան սոսկ մի մասնիկը կամ մարդկային համախմբման մի անանուն տարրը: Իսկապէս, իր ներաշխարհում նա գերազանցում է տիեզերքին. այդ խորութիւնների մէջ նա վերադառնում է, երբ ուզղւում է դէպի իր սիրտը, այնտեղ՝ ուր նրան սպասում է Աստուած, որ քննում է սրտերը[3], այնտեղ՝ ուր Աստծոյ հայեացքի ներքոյ նա վճռում է իր ճակատագիրը: Ուստի, ճանաչելով՝ որ ունի ոգեղէն եւ անմահ հոգի, չի խաբւում երեւակայական արարման գաղափարներով, որոնք բացատրւում են սոսկ ֆիզիքական եւ հասարակական վիճակներով, այլ ընդհակառակն՝ հասնում է մինչեւ խորքը հպուելու իրողութիւնների ինքնին ճշմարտութեանը:

ԺԵ. Բանականութեան, ճշմարտութեան եւ իմաստութեան արժանապատուութիւնը

Մարդն իրաւացի է, երբ իրեն ամբողջ տիեզերքից գերադաս է նկատում, իր բանականութեան պատճառով, որով մասնակցում է Աստծոյ մտքի լոյսին: Դարերի ընթացքում իր հանճարը կրքոտ խանդավառութեամբ կիրարկելով, նա անկասկած յառաջընթաց է ապրել փորձարարական գիտութիւններում, ճարտարագիտութեան մէջ եւ ազատական ուսումնանիւթերում: Մեր դարաշրջանում, ապա, նկատելի յաջողութիւնների է հասել յատկապէս նիւթական աշխարհի հետազօտման եւ տիրապետման ասպարէզում:

Եւ սակայն, նա միշտ փնտռել եւ գտել է մի աւելի խոր ճշմարտութիւն: Բանականութիւնն, իրօք, չի սահմանափակւում միայն երեւոյթների շրջանակում, այլ կարող է իմացական իրականութեանը հասնել ստոյգ հաւաստիութեամբ, թէեւ, որպէս մեղքի հետեւանք, մասամբ մթագնած է ու տկարացած:

Ի վերջոյ, մարդկային անձի բանական բնութիւնը կարող է եւ պարտաւոր է հասնել կատարելութեանը: Այն, իմաստութեան միջոցով, միտքը քաղցրութեամբ հրապուրում է փնտռելու եւ սիրելու ճշմարիտն ու բարին. մարդը, որ նրանով սնւում է, տեսանելիի միջով առաջնորդւում է դէպի անտեսանելին:

Մեր ժամանակաշրջանը, աւելի՝ քան անցեալ դարերը, այս իմաստութեան կարիքն ունի, որպէսզի առաւել մարդկային դառնան իր բոլոր նոր գիւտերն ու յայտնաբերումները: Փաստացի կերպով վտանգուած է աշխարհի ապագան եւ այս իրավիճակի միակ դարմանն այն է, որ յառաջ գան աւելի իմաստուն մարդիկ: Ինչպէս նաեւ հարկաւոր է նշել, թէ ինչպէս բազմաթիւ ազգեր, որոնք տնտեսապէս աւելի աղքատ են՝ քան ուրիշները, բայց իմաստութեամբ աւելի հարուստ են, կարող են այդ միւսներին կարեւոր օգնութիւն ընծայել:

Սուրբ Հոգու պարգեւով, ապա, մարդը հաւատքի մէջ կարող է հասնել հայելու եւ ճաշակելու աստուածային ծրագրի խորհուրդը[4]:

---

[1] Հմմտ. Դն 3, 57-90.

[2] Հմմտ. 1Կր 6, 13-20.

[3] Հմմտ. 1Թգ 16, 7; Եր 17, 10.

[4] Հմմտ. Սրք 17, 7-8.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

ԺԶ. Բարոյական խղճի արժանապատուութիւնը

Խղճի խորքում մարդը բացայայտում է մի օրէնք, որն ինքը չէ՝ որ տալիս է իրեն, որին սակայն պէտք է հնազանդուի եւ որի ձայնը, որը նրան միշտ կանչում է սիրելու, գործելու բարին եւ հեռու մնալու չարից, երբ հարկաւոր է՝ յստակ կերպով ասում է սրտի ականջներին. արա՛ սա, հեռու մնա՛ այս միւսից: Մարդն, իրականում, ունի մի օրէնք, որն Աստծոյ կողմից գրուած է իր սրտի ներսում. այդ օրէնքին հնազանդուելու մէջ է կայանում ինքնին մարդու արժանապատուութիւնը եւ այդ օրէնքի համաձայն է նա դատուելու[1]:

Խիղճը մարդու ամենածածուկ կենտրոնն է եւ նրա ներքին սրբավայրը, ուր նա գտնուում է մենակ Աստծոյ հետ, որի ձայնը հնչում է իր ներաշխարհում[2]: Խղճի միջոցով սքանչելի կերպով ճանաչուում է այն օրէնքը, որն իր կատարումը գտնում է Աստծոյ եւ մերձաւորի սիրոյ մէջ[3]: Խղճի հանդէպ հաւատարմութեան մէջ քրիստոնեաները միանում են միւս մարդկանց, փնտռելու համար ճշմարտութիւնը եւ ճշմարտութեան համաձայն լուծելու համար բարոյական բազմատեսակ խնդիրները, որոնք ծագում են ինչպէս անհատների կեանքում, այնպէս էլ հասարակութեան ներսում: Հետեւաբար, որքան աւելի է գերակշռում ուղղամիտ խիղճը, այնքան աւելի են անձերն ու հասարակական խմբաւորումները հեռանում կոյր կամայականութիւնից եւ ջանում համապատասխանել բարոյականութեան առարկայական կանոններին: Ո՛չ հազուադէպ, սակայն, պատահում է, որ խիղճը սխալւում է անյաղթելի տգիտութեան պատճառով, թէեւ այս պատճառով չի կորցնում իր արժանապատուութիւնը: Ինչը չի կարելի ասել, երբ մարդն անհոգ է փնտռելու ճշմարտութիւնն ու բարին, եւ երբ խիղճը գրեթէ կուրանում է՝ մեղքի սովորութեան հետեւանքով:

ԺԷ. Ազատութեան գերազանցութիւնը

Բայց մարդը կարող է դէպի բարին ուղղուել միմիայն ազատութեամբ, այն ազատութեամբ՝ որին մեր ժամանակակիցներն, իրաւացիօրէն, այնքա՜ն կարեւորութիւն են ընծայում եւ որին վառ փափաքով ձգտում են: Յաճախ, սակայն, այն սխալ կերպով են գործածում, այնպէս՝ որ կարծես թէ օրինաւոր է այն ամէնն՝ ինչ հաճելի է, ներառեալ չարը: Ճշմարիտ ազատութիւնը, մինչդեռ, մարդու մէջ աստուածային պատկերի վեհագոյն նշաններից է: Աստուած, իրօք, կամեցաւ թողնել մարդուն «սեփական կամքի ձեռքը»[4], այնպէս՝ որ նա յօժարակամ փնտռի իր Արարչին եւ ազատօրէն հասնի, շնորհիւ Նրա հետ միութեան, լի եւ երանելի կատարելութեանը:

Ուստի մարդու արժանապատուութիւնը պահանջում է, որ նա գործի գիտակից եւ ազատ ընտրութիւնների համաձայն, այսինքն՝ անձնական համոզումներից մղուած ու առաջնորդուած, եւ ո՛չ թէ՝ ներքին կոյր ազդակներից կամ սոսկ արտաքին ստիպումներից: Բայց այդ արժանապատուութիւնը մարդը ձեռք է բերում, երբ կրքերի ամէն տեսակ ստրկութիւններից ազատուելով, իր վախճանին է ձգտում ազատօրէն ընտրելով բարին, եւ իր ինքնուրոյն ու ջանասէր նախաձեռնութեամբ հայթայթում է դրա համար հարկաւոր պատշաճ միջոցները: Մարդու ազատութիւնը, որ խոցուել է մեղքի կողմից, դէպի Աստծուն ուղղուած այդ կարգաւորումը լիովին արդիւնաւէտ կարող է դարձնել միմիայն աստուածային շնորհի օգնութեամբ: Իւրաքանչիւր անհատ մարդ, ապա, սեփական կեանքի համար հաշիւ է տալու Աստծոյ Դատարանին, այն ամէնի համար՝ ինչ գործել է բարի կամ չար[5]:

---

[1] *Հմմտ. Հռմ* 2, 14-16.

[2] *Հմմտ. Փիո ԺԲ, Ջայնասփիւռային պատգամ* *De conscientia christiana in iuvenibus recte efformanda*: *AAS* 44 (1952), p. 271.

[3] *Հմմտ. Մտթ* 22, 37-40; *Գղտ* 5, 14.

[4] *Հմմտ. Սրք* 15, 14.

[5] *Հմմտ.* 2*Կր* 5, 10.

© «Ընդհանրական» Հրապարակագրություն
www.mashtoz.org

ԺԸ. Մահուան խորհուրդը

Մահուան դիմաց, մարդկային վիճակի առեղծուածը գերագոյն աստիճանի է հասնում: Մարդը ո՛չ միայն մտատանջւում է տառապանքի եւ մարմնի աստիճանական քայքայման հեռանկարով, այլ նաեւ, եւ մանաւանդ թէ՝ է՛լ աւելի, վախենալով՝ որ ամէն բան թերեւս ընդմիշտ վերջանում է: Բայց սրտի բնազդը մարդուն մղում է ուղղամիտ դատողութեան, երբ խորշում եւ մերժում է իր անձի ամբողջական կործանման եւ վերջնական ոչնչացման գաղափարը: Յաւիտենականութեան բողբոջը, որ կրում է իր մէջ, եւ որն անհնարին է նուազեցնելով վերածել սոսկ նիւթական իրողութեան, ըմբոստանում է մահուան դէմ: Ճարտարագիտութեան բոլոր փորձերը, մեծապէս օգտակար լինելով հանդերձ, չեն կարողանում հանդարտեցնել մարդու տագնապները. կեանքի երկարաձգումը, որ ընծայում են կենսաբանական գիտութիւնները, չի կարող գոհացում տալ անդենական կեանքի այն փափաքին, որն աննկուն կերպով խարսխուած է մարդու սրտում:

Մինչ որեւէ երեւակայութիւն նուաղում է մահուան դիմաց, Եկեղեցին, մինչդեռ, աստուածային Յայտնութիւնից ուսանելով հաստատում է, որ մարդն Աստծոյ կողմից ստեղծուել է երկրային թշուառութեան սահմաններից անդին երանութեան հասնելու համար: Ինչպէս նաեւ, մարմնական մահը, որից մարդը զերծ կը մնար, եթէ չմեղանչէր[1], քրիստոնէական հաւատքն ուսուցանում է, որ մի օր յաղթուելու է, երբ Փրկչի ամենակարողութիւնն ու ողորմութիւնը մարդուն վերադարձնելու են փրկութիւնը, որն մարդը կորցրել է իր յանցանքով: Աստուած, իրօք, մարդուն կանչել է եւ շարունակում է կանչել՝ իր ամբողջ էութեամբ փարուելու Իրեն, աստուածային անեղծանելի կեանքի հետ մշտնջենաւոր հաղորդութեամբ: Այս յաղթանակը ձեռք է բերել Քրիստոսը, յարութիւն առնելով կեանքին, Իր մահուան շնորհիւ մարդուն ազատելով մահից[2]: Ուստի հաւատքը, հաստատահիմն փաստարկներով ներկայանալով խորհրդածել կամեցող իւրաքանչիւր անձի, պատասխանում է գալիք կեանքի վերաբերեալ ունեցած նրա տագնապներին: Միաժամանակ, հնարաւորութիւն է ընձեռում Քրիստոսի միջոցով հաղորդակցուելու մահուան կողմից արդէն յափշտակուած իրենց հարազատների հետ, յոյս տալով, որ նրանք արդէն իսկ հասել են ճշմարիտ կեանքին Աստծոյ մօտ:

ԺԹ. Անաստուածութեան կերպերն ու պատճառները

Մարդու արժանապատուութեան ամենավսեմ պատճառը կայանում է Աստծոյ հետ հաղորդուելու նրա կոչման մէջ: Իր ծնունդից սկսած, մարդը հրաւիրուած է Աստծոյ հետ երկխօսութեան: Իրօք, մարդը գոյութիւն ունի միմիայն որովհետեւ Աստծոյ կողմից յանուն սիրոյ ստեղծուած լինելով՝ Նրա կողմից էլ միշտ յանուն սիրոյ պահպանւում է գոյութեան մէջ, եւ մարդը լիովին չի ապրում ճշմարտութեան համաձայն, եթէ ազատօրէն չի ճանաչում եւ ընդունում այդ սէրը, եւ եթէ չի յանձնւում իր Արարչին: Մեր ժամանակակիցներից շատերը, սակայն, ամենեւին չեն ըմբռնում կամ բացայայտօրէն մերժում են Աստծոյ հետ այս սերտ ու կենսական կապը, այնպէս՝ որ անաստուածութիւնը դասւում է մեր ժամանակուայ ամենածանր իրականութիւնների շարքում, եւ պէտք է է՛լ աւելի մեծ հոգատարութեամբ քննութեան ենթարկուի:

«Անաստուածութիւն» եզրով սահմանւում են միմեանցից բաւականին տարբեր երեւոյթներ: Անաստուածներից ոմանք բացայայտօրէն մերժում են Աստծուն. ոմանք կարծում են, թէ մարդը ոչինչ չի կարող ասել Նրա մասին. ոմանք էլ, ապա, Աստծոյ վերաբերեալ խնդիրները քննութեան են վերցնում մի այնպիսի եղանակով, որով այն թւում է իմաստազուրկ: Շատերը տարապարտօրէն անցնելով դրական գիտութիւնների սահմաններից այն կողմ, կա՛մ յաւակնում են ամէն բան միմիայն գիտական այդ տեսակէտից ելնելով բացատրել, կա՛մ էլ ընդհակառակն՝ այլեւս չեն ընդունում բացարձակ որեւէ ճշմարտութիւն:

---

[1] Հմմտ. Իմս 1, 13; 2, 23-24; Հռմ 5, 21; 6, 23; Յկբ 1, 15.

[2] Հմմտ. 1Կր 15, 56-57.

© «Ընդհանրական» Հրապարակչություն

Ոմանք այնքա՜ն են պանծացնում մարդուն, որ Աստծոյ հանդէպ հաւատքը դրանից գրեթէ ջլատւում է, այնքան որ հակուած են – այսպէս է թւում – աւելի հաստատելու մարդուն, քան թէ մերժելու Աստծուն: Ոմանք այնպիսի պատկերացում են կազմում Աստծոյ մասին, որ այն՝ ինչ նրանք մերժում են, ամենեւին էլ Աւետարանի Աստուածը չէ: Ուրիշներ իրենց առաջ եւ ո՛չ իսկ դնում են Աստծոյ խնդիրը, քանի որ թւում է՝ թէ կրօնական որեւէ խռովք ու մտահոգութիւն չեն զգում, ո՛չ էլ կարողանում են հասկանալ՝ թէ ինչո՛ւ պէտք է հետաքրքրուեն կրօնով: Ինչպէս նաեւ, անաստուածութիւնը ո՛չ հազուադէպ սկիզբ է առնում կա՛մ աշխարհում չարիքի դէմ բուռն բողոքից, կա՛մ էլ Բացարձակին բնորոշ յատկութիւններն անպատշաճ կերպով մարդկային ինչ որ մի արժէքի վերագրելուց, այնպէս՝ որ դա գրաւում է Աստծոյ տեղը: Մինչեւ իսկ արդի քաղաքակրթութիւնը, ո՛չ ինքն ըստ ինքեան, այլ որովհետեւ չափազանց հրապուրուած է երկրային իրականութիւններով, յաճախ կարող է աւելի դժուարին դարձնել առ Աստուած մերձեցումը:

Նրանք՝ ովքեր կամովին աշխատում են Աստծուն հեռու պահել իրենց սրտից եւ խուսափում են կրօնական խնդիրներից, չհետեւելով իրենց խղճի բարոյական հրամայականին, այդպիսիք, անկասկած, զերծ չեն յանցանքից. այդուամենայնիւ, այդ հարցում հաւատացեալները նոյնպէս յաճախ որոշակի պատասխանատուութիւն ունեն: Իրօք, անաստուածութիւնն իր ամբողջականութեան մէջ քննարկուած, ինքնուրոյն եւ ինքնատիպ իրականութիւն չէ, այլ աւելի՝ սերում է տարբեր պատճառներից, որոնց շարքին հարկաւոր է դասել նաեւ քննադատական հակազդեցութիւնը կրօնների դէմ, իսկ աշխարհագրական որոշ երկրամասերում՝ յատկապէս քրիստոնէական կրօնի դէմ: Այս իսկ պատճառով, անաստուածութեան ծնունդին կարող են ո՛չ սակաւ նպաստ բերել հաւատացեալները, այնքանով՝ որքանով անհոգութեան մատնելով կրթելու իրենց հաւատքը, կա՛մ սխալ ներկայացնելով վարդապետութիւնը, կա՛մ նաեւ իրենց կրօնական, բարոյական եւ հասարակական կեանքի թերութիւնների պատճառով, հարկաւոր է ասել՝ որ աւելի թաքցնում եւ ո՛չ թէ յայտնում են Աստծոյ եւ կրօնի իրական դէմքը:

Ի. Համակարգուած անաստուածութիւնը

Արդի անաստուածութիւնը յաճախ ներկայանում է նաեւ համակարգուած կերպարանքով, որի համաձայն, ուրիշ պատճառներից բացի, մարդու ինքնիշխանութեան ձգտումն այնքան յառաջ է մղւում, որ դժուարութիւններ է յարուցանում Աստծուց որեւէ կերպ կախուածութիւն ունենալու նկատմամբ: Նրանք՝ ովքեր այս տեսակի անաստուածութիւնն են դաւանում, պնդում են՝ թէ ազատութիւնը կայանում է նրանում, որ մարդն ինքն իր նպատակը լինի, սեփական պատմութեան միակ հեղինակն ու ստեղծող արարիչը. իսկ սա, մտածում են նրանք, չի կարող հաշտ ընթանալ Տիրոջ՝ գոյութիւն ունեցող ամէն ինչի հեղինակի ու նպատակի ճանաչման եւ ընդունման հետ, կամ առնուազն՝ պարզապէս աւելորդ է դարձնում այդ հաստատումը: Այսօրինակ ուսմունքին կարող է նպաստել հզօրութեան այն զգացումը, որը մարդուն ներշնչում է ճարտարագիտական ժամանակակից զարգացումը:

Արդի անաստուածութեան ձեւերի շարքում չպէտք է մոռանանք այն մէկը, որը մարդու ազատագրումն ակնկալում է յատկապէս նրա տնտեսական եւ հասարակական ազատագրումից: Այդպիսիք պնդում են՝ թէ կրօնն իր բնութեամբ իսկ խոչընդոտ է այդ ազատագրման ճանապարհին, քանի որ մարդու յոյսը դէպի ապագայ կեանքի ակնկալիքը վերամբարձելով, նրան հեռացնում է երկրային քաղաքի կառուցումից: Հետեւաբար, այդօրինակ ուսմունքի պաշտպաններն ու կողմնակիցները, այնտեղ՝ ուր հասնում են իշխանութիւնն իրենց ձեռքը վերցնելուն, բռնութեամբ պայքարում են կրօնի դէմ եւ անաստուածութիւնը տարածում են դիմելով նաեւ ճնշման գործիքներին, որոնք իր տրամադրութեան ներքոյ ունի հանրային իշխանութիւնը, յատկապէս երիտասարդների կրթութեան ու դաստիարակութեան մարզում:

ԻԱ. *Եկեղեցու դիրքորոշումը անաստուածության դիմաց*

Եկեղեցին, Աստծոյ նկատմամբ եւ մարդկանց նկատմամբ իր պարտականութիւններին հաւատարիմ, չի կարող լիակատար հաստատամիտ վճռականութեամբ եւ ցաւով չպարսաւել այդ չարաշուք ուսմունքներն ու գործերը, – ինչպէս եւ վարուել է անցեալում[1] *– , որոնք հակառակում են բանականութեանը եւ մարդկանց ընդհանուր փորձառութեանը, եւ որ նուաստացնում են մարդուն իր բնածին մեծութիւնից*[2]*:*

Եկեղեցին ջանք է գործադրում, սակայն, բացայայտելու Աստծոյ ժխտման դրդապատճառները, որոնք թաքնուած են անաստուածների մտքում, եւ, անաստուածութեան կողմից յարուցուած խնդիրների ծանրութեանը գիտակից լինելով, բոլոր մարդկանց նկատմամբ ունեցած իր սիրուց մղուած, համարում է՝ որ այդ խնդիրները պէտք է արժանանան մի առաւել լուրջ եւ առաւել խորացուած քննարկման:

Եկեղեցին հաւատում է, որ Աստծոյ ճանաչումն ու ընդունումը ոչ մի կերպ չի հակառակում մարդու արժանապատուութեանը, քանի որ այդ արժանապատուութիւնը հէնց Աստծոյ մէջ է գտնում իր հիմնաւորումն ու իր կատարելութիւնը. մարդն Արարիչ Աստծոյ կողմից ստեղծուել է որպէս իմացականութեամբ օժտուած էակ եւ որպէս ազատ անձ հաստատուել է հասարակութեան մէջ, բայց յատկապէս՝ նա կանչուած է Աստծոյ հետ որդու որակաւորմամբ հաղորդուելու եւ մասնակցելու Նրա իսկ երջանկութեանը: Ինչպէս նաեւ, Եկեղեցին ուսուցանում է՝ որ վախճանաբանական յոյսը չի նուազեցնում երկրային յանձնառութիւնների կարեւորութիւնը, այլ ընդհակառակն՝ նոր դրդապատճառներ է տալիս ի նպաստ դրանց իրագործման: Մինչդեռ հակառակն, եթէ պակասում է կրօնական հիմքը եւ յաւիտենական կեանքի յոյսը, մարդու արժանապատուութիւնը բաւականին ծանր կերպով վնասւում է, ինչպէս յաճախ հաստատւում է մեր օրերում, իսկ կեանքի ու մահուան, մեղքի ու ցաւի առեղծուածները մնում են առանց լուծման, այն աստիճան՝ որ մարդիկ ո՛չ հազուադէպ ընկղմւում են յուսահատութեան անդնդի խորքերը:

Իսկ մինչ այդ, իւրաքանչիւր մարդ ինքն իր համար մնում է որպէս չլուծուած, խառն ու շփոթ կերպով ըմբռնելի խնդիր: Ոչ ոք, յիրաւի, կեանքի որոշակի պահերին եւ յատկապէս մեծ իրադարձութիւնների առիթով չի կարող ամբողջովին խուսափել վերոյիշեալ հարցադրումներից: Այդ խնդիրներին միմիայն Աստուած է լիակատար եւ ապահով պատասխան տալիս, Նա՝ որ մարդուն հրաւիրում է առաւել խորութեամբ կատարուած խորհրդածումների եւ առաւել խոնարհ փնտռտուքի:

Ինչ վերաբերւում է անաստուածութեան դարմանումին, այն հարկաւոր է ակնկալել թէ՛ Եկեղեցու վարդապետութեան պատշաճ ներկայացումից, թէ՛ նրա եւ իր անդամների կեանքի մաքրութիւնից: Եկեղեցին, յիրաւի, պարտականութիւնն ունի ներկայ եւ գրեթէ տեսանելի դարձնելու Հայր Աստծուն եւ Իր մարմնացեալ Որդուն, անդադար վերանորոգելով ինքն իրեն եւ մաքրագործուելով[3] *Սուրբ Հոգու առաջնորդութեան ներքոյ: Սա հնարաւոր է իրականացնել նախեւառաջ կենդանի եւ հասուն հաւատքի վկայութեամբ, ինչը որ նշանակում է պատշաճ կերպով կրթուած ու մարզուած՝ դժուարութիւնները յստակամտութեամբ ճանաչելու, եւ ընդունակ՝ դրանք յաղթահարելու:*

---

[1] *Հմմտ. Փիո ԺԱ, Կոնդակ* Divini Redemptoris: *AAS* 29 (1937), pp. 65-106; *Փիո ԺԲ, Կոնդակ* Ad Apostolorum Principis: *AAS* 50 (1958), pp. 601-614; *Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Mater et Magistra: *AAS* 53 (1961), pp. 451-453; *Պօղոս Զ, Կոնդակ* Ecclesiam suam: *AAS* 56 (1964), pp. 651-653.

[2] *Այս կէտում է տեղ գտել այն լուծումը, որը Ժողովը կամեցել է տալ նկատելի թուով ժողովական Հայրերի նախաձեռնութեանը, որոնք փափաքում էին՝ որ յստակ խօսքերով դատապարտուէր անաստուած համայնավարութիւնը: Յանձնախումբը, աւելորդ նկատելով յստակ դատապարտութիւնը, եւ թերեւս նաեւ լիովին ներդաշնակ մնալու համար Յովհաննէս ԻԳ Սրբազան Քահանայապետի կողմից Վատիկանեան Բ. Ժողովին տրուած «Հովուական» ոգուն, չընդունեց այդ առաջարկը, բայց այդուհանդերձ՝ ծանօթագրութեան մէջ յստակ կերպով մէջբերեց քահանայապետական նախորդ Կոնդակները, որոնք դատապարտել էին անաստուած համայնավարութիւնը:*

[3] *Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ.* Lumen Gentium, Ա 8: *AAS* 57 (1965), p. 12.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

Նման հաւատքի վսեմ վկայութիւն են տուել եւ շարունակում են տալ բազմաթիւ մարտիրոսները: Այդ հաւատքը պէտք է իր արդասաւորութիւնը ցուցաբերի հաւատացեալների ամբողջ կեանքից ներս թափանցելով, նաեւ աշխարհային կեանքից ներս, մղելով նրանց դէպի արդարութիւն եւ սէր, յատկապէս կարիքաւորների նկատմամբ: Այն՝ ինչն առաւելագոյնս է նպաստում, ի վերջոյ, Աստծոյ ներկայութիւնը յայտնելուն, եղբայրական սէրն է հաւատացեալների միջեւ, որոնք հոգով համերաշխ՝ միասին աշխատում են Աւետարանի հանդէպ հաւատքի համար[1] եւ ներկայանում են որպէս միութեան նշան:

Եկեղեցին, ապա, անաստուածութիւնը բացարձակ կերպով մերժելով հանդերձ, այնուամենայնիւ անկեղծօրէն ընդունում է, որ բոլոր մարդիկ, լինեն նրանք հաւատացեալ թէ անհաւատ, պէտք է նպաստեն ուղղամիտ կերտմանն այս աշխարհի, որի ներսում միասին ապրում են: Դա, անշուշտ, չի կարող տեղի ունենալ առանց անկեղծ եւ խոհեմ երկխօսութեան: Եկեղեցին, ուստի, պախարակում է հաւատացեալների ու անհաւատների միջեւ խտրականութիւնը, որն որոշ քաղաքական իշխանութիւններ անարդարացիօրէն ներմուծում են, ի վնաս մարդկային անձի հիմնական իրաւունքների: Ի նպաստ հաւատացեալների, ապա, պահանջում է իրական ազատութիւն, որպէսզի նրանց թոյլատրուի այս աշխարհում կերտելու նաեւ Աստծոյ տաճարը:

Ինչ վերաբերւում է անաստուածներին, Եկեղեցին նրանց ազնուօրէն կոչ է ուղղում բաց սրտով ուշադիր քննելու Քրիստոսի Աւետարանը:

Եկեղեցին կատարելապէս գիտէ, որ իր պատգամը ներդաշնակ է մարդկային սրտի ամենածածուկ իղձերի հետ, երբ նա պաշտպանում է մարդկային կոչման արժանապատուութիւնը եւ այդպիսով կրկին յոյս է պարգեւում բոլոր նրանց՝ ովքեր այլեւս չեն համարձակւում հաւատալ իրենց ճակատագրի մեծութեանը: Եկեղեցու պատգամը մարդուց ոչինչ չի խլում. ընդհակառակն՝ ներշնչում եւ տարածում է լոյս, կեանք եւ ազատութիւն մարդու յառաջխաղացման համար: Այդ պատգամից դուրս, ուրիշ ոչինչ չի կարող գոհացում տալ մարդկային սրտին. «Մեզ Քո համար ես ստեղծել», ո՜վ Տէր, «եւ մեր սիրտն անհանգիստ է, քանի դեռ չի հանգչում Քեզնում»[2]:

ԻԲ. Քրիստոսը՝ Նոր Մարդը

Իրականում, միմիայն մարդացած Խօսքի խորհրդի մէջ է ճշմարիտ լոյս գտնում մարդու խորհուրդը: Ադամն, առաջին մարդն, իրօք, ապագայ մարդու խորհրդապատկերն էր[3], այսինքն՝ Քրիստոս Տիրոջ: Քրիստոսը, որը նոր Ադամն է, Հօր եւ Նրա Սիրոյ խորհուրդը յայտնելով իսկ լիովին քօղազերծում է նաեւ մարդուն մարդու առաջ եւ նրան յայտնում է իր բարձրագոյն կոչումը: Հետեւաբար, ամենեւին էլ զարմանալի չէ, որ քիչ առաջ ներկայացուած բոլոր ճշմարտութիւնները Նրանում են գտնում իրենց ակունքը եւ հասնում իրենց գագաթնակէտին:

Նա «պատկերն է անտեսանելի Աստծոյ» (Կղս 1, 15)[4]: Նա կատարեալ մարդն է, որն Ադամի որդիներին վերադարձրեց Աստծոյ հետ նմանութիւնը, որը զեղծուել ու այլայլուել էր արդէն սկզբում եւեթ, մեղքի պատճառով: Քանի որ Նրանում մարդկային բնութիւնը վերափոխուեց, առանց սակայն ոչնչացուելու[5], դրանով իսկ այն մեր մէջ եւս վսեմաշուք

---

[1] Հմմտ. Փլպ 1, 27.

[2] Սբ. Օգոստինոս, Խոստովանութիւններ, Ա 1: PL 32, 661.

[3] Հմմտ. Հռմ 5, 14; Հմմտ. Տերտուղիանոս, De carnis resurrectione, 6: «Ինչ էլ որ հնարաւոր լինէր ստեղծել երկրի հողից, Քրիստոսն՝ ապագայ մարդն արդէն մտածուած էր»: PL 2, 282; CSEL 47, p. 33, 1, 12-13.

[4] Հմմտ. 2Կր 4, 4.

[5] Հմմտ. Կոստանդնուպոլսոյ Բ. Ժողով, Կանոն Է. «Ո՛չ Խօսքն Աստուած փոխակերպուեց մարմնի բնութեանը, ո՛չ էլ մարմինը փոխակերպուեց Խօսքի բնութեանը»: Denz. 219 (428). – Հմմտ. նաեւ Կոստանդնուպոլսոյ Գ. Ժողով. «Ինչպէս սրբազնասուրբ, անարատ, կենսալից իր աստուածացած

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

արժանապատուութեան բարձրացուեց: Մարդեղութեամբ, Աստծոյ Որդին ստոյգ կերպով միացաւ իւրաքանչիւր մարդու: Աշխատեց մարդկային ձեռքերով, մտածեց մարդկային մտքով, գործեց մարդկային կամքով[1], սիրեց մարդկային սրտով: Կոյս Մարիամից ծնուելով, Նա իսկապէս դարձաւ մեզնից մէկը, ամէն ինչով մեզ նման, մեղքից բացի[2]:

Գառն անմեղ, ազատօրէն հեղուած Իր արեամբ մեր համար արժանացաւ եւ շահեց կեանքը. Նրանում Աստուած մեզ հաշտեցրեց Իր հետ եւ մարդկանց միմեանց միջեւ[3], եւ խլեց մեզ սատանայի ու մեղքի ստրկութիւնից: Այնպէս, որ մեզնից իւրաքանչիւրը կարող է Առաքեալի հետ ասել. Աստծոյ Որդին «սիրեց ինձ եւ իրեն մահուան մատնեց իմ համար» (Գղտ 2, 20): Մեր համար տառապելով, ո՛չ միայն մեզ պարզապէս օրինակ տուեց, որպէսզի Իր հետքերին հետեւենք[4], այլ նաեւ մեր առաջ բացեց ճանապարհը. եթէ ընթանում ենք այդ ճանապարհով, կեանքն ու մահը սրբագործւում են եւ ձեռք են բերում նոր նշանակութիւն:

Քրիստոնեան, ապա, կերպարանակից դառնալով Որդու պատկերին, որն Առաջնեկն է բազում եղբայրների[5], ստանում է «Սուրբ Հոգու պտուղները» (Հռմ 8, 23), որով ընդունակ է դառնում գործադրելու սիրոյ նոր օրէնքը[6]: Այս Հոգու զօրութեամբ, որը «ժառանգութեան գրաւականն է» (Եփս 1, 14), մարդն ամբողջովին ներքուստ նորոգւում է, «մարմնի փրկութեան» (Հռմ 8, 23) սպասման մէջ. «Եթէ ձեզնում բնակւում է Հոգին Նրա՝ ով յարութիւն տուեց Յիսուսին մեռելներից, ապա եւ, Նա՝ ով Յիսուս Քրիստոսին յարութիւն տուեց մեռելներից, կը կենդանացնի նաեւ ձեր մահկանացու մարմիններն Իր Հոգիով, որը բնակւում է ձեր մէջ» (Հռմ 8, 11)[7]: Քրիստոնեան անշուշտ կրում է բազում նեղութիւնների միջով չարի դէմ պայքարելու անհրաժեշտութեան ու պարտաւորութեան եւ մահուանը ենթարկուելու տաղտկութիւնը. մասնակից դարձուելով զատկական խորհրդին, սակայն, կերպարանակից դառնալով Քրիստոսին մահուան մէջ, նմանապէս ընդառաջ է գնալու նաեւ յարութեանը, յոյսով ամրապնդուելով[8]:

Եւ սա վաւերական է ո՛չ միայն քրիստոնեաների, այլ նաեւ բարի կամքի տէր բոլոր մարդկանց համար, որոնց սրտում անտեսանելիօրէն գործում է շնորհը[9]: Քրիստոսն, իրօք, մահացել է բոլորի համար[10] եւ մարդու վերջին կոչումն իսկապէս մէկ եւ միակ է, այն է՝ աստուածայինը. ուստի պէտք է համարենք, որ Սուրբ Հոգին բոլորին տալիս է հնարաւորութիւնը – ձեւով, որ միայն Աստուած գիտէ – հաղորդակցուելու զատկական խորհրդին:

Այսպիսին եւ այսքա՜ն մեծ է մարդու խորհուրդը, այս խորհուրդը՝ որը քրիստոնէական Յայտնութիւնը պայծառօրէն փայլեցնում է հաւատացեալների աչքերի դիմաց: Քրիստոսի շնորհիւ եւ Քրիստոսի մէջ լուսաւորւում է ցաւի ու մահուան այն առեղծուածը, որը Նրա Աւետարանից դուրս մեզ ճնշում է: Իր մահուամբ Նա կործանեց մահը, Իր յարութեամբ՝ մեզ

Մարմինը չոչնչացուեց (theotheisa ouk anèrethè), այլ մնաց Իրեն յատուկ վիճակում եւ լինելու կերպում»: Denz. 291 (556). – Հմմտ. Քաղկեդոնի Ժողով. «Պէտք է դաւանուի երկու բնութեամբ՝ անխառն, անշփոթ, անբաժանելի, անանջատելի»: Denz. 148 (302).

[1] Հմմտ. Կոստանդնուպոլսոյ Գ. Ժողով. «Այսպիսով չոչնչացուեց Նրա մարդկային կամքը»: Denz. 291 (556).

[2] Հմմտ. Եբր 4, 15.

[3] Հմմտ. 2Կր 5, 18-19; Կղս 1, 20-22.

[4] Հմմտ. 1Պտ 2, 21; Մտթ 16, 24; Ղկս 14, 27.

[5] Հմմտ. Հռմ 8, 29; Կղս 1, 18.

[6] Հմմտ. Հռմ 8, 1-11.

[7] Հմմտ. 2Կր 4, 14.

[8] Հմմտ. Փլպ 3, 10; Հռմ 8, 17.

[9] Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ. Lumen Gentium, Բ 16: AAS 57 (1965), p. 20.

[10] Հմմտ. Հռմ 8, 32.

պարգեւեց կեանքը[1], որպէսզի մենք նոյնպէս, Որդու հետ որդիներ դառնալով, կարողանանք աղօթել՝ Հոգու մէջ բացականչելով. «Աբբա, Հայր»[2]:

ԳԼՈՒԽ Բ.

ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԻԳ. *Ի՛նչ է մտադիր անել Ժողովը*

Մարդկանց միջեւ փոխադարձ յարաբերութիւնների բազմապատկուելը կազմում է այսօրուայ աշխարհի ամենակարեւոր երեւոյթներից մէկը, որի զարգացմանը մեծապէս նպաստում է գիտարուեստի ժամանակակից յառաջադիմութիւնը:

Այդուամենայնիւ, մարդկանց միջեւ եղբայրական երկխօսութիւնն իր ամբողջացումն ու կատարելութիւնը չի գտնում այդ զարգացման մէջ, այլ առաւել խոր կերպով՝ անձանց հասարակութեան ներսում, որը պահանջում է փոխադարձ յարգանք նրանց հոգեւոր լիակատար արժանապատուութեան հանդէպ:

Քրիստոնէական Յայտնութիւնը մեծ օգնութիւն է ընծայում անձանց միջեւ այս հաղորդութեան խթանմանը, եւ միաժամանակ առաջնորդում է մեզ խորացնելու ճանաչումն օրէնքների՝ որոնք կանոնաւորում են հասարակական կեանքը եւ Արարչի կողմից գրուած են մարդու հոգեւոր եւ բարոյական բնութեան ներսում:

Քանի որ Եկեղեցու Վարդապետութեան վերջին վաւերագրերն ընդարձակ կերպով մեկնաբանել են մարդկային հասարակութեան վերաբերեալ քրիստոնէական ուսմունքը[3], Ժողովն այստեղ յիշատակում է ամենակարեւոր ճշմարտութիւններից ոմանք միայն եւ դրանց հիմունքները մեկնում է Յայտնութեան լոյսի ներքոյ: Իսկ ապա պնդում է որոշ հետեւանքների վրայ, որոնք առանձնայատուկ կերպով կարեւոր են մեր ժամանակուայ համար:

ԻԴ. *Մարդկային կոչման հասարակական բնոյթը Աստծոյ ծրագրում*

Աստուած, որ հայրական հոգատարութիւն ունի բոլորի նկատմամբ, կամեցաւ՝ որ մարդիկ միայն մէկ ընտանիք կազմէին եւ միմեանց նկատմամբ վարուէին եղբայրական ոգիով: Բոլորն, յիրաւի, ստեղծուած լինելով Աստծոյ պատկերով, «որը մէկ մարդուց ստեղծեց մարդկանց բոլոր ազգերը, որպէսզի բնակուէին ամբողջ երկրի երեսին» (Գործ 17, 26*), կանչուած են միեւնոյն վախճանին, որն Աստուած Ինքն է:*

Ուստի, Աստծոյ եւ մերձաւորի հանդէպ սէրը առաջին եւ ամենամեծ պատուիրանն է: Աստուածաշունչն, իրօք, ուսուցանում է, որ Աստծոյ հանդէպ սէրը չի կարող անջատուել մերձաւորի հանդէպ սիրուց, եւ «միւս բոլոր պատուիրաններն ամփոփուած են այս խօսքի մէջ. "Սիրի՛ր մերձաւորիդ քո անձի պէս": Օրէնքի լրումն, ուստի, սէրն է» (Հռմ 13, 9-10; 1*Յվհ* 4, 20*):*

Ակնյայտ է, որ սա մեծ կարեւորութիւն ունի մարդկանց համար, որոնք միշտ աւելի կախումնաւոր են մէկը միւսից, եւ աշխարհի համար, որը միշտ աւելի է ընթանում դէպի համամիաւորում:

---

[1] *Հմմտ. Բիւզանդական Ծէս, Զատկական ժամամուտ:*

[2] *Հմմտ. Հռմ* 8, 15 *եւ Գղտ* 4, 6; *հմմտ. նաեւ Յվհ* 1, 12 *եւ* 1*Յվհ* 3, 1-2.

[3] *Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Mater et Magistra: AAS 53 (1961), pp. 401-464. *եւ Կոնդակ* Pacem in terris: AAS 55 (1963), pp. 257-304; *Պօղոս Զ, Կոնդակ* Ecclesiam suam: AAS 56 (1964), pp. 609-659.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

Մանաւանդ թէ, Տէրն մեր Յիսուս, երբ աղօթում է Հօրը, որպէսզի «ամէնքը մի լինեն, ինչպէս եւ մենք մի ենք» (Յվհ 17, 21-22*), մեզ կանգնեցնելով մարդկային մտքի համար անմատչելի հորիզոնների դիմաց, մեզ յուշում է մի որոշակի նմանութիւն աստուածային Անձերի միութեան եւ ճշմարտութեան ու սիրոյ մէջ Աստծոյ որդիների միութեան միջեւ: Այդ նմանութիւնը ցոյց է տալիս, որ մարդը, որը երկրի վրայ միակ արարածն է՝ որին Աստուած կամեցել է Իր համար, լիովին կարող է գտնել իր ինքնութիւնը միմիայն անկեղծ ինքնանուիրման միջոցով*[1]*:*

ԻԵ. *Անձի եւ մարդկային հասարակութեան փոխկախուածութիւնը*

Մարդու հասարակական նկարագրից ակնյայտ կերպով երեւում է, թէ ինչպէս մարդկային անձի կատարելագործումը եւ ինքնին հասարակութեան զարգացումը միմեանց միջեւ փոխկախուածութեան մէջ են: Յիրաւի, հասարակական բոլոր հաստատութիւնների սկիզբը, առարկան եւ նպատակը է եւ պէտք է լինի մարդկային անձը, որն իր բնութեամբ իսկ հասարակական կեանքի գերագոյն կարիքն ունի[2]*: Քանի որ հասարակական կեանքը մարդու համար ինչ որ մի օտար բան չէ, մարդն իր բոլոր ձիրքերով աճում է եւ իր կոչմանը կարող է համապատասխանել միւսների հետ յարաբերութիւնների, փոխադարձ ծառայութիւնների, եղբայրների հետ երկխօսութեան միջոցով:*

Հասարակական կապերից, որոնք անհրաժեշտ են մարդու կատարելագործման համար, ոմանք, ինչպէս ընտանիքը եւ քաղաքական հասարակութիւնը, առաւել անմիջական կերպով համապատասխանում են նրա ներքնագոյն էութեանը, մինչ ուրիշներն աւելի շուտ սերում են իր ազատ կամքից:

Մեր այս ժամանակներում, զանազան պատճառներով բազմապատկւում են յարաբերութիւններն ու փոխկախուածութիւնները, որոնցից ծնւում են հանրային եւ սեփական իրաւունքի տարբեր ընկերակցութիւններ ու հաստատութիւններ: Այս իրողութիւնը, որ կոչւում է հասարակականացում, թէեւ վտանգներից զերծ չէ, այդու հանդերձ իրենում կրում է բազմաթիւ նպաստաւոր տարրեր մարդկային անձի ունակութիւնների ամրապնդման ու աճի եւ իր իրաւունքների պաշտպանութեան համար[3]*:*

Բայց եթէ մարդկային անձինք այդպիսի հասարակական կեանքից շատ բան են ստանում՝ սեփական կոչումը, նաեւ կրօնականը, ամբողջութեան կատարելու համար, այսուամենայնիւ անհնարին է ժխտել, որ մարդիկ հասարակական միջավայրից, ուր ապրում են եւ իրենց մանկութիւնից ի վեր մխրճուած են, յաճախ շեղւում են բարուց եւ մղւում են դէպի չարը:

Ստոյգ է, որ խառնաշփոթութիւնները, որոնք այսքա՜ն յաճախակի են հասարակական կարգում, մասամբ ծագում են լարուածութիւնից՝ որն առաջանում է տնտեսական, քաղաքական եւ հասարակական կառոյցներում: Բայց է՛լ աւելի ծնւում են մարդկային հպարտութիւնից ու եսապաշտութիւնից, որոնք ապականում են նաեւ հասարակական միջավայրը: Այնտեղ, ուր իրողութիւնների կարգն ու կանոնը խանգարուած է մեղքի հետեւանքով, մարդը, որն իր ծննդեան պահից եւեթ հակուած է դէպի չարը, մեղքի նոր գրգիռներ է գտնում, որոնց չի կարող յաղթել առանց մեծ ջանքերի եւ առանց շնորհի օգնութեան:

---

[1] *Հմմտ. Ղկս* 17, 33.

[2] *Հմմտ. Սբ. Թովմաս Աքուինացի,* Sententia libri Ethicorum I, Lectio 1.

[3] *Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Mater et Magistra: *AAS* 53 (1961), pp. 418. *Հմմտ. նաեւ Փիո ԺԱ, Կոնդակ* Quadragesimo anno: *AAS* 23 (1931), pp. 222ss.

© «Ղեղհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

ԻԶ. Ընդհանուր բարիքի զարգացումը խթանելու համար

Միշտ աւելի սերտ եւ կամաց կամաց ամբողջ աշխարհն ընդգրկող փոխկախուածութիւնից հետեւում է, որ ընդհանուր բարիքը – այսինքն՝ հասարակական կեանքի այն պայմանների ամբողջութիւնը, որոնք ինչպէս խմբերի՝ այնպէս էլ անհատ անդամների համար հնարաւորութիւն են ստեղծում առաւել լիակատար կերպով եւ առաւել հեշտօրէն հասնելու սեփական կատարելութեանը – այսօր շատ աւելի դառնում է ընդհանրական, իր մէջ ներառնելով իրաւունքներ եւ պարտաւորութիւններ, որոնք վերաբերւում են համայն մարդկութեանը: Ուստի, իւրաքանչիւր խումբ պէտք է հաշուի առնի միւս խմբերի կարիքներն ու օրինաւոր ձգտումները, մանաւանդ թէ՝ մարդկային ամբողջ ընտանիքի ընդհանուր բարիքը[1]:

Միաժամանակ աճում է գիտակցութիւնը մարդկային անձի գերազանց արժանապատուութեան, որն ամէն ինչից վեր է, եւ որի իրաւունքներն ու պարտաւորութիւնները համընդհանուր են եւ անձեռնմխելի: Ուստի հարկաւոր է, որ մարդու համար հասանելի դարձուեն բոլոր այն բաները, որոնց կարիքը նա ունի իսկապէս մարդկային կեանքով ապրելու համար, ինչպիսիք են ապրուստի միջոցները, հագուստը, բնակարանը, կեանքի վիճակն ազատօրէն ընտրելու եւ ընտանիք կազմելու իրաւունքը, իրաւունքը կրթութեան, աշխատանքի, անուան վարկի, յարգանքի, անհրաժեշտ տեղեկատուութեան, իր խղճի ուղղամիտ թելադրանքի համաձայն գործելու հնարաւորութեան, անհատական կեանքի պաշտպանութեան եւ արդարացի ազատութեան նաեւ կրօնական ասպարէզում:

Հասարակական կարգն, ուրեմն, եւ նրա զարգացումը, միշտ պէտք է գերակշռել տան անձանց բարիքը, քանի որ իրողութիւնները կանոնակարգելիս դրանք պէտք է համապատասխանեցուեն անձանց կարգին եւ ո՛չ թէ հակառակը, Տիրոջ կողմից թելադրուած սկզբունքի համաձայն, երբ ասում է՝ որ շաբաթն է մարդու համար եւ ո՛չ թէ մարդը շաբաթի[2]:

Այս կարգը հարկաւոր է միշտ աւելի զարգացնել, իրեն որպէս հիմք պէտք է ունենայ ճշմարտութիւնը, պէտք է իրագործուի արդարութեան մէջ, կենագործուի սիրոյ կողմից, պէտք է միշտ աւելի մարդկային հաւասարակշռութիւն գտնի ազատութեան մէջ[3]: Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է աշխատել՝ վերանորոգելու համար մտածելակերպը եւ հասարակութեան ներսում խորին փոփոխութիւններ ձեռնարկել:

Աստծոյ Հոգին, որ զարմանահրաշ նախախնամութեամբ վարում է ժամանակների ընթացքը եւ նորոգում է երկրի երեսը, ներկայ է այս յեղաշրջմանը: Աւետարանական թթխմորը մարդու սրտում արծարծել է եւ շարունակում է արծարծել արժանապատուութեան այս անսանձելի ձգտումը:

ԻԷ. Մարդկային անձի հանդէպ յարգանքը

Գործնական առաւել անյապաղ հետեւութիւնների հասնելով, ժողովը կրկին պնդում է մարդու հանդէպ յարգանքի վրայ. իւրաքանչիւր ոք իր մերձաւորին, ամէնքին առանց բացառութեան, պէտք է նկատի որպէս մէկ ուրիշ «իր սեփական անձը», հաշուի առնելով նրա գոյութիւնը եւ այդ գոյութիւնն արժանապատուօրէն ապրելու համար հարկաւոր միջոցները[4], չնմանուելու համար այն հարուստին, որը նուազագոյն հոգատարութիւն անգամ չցուցաբերեց աղքատ Ղազարոսի նկատմամբ[5]:

---

[1] Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), pp. 417.

[2] Հմմտ. Մրկ 2, 27.

[3] Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Pacem in terris*: *AAS* 55 (1963), pp. 266.

[4] Հմմտ. Յկբ 2, 15-16.

[5] Հմմտ. Ղկս 16, 19-31.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

Յատկապէս այսօր անյետաձգելի է պարտաւորութիւնը, որ մօտիկ լինենք իւրաքանչիւր մարդու եւ գործով ծառայութիւն մատուցենք նրան՝ ով անցնում է մեր կողքով. բոլորի կողմից լքուած ծերունին, կամ անարդարացիօրէն արհամարհուած օտարազգի բանուորը, կամ տարագիր աքսորականը, կամ ապօրինի միութիւնից ծնուած զաւակը, որն անիրաւաբար տառապում է իր կողմից չգործուած մեղքի համար, կամ սովահարը, որ կենդանի յանդիմանութիւն է մեր խղճին, յիշեցնելով Տիրոջ խօսքերը. «Ինչ որ իմ այս փոքրագոյն եղբայրներից մէկի համար արեցիք, իմ համար արեցիք» (Մտթ 25, 40):

Ինչպէս նաեւ, այն ամէնը՝ որ հակառակ է ինքնին կեանքին, ինչպէս որեւէ տեսակի մարդասպանութիւնները, ցեղասպանութիւնը, կամովին պատճառուած վիժումը, հեշտամահութիւնը եւ, նմանապէս, կամովին կատարուած ինքնասպանութիւնը. այն ամէնը՝ որ բռնադատում է մարդկային անձի ամբողջականութիւնն ու անաղարտութիւնը, ինչպէս անդամահատումները, մարմնին եւ մտքին հասցուած չարչարանքները, հոգեբանական պարտադրանքները. այն ամէնը՝ որ վիրաւորում է մարդկային արժանապատուութիւնը, ինչպէս անմարդկային կեանքի պայմանները, կամայական բանտարկումները, բռնագաղթը, ստրկութիւնը, պոռնկութիւնները, կանանց եւ պատանիների վաճառքը, կամ տակաւին՝ աշխատանքի ամօթալի պայմանները, որոնցով աշխատաւորների հետ վարւում են պարզապէս որպէս շահաբեր գործիքների եւ ո՛չ թէ որպէս ազատ եւ պատասխանատու անձերի: Բոլոր այս բաները, եւ սրանց նման ուրիշներ եւս, անշուշտ ամօթալի են, եւ մինչ խաթարում են մարդկային քաղաքակրթութիւնը, աւելի պատուազրկում են նրանց՝ ովքեր այդպէս վարւում են, քան նրանց՝ ովքեր դրանք կրում են, եւ մեծապէս վիրաւորում են Արարչի պատիւը:

ԻԸ. Հակառակորդների նկատմամբ յարգանքն ու սէրը

Յարգանքն ու սէրը պէտք է տարածուեն նաեւ նրանց վրայ, ովքեր հասարակական, քաղաքական եւ մինչեւ իսկ կրօնական հարցերում մտածում կամ գործում են մեզնից տարբեր եղանակով, քանի որ որքան աւելի մարդկայնութեամբ ու սիրով թափանցենք նրանց մտածելակերպից ներս, այնքան աւելի հեշտութեամբ կը կարողանանք նրանց հետ երկխօսութիւն սկսել:

Այդ սէրն ու սիրալիրութիւնն անշուշտ չպէտք է մեզ որեւիցէ կերպ անտարբեր դարձնեն ճշմարտութեան ու բարիքի հանդէպ: Մանաւանդ թէ, ինքնին սէրն է՝ որ Քրիստոսի աշակերտներին մղում է բոլոր մարդկանց աւետարանելու ճշմարտութիւնը, որ փրկում է: Բայց հարկաւոր է զանազանել սխալը, որը միշտ հարկաւոր է մերժել, սխալուողից, որը միշտ պահպանում է անձի արժանապատուութիւնը, նաեւ երբ արատաւորուած է կրօնական կեղծ կամ անբաւարար գիտելիքներով[1]: Միայն Աստուած Ինքն է սրտերի խուզարկուն ու դատաւորը, ուստի մեզ արգելում է որեւէ մէկի ներքին յանցապարտութեան վերաբերեալ դատաստան կայացնելը[2]:

Քրիստոսի վարդապետութիւնը պահանջում է, որ մենք ներենք նաեւ վիրաւորանքները[3], եւ սիրոյ պատուիրանը տարածում է նաեւ բոլոր թշնամիների վրայ: Սա Նոր Օրէնքի պատուիրանն է. «Լսել էք արդարեւ, թէ ինչ ասուեց. "Սիրիր ընկերոջդ եւ ատիր թշնամուդ": Իսկ ես ձեզ ասում եմ. "Սիրեցէք ձեր թշնամիներին, օրհնեցէք ձեզ անիծողներին, բարութիւն արէք ձեզ ատողներին եւ աղօթեցէք նրանց համար՝ ովքեր հալածում են ձեզ ու չարչարում"» (Մտթ 5, 43-44):

---

[1] Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ Pacem in terris: AAS 55 (1963), pp. 299, 300.

[2] Հմմտ. Ղկս 6, 37-38; Մտթ 7, 1-2; Հռմ 2, 1-11; 14, 10-12.

[3] Հմմտ. Մտթ 5, 43-47.

© «Ընդհանրական» Հրապարակչություն
www.mashtoz.org

ԻԹ. Բոլոր մարդկանց հիմնական հաւասարութիւնը եւ հասարակական արդարութիւնը

Բոլոր մարդիկ, բանական հոգիով օժտուած եւ Աստծոյ պատկերով ստեղծուած, միեւնոյն ընութիւնն ունեն եւ միեւնոյն ծագումը: Բոլորը, Քրիստոսի կողմից փրկուած, ունեն միեւնոյն կոչումը եւ աստուածային միեւնոյն սահմանումը: Հետեւաբար, հարկաւոր է միշտ աւելի ճանաչել բոլորի միջեւ գոյութիւն ունեցող հիմնական հաւասարութիւնը:

Անշուշտ ո՛չ բոլոր մարդիկ են միմեանց հաւասար ըստ ֆիզիքական տարբեր կարողութիւնների եւ իմացական ու բարոյական ուժերի զանազանութեան: Բայց անձի հիմնական իրաւունքների վերաբերեալ որեւէ տեսակի խտրականութիւն, լինի հասարակական՝ թէ մշակութային ասպարէզներում, սեռային, ցեղային, մաշկի գոյնի, հասարակական դիրքի, լեզուի կամ կրօնի պատճառով, պէտք է յաղթահարուի եւ լիովին ջնջուի, որպէս Աստծոյ ծրագրին հակառակ իրականութիւն:

Իսկապէս ցաւալի է հաւաստիօրէն տեսնելը, որ անձի այդ հիմնական իրաւունքները տակաւին եւ ամէնուր լիովին չեն յարգւում, ինչպէս երբ կնոջը մերժւում է ազատօրէն ամուսին ընտրելու իրաւունքը, կամ՝ կեանքի որոշակի վիճակի փարուելը, կամ էլ՝ տղամարդու համար թոյլատրուած չափով ուսում եւ մշակութային կրթութիւն ստանալու հնարաւորութիւնը:

Ինչպէս նաեւ, թէեւ մարդկանց միջեւ գոյութիւն ունեն արդարացի տարբերութիւններ, անձերի հաւասար արժանապատուութիւնը պահանջում է, որ բոլորը հասնեն կեանքի առաւել մարդկային եւ առաւել արդար պայմանների: Իրօք, մարդկային միակ ընտանիքին պատկանող անդամների եւ ժողովրդների միջեւ տնտեսական եւ հասարակական չափազանց անհաւասարութիւնները գայթակղութիւն են յարուցում եւ հակառակ են հասարակական արդարութեանը, անկողմնակալութեանը, մարդկային անձի արժանապատուութեանը, ինչպէս նաեւ հասարակական ներքին եւ միջազգային խաղաղութեանը:

Մարդկային հաստատութիւնները, ե՛ւ անհատականները ե՛ւ հանրայինները, պէտք է ջանք գործադրեն՝ նուիրուելու մարդու արժանապատուութեան եւ վախճանի ծառայութեանը: Միաժամանակ պէտք է կորովի քաջութեամբ պայքարեն հասարակական եւ քաղաքական որեւէ տեսակի գերութեան դէմ, եւ մարդկանց հիմնական իրաւունքներն ապահովեն քաղաքական որեւէ վարչաձեւի ներքոյ:

Մանաւանդ թէ, այդ հաստատութիւնները պէտք է քիչ առ քիչ ներդաշնակեցուեն հոգեւոր իրականութիւնների հետ, որոնք բոլորի մէջ ամենաբարձրերն են, թէեւ երբեմն աւելի երկար ժամանակ հարկաւոր կը լինի փափաքելի նպատակակէտին հասնելու համար:

Լ. Հարկաւոր է յաղթահարել անհատապաշտական մտածելակերպը

Իրաւունքների խորին եւ սրընթաց ձեւափոխութիւնն առաւել անյապաղօրէն պահանջում է, որ հասարակութեան ներսում չլինի ինչ որ մէկը, որն իրողութիւնների ընթացքին ուշադրութիւն չդարձնելով եւ ծոյլ անշարժութիւնից թմրելով ու ընդարմանալով՝ գոհանայ սոսկ անհատապաշտական մտածելակերպով:

Արդարութեան եւ սիրոյ պարտականութիւնը միշտ աւելի է գործադրւում, երբ իւրաքանչիւր ոք, սեփական կարողութիւնների եւ միւսների կարիքների համաձայն ընդհանուր բարիքով հետաքրքրուելով, նպաստում եւ օգնում է հանրային ու անհատական հաստատութիւններին նոյնպէս, որոնք ծառայում են բարելաւելու մարդկանց կեանքի պայմանները: Կան անձինք, որոնք լայնախոհ եւ վեհանձն գաղափարներ արտայայտելով հանդերձ, այդուամենայնիւ գործնականում շարունակում են այնպէս ապրել, ինչպէս եթէ ոչ մի հոգատարութիւն էլ չունենային հասարակութեան կարիքների հանդէպ: Մանաւանդ թէ, շատերը, որոշ երկրներում, սակաւ ուշադրութիւն են դարձնում հասարակական օրէնքներին ու կանոններին: Քչերը չեն, որ տարբեր անպարկեշտ հնարքներով ու խարդախումներով անամօթաբար խուսափում են արդար տուրքերից կամ հասարակական ա՛յլ պարտաւորութիւններից: Ուրիշներ անհոգ են հասարակական կեանքի որոշակի կանոնների նկատմամբ, օրինակ այն՝ ինչ վերաբերւում է առողջապահութեանը կամ ինքնաշարժերի վարման համար նախատեսուած երթեւեկութեան կանոնները, հաշուի չառնելով՝ որ այդպէս

վարուելով վտանգի են ենթարկում, իրենց անհոգութեամբ, իրենք իրենց եւ ուրիշների կեանքը:

Բոլորի համար սրբազան պարտաւորութիւն պէտք է լինի հասարակական համերաշխութեան կերպերն այսօրուայ մարդու գլխաւոր պարտականութիւնների շարքին դասելը, եւ դրանք յարգելը: Յիրաւի, որքան աւելի է աշխարհը միաւորւում, այնքան աւելի բացայայտօրէն են մարդկանց պարտաւորութիւնները գերազանցում մասնակի խմբերի սահմանները եւ քիչ առ քիչ տարածւում ամբողջ աշխարհի վրայ:

Իսկ դա չի կարող տեղի ունենալ, եթէ անհատ անձինք եւ խմբեր չմշակեն բարոյական ու հասարակական առաքինութիւնները եւ դրանք չտարածեն հասարակութեան ներսում, այնպէս՝ որ յառաջ գան նոր մարդիկ, աստուածային շնորհի անհրաժեշտ օգնութեամբ՝ նոր մարդկութիւն կերտողներ:

ԼԱ. Պատասխանատուութիւն եւ մասնակցութիւն

Որպէսզի անհատ մարդիկ առաւել հոգատարութեամբ կատարեն իրենց խղճի պարտականութիւններն իրենք իրենց նկատմամբ եւ զանազան խմբերի, որոնց անդամակցում են, հարկաւոր է նրանց խնամքով դաստիարակել՝ ձեռքբերելու հոգեւոր առաւել ընդարձակ կրթութիւն, գործածելով վերթխարի միջոցները, որոնք այսօր մարդկութեան տրամադրութեան ներքոյ են:

Նախեւառաջ, հասարակական որեւիցէ ծագում ունեցող երիտասարդների կրթութիւնը պէտք է այնպէս կազմակերպուի, որ յառաջ բերի ո՛չ այնքան մտաւոր գետնի վրայ կատարելագործուած, որքան ամուր անձնականութեան տէր դարձած տղամարդիկ ու կանայք, ինչպէս ուժգին պահանջում է մեր ժամանակաշրջանը: Բայց մարդը դժուարութեամբ է հասնում պատասխանատուութեան այդպիսի զգացման, եթէ կեանքի պայմանները նրան չեն թոյլատրում գիտակցելու սեփական արժանապատուութիւնը եւ համապատասխանելու իր կոչմանը, անձնուիրաբար տրուելով Աստծուն եւ ուրիշներին:

Իսկապէս, մարդկային ազատութիւնը յաճախ տկարանում է, երբ մարդն ընկնում է ծայրայեղ չքաւորութեան մէջ, ինչպէս որ անկում է ապրում, երբ մարդն ինքը, հետամուտ լինելով չափազանց հեշտ կենսաձեւի, ինքն իրեն փակում է մի տեսակ ոսկեղէն միայնութեան մէջ: Ընդհակառակն, այն ամրապնդւում է, երբ մարդն ընդունում է հասարակական կեանքի անխուսափելի դժուարութիւնները, ստանձնում է մարդկային կենակցութեան բազմատեսակ պահանջները եւ գործի է լծւում ի ծառայութիւն մարդկային հասարակութեան:

Ուստի հարկաւոր է խթանել բոլորի կամքը՝ համընդհանուր նախաձեռնութիւններում ստանձնելու սեփական մասը: Ապա, գովասանքի է արժանի այն ազգութիւնների վարուելակերպը, ուր քաղաքացիների մեծամասնութիւնը մասնակից է դարձւում հանրային գործերին, իրական ազատութեան մթնոլորտում:

Հարկաւոր է սակայն հաշուի առնել իւրաքանչիւր ժողովրդի առարկայական կացութիւնն ու պայմանները եւ հանրային իշխանութիւնների անհրաժեշտ ամրութիւնն ու տոկունութիւնը: Որպէսզի, ապա, բոլոր քաղաքացիներն իրենց շահագրգռուած զգան մասնակցելու զանազան խմբերի կեանքին, որոնցով ձեւանում է հասարակութեան մարմինը, հարկաւոր է՝ որ նրանցում գտնեն արժէքներ, որոնք կը կարողանան գրաւել իրենց եւ տրամադրել նուիրուելու ուրիշների ծառայութեան: Իրաւացիօրէն կարող ենք մտածել, որ մարդկութեան ապագան գտնւում է նրանց ձեռքերում, ովքեր ընդունակ են կեանքի եւ յոյսի բանական պատճառներ աւանդելու գալիք սերունդներին:

ԼԲ. Մարդացեալ Խօսքը եւ մարդկային համերաշխութիւնը

Ինչպէս Աստուած մարդկանց ստեղծեց ո՛չ որպէսզի ապրէին անհատաբար, այլ որպէսզի միանային հասարակութեան ներսում, նոյնպէս Նրան « ... հաճոյ եղաւ մարդկանց սրբացնել

եւ փրկել ո՛չ թէ մէկ առ մէկ, որեւէ փոխադարձ կապից դուրս, այլ կամեցաւ կարգել նրանց որպէս ժողովուրդ, որը ճանաչէր Իրեն ճշմարտութեամբ եւ ծառայէր Իրեն սրբութեամբ»[1]:

Փրկութեան պատմութեան սկզբից եւեթ, Նա Ինքն ընտրեց մարդիկ, ո՛չ միայն որպէս անհատներ, այլ որպէս մի որոշակի հասարակութեան անդամներ: Յիրաւի, Իր այդ ընտրեալներին Աստուած, յայտնելով Իր ծրագիրը, կոչեց «Իր ժողովուրդը» (Ել 3, 7-12): Այդ ժողովրդի հետ, ապա, կնքեց Սինայի ուխտը[2]:

Հասարակական այդ նկարագիրը կատարելագործուել եւ սեփական լրումին է հասցուել Յիսուս Քրիստոսի գործով: Մարդացեալ Խօսքն Ինքը կամեցաւ մասնակից լինել մարդկային համերաշխութեանը: Մասնակցեց Կանայի հարսանիքին, մտաւ Զակքէոսի տուն, սեղանի նստեց մաքսաւորների ու մեղաւորների հետ: Յայտնեց Հօր սէրը եւ մարդկանց վսեմ կոչումը, յիշեցնելով հասարակական կեանքի ամենասովորական երեւոյթները եւ գործածելով ամէնօրեայ կեանքի բառապաշարն ու պատկերները:

Սրբացրեց մարդկային յարաբերութիւնները, նախեւառաջ՝ ընտանեկանները, որոնցից է սկիզբ առնում հասարակական կեանքը: Կամովին ենթարկուեց Իր հայրենիքի օրէնքներին: Կամեցաւ ապրել Իր ժամանակուայ եւ Իր նահանգի արհեստաւորներին բնորոշ կեանքով:

Իր քարոզչութեան ընթացքում յստակ կերպով հաստատեց, որ Աստծոյ որդիները պարտաւորութիւնն ունեն միմեանց նկատմամբ փոխադարձաբար վարուելու որպէս եղբայրներ: Իր աղօթքի մէջ հայցեց, որ Իր բոլոր աշակերտները «միայն մէկ միութիւն» լինեն: Մանաւանդ թէ, Ինքն ինքնին ընծայուեց բոլորի համար, մինչեւ մահուան չափ, Նա՝ բոլորի Փրկիչը: «Ոչ ոք աւելի մեծ սէր չունի, քան նա՝ ով սեփական կեանքը զոհում է իր սիրելիների համար» (Յվհ 15, 13):

Այս ամէնից բացի, Առաքեալներին պատուիրեց աւետարանական պատգամն աւետել բոլոր ժողովուրդներին, որպէսզի մարդկային զարմը դառնար Աստծոյ ընտանիքը, ուր օրէնքի լրումը լինէր սէրը:

Բազում եղբայրների մէջ Առաջնեկը լինելով, Իր մահից եւ յարութիւնից յետոյ՝ Իր Հոգու պարգեւումով հաստատեց եղբայրական մի նոր հաղորդութիւն բոլոր նրանց միջեւ՝ ովքեր Իրեն ընդունում են հաւատքով եւ սիրով: Այդ հաղորդութիւնն իրականանում է Նրա Մարմնի ներսում, որ է Եկեղեցին: Այդ Մարմնում բոլորը, մէկը միւսի անդամները հանդիսանալով, պէտք է փոխադարձ ծառայութիւններ մատուցեն միմեանց, իրենց շնորհուած զանազան պարգեւների համաձայն:

Այս համերաշխութիւնը պէտք է միշտ աւելի աճեցուի ու զարգացուի, մինչեւ այն օրը՝ երբ կը հասնի իր կատարումին. այդ օրը, շնորհով փրկուած մարդիկ կատարեալ փառաբանութիւն կը մատուցեն Աստծուն, որպէս Աստծուց եւ Քրիստոսից՝ իրենց Եղբօրից սիրուած ընտանիք:

ԳԼՈՒԽ Գ.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԼԳ. *Խնդիրը*

Իր աշխատանքով եւ իր հանճարով, մարդը միշտ ջանացել է զարգացնել սեփական կեանքը, իսկ այսօր, յատկապէս գիտութեան եւ ճարտարագիտութեան օգնութեամբ, ընդլայնել եւ շարունակ ընդլայնում է իր տիրապետութիւնը գրեթէ ամբողջ բնութեան վրայ եւ, յատկապէս շնորհիւ ժողովուրդների միջեւ փոխանակման միջոցների բազմացման, մարդկային ընտանիքը քիչ առ քիչ հասել է ինքն իրեն ճանաչելու եւ հաստատուելու որպէս մէկ միասնական հասարակութիւն ամբողջ աշխարհում: Սրանից բխում է, որ բազմաթիւ

[1] Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ. Lumen Gentium, Բ 9: AAS 57 (1965), p. 12-13.

[2] Հմմտ. Ել 24, 1-8.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

բարիքներ, որոնք մարդը մի ժամանակ ակնկալում էր բարձրակարգ ուժերից, այսօր հայթայթում է իր իսկ նախաձեռնութեամբ եւ իր իսկ ուժերով:

Այս վիթխարի ջանքի դիմաց, որն այլեւս համակել է ամբողջ մարդկութեանը, բազմաթիւ հարցեր են ծագում մարդկանց մօտ. «Ո՞րն է մարդկային գործունէութեան իմաստն ու արժէքը», «Ինչպէ՞ս պէտք է գործածուեն այս իրականութիւնները», «Ի՞նչ նպատակի են ձգտում լինի՛ անհատական, լինի՛ հաւաքական ջանքերը»:

Եկեղեցին, որ պահպանում է Աստծոյ Խօսքի աւանդը, որտեղից են վերցւում բարոյական եւ կրօնական կարգի սկզբունքները, թէեւ միշտ չէ՝ որ պատրաստի լուծումներ ունի իւրաքանչիւր առանձին խնդիրների վերաբերեալ, փափաքում է Յայտնութեան լոյսը միացնել բոլորի իրաւասութիւններին, որպէս նպատակ ունենալով լուսաւորել ճանապարհը, որի երկայնքին մարդկութիւնը միայն վերջերս է ընթացք վերցրել:

ԼԴ. *Մարդկային գործունէութեան արժէքը*

Հաւատացեալների համար մի բան ստոյգ է. մարդկային անհատական եւ հաւաքական գործունէութիւնը, այսինքն՝ այն ահագին ջանքը, որով մարդիկ դարերի ընթացքում աշխատում են բարելաւելու սեփական կեանքի պայմանները, ինքն իր մէջ քննարկուած՝ համապատասխանում է Աստծոյ դիտաւորութեանն ու նպատակներին:

Մարդն, իրօք, Աստծոյ պատկերով ստեղծուած, հրաման է ստացել իրեն ենթարկելու երկիրը, նրանում պարունակուած ամէն ինչի հետ միասին, եւ իշխելու աշխարհին արդարութեամբ եւ սրբութեամբ[1], եւ այսպէս նաեւ՝ Աստծուն վերաբերելու սեփական էութիւնն ու ամբողջ տիեզերքը, յԱնձինս Նրա ճանաչելով ամէն ինչի Արարչին. այնպէս՝ որ մարդու նկատմամբ բոլոր իրականութիւնների ենթակայութեան մէջ փառաւորուի Աստծոյ Անունն ամբողջ երկրի վրայ[2]:

Սա վաւերական է նաեւ ամէնօրեայ սովորական աշխատանքների համար: Տղամարդիկ եւ կանայք, որոնք իրենց եւ իրենց ընտանիքների ապրուստը հայթայթելու համար իրենց աշխատանքը կատարում են այնպէս՝ որ դրանով նաեւ պատշաճ ծառայութիւն են մատուցում հասարակութեանը, ամենայն իրաւացիութեամբ կարող են համարել՝ որ իրենց աշխատանքով շարունակում են Արարչի աշխատանքը, օգտակար են լինում իրենց եղբայրներին եւ անձնական նպաստ են ներդնում պատմութեան մէջ Աստծոյ նախախնամական ծրագրի իրականացման գործում[3]: Քրիստոնեաներն, ուստի, եւ ո՛չ իսկ երազում են մարդու հանճարի ու քաջութեան արգասիքը հակադրել Աստծոյ զօրութեանը, կարծես թէ բանական արարածն Արարչի մրցակիցը լինէր: Ընդհակառակն, աւելի շուտ համոզուած են, որ մարդկութեան յաղթանակները Աստծոյ մեծութեան նշանն են եւ արդիւնքը Նրա անճառելի ծրագրի: Բայց որքան աւելի է աճում մարդկանց հզօրութիւնը, այնքան աւելի է տարածւում եւ ընդարձակւում նրանց լինի՛ անհատական, լինի՛ հաւաքական պատասխանատուութիւնը:

Ինչից երեւում է, թէ ինչպէս քրիստոնէական պատգամը, աշխարհի կառուցման գործից մարդկանց հեռացնելուց կամ իրենց նմանների բարիքի նկատմամբ նրանց անտարբերութեան մղելուց հեռու, ընդհակառակն՝ նրանց մի է՛լ աւելի ստիպողական պարտաւորութեամբ յանձնարարում է կատարելու այդ ամէնը[4]:

---

[1] *Հմմտ. Ծնդ* 1, 26-27; 9, 2-3; *Իմս* 9, 2-3.

[2] *Հմմտ. Սղմ* 8; 7; 10.

[3] *Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Pacem in terris: *AAS* 55 (1963), p. 297.

[4] *Հմմտ. Վատիկան. Բ. Ժողովի սկզբնաւորութեանը ժողովական Հայրերի կողմից աշխարհին ուղղուած Պատգամը, Հոկտ.* 1962: *AAS* 54 (1962), p. 283.

© «Ընդհանրական» Հրապարակչություն

www.mashtoz.org

ԼԵ. *Մարդկային գործունէութեան կանոնակարգը*

Մարդկային գործունէութիւնն ինչպէս ծագում է մարդուց, այնպէս էլ սահմանուած է մարդուն: Մարդն, իրօք, երբ աշխատում է, ո՛չ միայն կերպարանափոխում է նիւթական իրողութիւններն ու հասարակութիւնը, այլ նաեւ կատարելագործում է ինքն իրեն: Շատ բաներ է սովորում, զարգացնում է իր ունակութիւնները, դուրս է գալիս իրենից եւ ինքն իրեն գերազանցում է: Այդ զարգացումը, եթէ լաւ է հասկացւում, աւելին արժէ՝ քան արտաքին հարստութիւնները, որոնք հնարաւոր է կուտակել:

Մարդն արժէ աւելի նրանով՝ ինչ «է», քան նրանով՝ ինչ «ունի»[1]*: Նմանապէս այն ամէնը՝ որ մարդիկ կատարում են մի առաւել արդարութեան, մի առաւել տարածուն եղբայրութեան եւ հասարակական յարաբերութիւններում մի առաւել մարդկային կանոնակարգի հասնելու նպատակով, աւելին արժէ՝ քան ճարտարագիտութեան ասպարէզում գրանցուած զարգացումները: Դրանք, յիրաւի, կարող են հայթայթել մարդկային զարգացումի, այսպէս ասած, նիւթական հիմքը, բայց միայնակ ոչ մի կերպ ի զօրու չեն իրականացնելու այն:*

Ուստի, սա՛ է մարդկային գործունէութեան կանոնը. որ Աստծոյ ծրագրի եւ Նրա կամքի համաձայն, այդ գործունէութիւնը համապատասխանի մարդկութեան իրական բարիքին, եւ որ մարդուն հնարաւորութիւն տայ – մարդը վերցուած որպէս անհատ կամ որպէս հասարակութեան անդամ – խնամելու եւ իրագործելու իր կոչումն ամբողջութեամբ:

ԼԶ. *Երկրային իրականութիւնների օրինաւոր ինքնուրոյնութիւնը*[2]

Մեր ժամանակակիցներից շատերը, սակայն, թւում է թէ երկիւղն ունեն, որ եթէ մարդկային գործունէութեան եւ կրօնի միջեւ կապերը շատ սերտ լինեն, դրանով կը խոչընդոտուի մարդկանց, հասարակութիւնների, գիտութիւնների ինքնուրոյնութիւնը:

Եթէ «երկրային իրականութիւնների ինքնուրոյնութիւն» ասելով հասկանում ենք այն՝ որ ստեղծուած իրականութիւնները եւ ինքնին հասարակութիւնները ունեն սեփական օրէնքներ եւ արժէքներ, որոնք մարդը պէտք է աստիճանաբար բացայայտի, գործածի եւ կանոնակարգի, ուրեմն խօսքը վերաբերւում է մի օրինաւոր պահանջի, որն ո՛չ միայն մեր ժամանակների մարդկանց հայցն է, այլ նաեւ համահունչ է Արարչի կամքին: Յիրաւի, արարած լինելու իրենց վիճակից է ինքնին, որ բոլոր իրականութիւնները ստանում են իրենց սեփական ստուգութիւնը, ճշմարտութիւնը, բարութիւնը, իրենց սեփական օրէնքներն ու իրենց կանոնակարգը: Եւ այդ ամէնը մարդը պարտաւոր է յարգել, ճանաչելով եւ ընդունելով իւրաքանչիւր առանձին գիտութեանը կամ արուեստին բնորոշ մեթոդի պահանջները: Ուստի, որեւիցէ գիտութեան համակարգուած ուսումնասիրութիւնը, եթէ յառաջ է ընթանում իսկապէս գիտական եղանակով եւ բարոյական կանոնների համաձայն, երբեք իրական հակասութեան մէջ չի լինի հաւատքի հետ, քանի որ աշխարհային իրողութիւններն ու հաւատքի իրողութիւնները սկիզբ են առնում միեւնոյն Աստծուց[3]*: Մանաւանդ թէ, ով խոնարհութեամբ ու յարատեւութեամբ ջանք է գործադրում քննելու գոյութիւն ունեցող իրականութիւնների գաղտնիքները, նաեւ առանց դրան գիտակից*

---

[1] *Հմմտ. Պողոս Զ, Սուրբ Աթոռի մօտ հաւատարմագրուած Դեսպանների առաջ ընթերցուած Ճառը,* 7 *Յունուար* 1965: *AAS* 57 (1965), p. 232.

[2] *Ժողովական Հայրերից երկուսն առաջարկել էին այս հատուածում յստակ կերպով յիշատակել Գալիլէոյի դէպքը, որը դարերի ընթացքում մեծապէս ծանրացրել եւ թունաւորել էր յարաբերութիւնները հաւատքի եւ գիտութեան միջեւ: Յանձնախումբը սահմանափակուեց ծանօթագրութեան մէջ յիշատակելով պատմագէտ Փիոյ Փասքինիի յետմահու հրատարակուած երկը, որը ճանաչուած է որպէս մեծ գիտնականի ու հաւատացեալի վերջնական արդարացումը, կատարուած՝ պատմագէտ հոգեւորականի կողմից, որն արդ ստանում է նաեւ Ժողովի հեղինակաւոր վաւերացումը:*

[3] *Հմմտ. Վատիկան. Ա. Ժողով, Դաւ. Սահմ.* *De fide catholica*, Cap. III: *Denz.* 1785-1786 (3004-3005).

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

լինելու՝ կարծես առաջնորդւում է Աստծոյ կողմից, որն ամէն ինչ գոյութեան մէջ պահելով, տալիս է նրանց լինելու այն՝ ինչ որ են: Այս առընչութեամբ թող թոյլատրուի մեզ աւաղել մտային որոշ դիրքորոշումներ – որոնք երբեմն չեն պակասել եւ ո՛չ իսկ քրիստոնեաների միջեւ – որոնք բխում են գիտութեան օրինաւոր ինքնուրոյնութիւնը բաւականաչափ ըմբռնած չլինելուց, եւ որոնք, բանավէճեր ու հակաճառութիւններ յարուցելով, բազմաթիւ հոգիներ են քաշել մինչեւ այն աստիճան, որ նրանք համարել են՝ թէ գիտութիւնն ու հաւատքը հակադրւում են միմեանց[1]*:*

Իսկ եթէ «երկրային իրականութիւնների ինքնուրոյնութիւն» արտայայտութեամբ ոմանք հասկանում են այն՝ որ ստեղծուած իրականութիւնները կախում չունեն Աստծուց եւ որ մարդը կարող է դրանք գործածել առանց դրանք Արարչին վերաբերելու, ապա Աստծուն հաւատացող իւրաքանչիւր հոգու համար ակնյայտ է՝ թէ քանիցս կեղծ ու սխալ են այդ կարծիքները: Արարածն, իրօք, առանց Արարչի անէանում է: Ինչպէս նաեւ, բոլոր նրանք՝ ովքեր հաւատում են, – ի՛նչ կրօնի էլ որ պատկանեն – , արարածների արտայայտչամիջոցներում միշտ ընկալել են Աստծոյ ձայնն ու յայտնութիւնը: Մանաւանդ թէ, Աստծուն մոռանալը ինքնին արարածին է խաւարեցնում:

ԼԷ. *Մարդկային գործունէութիւնն ապականուած է մեղքով*

Աստուածաշունչը, սակայն, որին համաձայնում է դարերի փորձառութիւնը, մարդկանց ուսուցանում է՝ որ մարդկային յառաջընթացը, թէեւ մեծ բարիք է մարդու համար, իր հետ բերում է մի լուրջ փորձութիւն: Իրօք, արժէքների կարգը տակնուվրայ անելով եւ բարուն չարիք խառնելով, անհատներն ու խմբերը հետամուտ են միմիայն սեփական եւ ո՛չ նաեւ ուրիշների շահերին. այսպիսով, աշխարհը դադարում է ջինջ ու մաքուր եղբայրութեան դաշտը հանդիսանալուց, մինչ մարդկային զօրութեան աճը սպառնում է բնաջնջել այլեւս ինքնին ամբողջ մարդկութիւնը:

Մարդկութեան ամբողջ պատմութիւնն, իրօք, համակուած է խաւարի ուժերի դէմ մղուած սոսկալի պայքարով. պայքար, որ սկսուել է աշխարհի սկզբից եւեթ եւ սահմանուած է տեւելու, ինչպէս ասում է Տէրը[2]*, մինչեւ վերջին օրը: Այդ պայքարի մէջ ներգրաւուած լինելով, բարուն միացած մնալու համար մարդը պէտք է առանց դադարի պայքարի եւ իր ներքին միասնականութեանը կարող է հասնել միմիայն ի գին մեծ ջանքերի, Աստծոյ շնորհի օգնութեամբ:*

Այս պատճառով է, որ Քրիստոսի Եկեղեցին, Արարչի նախախնամական ծրագրի նկատմամբ վստահութեամբ, մինչ ընդունում է՝ որ մարդկային յառաջընթացը կարող է ծառայել մարդկանց իրական երջանկութեանը, այդուհանդերձ չի կարող չվերակոչել Առաքեալի խօսքը. «Այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանուէք» (Հռմ 12, 2)*, այսինքն՝ սնապարծութեան ու չարութեան այն ոգով, որը մեղքի գործիքի է վերածում մարդկային աշխատունակութիւնը, որը սահմանուած է Աստծոյ եւ մարդու ծառայութեանը:*

Ուստի, եթէ հարցադրում է կատարւում, թէ ինչպէս կարող է յաղթահարուել այս թշուառ իրավիճակը, քրիստոնեաներն ի պատասխան հաստատում են, որ մարդկային բոլոր գործունէութիւնները, որոնք ամէն օր վտանգի են ենթարկւում գոռոզութեան եւ սեփական անձի նկատմամբ անկարգ սիրոյ կողմից, պէտք է մաքրագործուեն եւ կատարեալ դարձուեն շնորհիւ Քրիստոսի խաչի եւ յարութեան: Քրիստոսի կողմից փրկագործուած եւ Սուրբ Հոգու մէջ նոր արարած դարձած, մարդն, իրօք, կարող է սիրել եւ պէտք է սիրի նաեւ այն ամէնը՝ որ Աստուած ստեղծել է: Աստծուց է ստանում դրանք. դրանք նկատում է որպէս Նրա ձեռքերից ելած եւ յարգում է դրանք: Դրանց համար երախտագիտութիւն է յայտնում Աստուածային Բարերարին եւ, արարածները աղքատութեան ու ազատութեան հոգիով գործածելով ու վայելելով, սկսում է աշխարհի նկատմամբ իրական տիրապետութիւն ունենալ, որպէս մէկը՝

[1] *Հմմտ. Հ. Փիո Փասքինի,* Vita e opere di Galileo Galilei, 2 Lib., Ed. Vat. 1964.

[2] *Հմմտ. Մտթ* 24, 13; 13, 24-30.36-43.

որն ոչինչ չունի եւ ամէն ինչ ունի[1]*. «Ամէն ինչ ձերն է, բայց դուք Քրիստոսինն էք, իսկ Քրիստոսն՝ Աստծունը» (1Կր 3, 22-23):*

ԼԸ. *Մարդկային գործունէութիւնը կատարելութեան աստիճանի է բարձրացուել Զատկական Խորհրդի մէջ*

Աստծոյ Խօսքը, որի միջոցով է ամէն ինչ ստեղծուել, Ինքն իսկ մարմնանալով եւ մարդկանց երկրի վրայ բնակուելու գալով[2]*, աշխարհի պատմութիւնից ներս մտաւ որպէս կատարեալ Մարդ, ստանձնելով եւ Իր մէջ բովանդակելով այն*[3]*: Նա մեզ յայտնում է, «որ Աստուած Սէր է» (1Յվհ 4, 8), եւ միաժամանակ ուսուցանում է մեզ, որ մարդկային կատարելութեան, հետեւաբար նաեւ աշխարհի կերպարանափոխութեան հիմնական օրէնքը սիրոյ նոր պատուիրանն է: Ուստի նրանք՝ ովքեր հաւատում են Աստծոյ սիրոյն, Նրա կողմից ստանում են ապահով վստահութիւնը, որ սիրոյ ճանապարհը բաց է բոլոր մարդկանց առաջ եւ որ համընդհանուր եղբայրութիւնն իրագործելուն ուղղուած ջանքերն ապարդիւն չեն: Նա այսպէս յորդորում է նաեւ սիրոյ ճանապարհով չընթանալ միմիայն մեծդի պարագաներում, այլ նաեւ, եւ յատկապէս, կեանքի սովորական հանգամանքներում:*

Յանձն առնելով մահանալ մեր՝ բոլոր մեղաւորներիս համար[4]*, Նա Իր օրինակով ուսուցանում է մեզ, որ հարկաւոր է նաեւ կրել խաչը, որը մարմնի եւ աշխարհի կողմից դրւում է նրանց ուսերին, ովքեր փնտռում են խաղաղութիւնն ու արդարութիւնը: Իր յարութեամբ հաստատուելով Տէր, Նա՝ Քրիստոսը, որին տրուել է ամէն իշխանութիւն երկնքում եւ երկրի վրայ*[5]*, մարդկանց սրտերում այժմ գործում է Իր Հոգու զօրութեամբ. ո՛չ միայն արծարծում է ապագայ աշխարհի փափաքը, այլ դրանով իսկ նաեւ ներշնչում, մաքրագործում եւ հզօրացնում է այն վեհանձն առաջադրութիւնները, որոնցով մարդկանց ընտանիքն աշխատում է առաւել մարդկային դարձնել սեփական կեանքը եւ այդ նպատակին ենթարկել ամբողջ երկիրը:*

Բայց Հոգու պարգեւները տարբեր են. ոմանց կանչում է երկնային օթեւանի փափաքին բացայայտ վկայութիւն տալու, այսպիսով նպաստելով մարդկութեան մէջ այն միշտ վառ պահելուն. ուրիշների կանչում է մարդկանց ծառայութեանը նուիրուելու երկրի վրայ, այնպէս՝ որ նրանց այդ ծառայութեան միջոցով կարծես նիւթը պատրաստուի Երկնքի Արքայութեան համար: Բոլորին, սակայն, դարձնում է ազատ մարդիկ, քանի որ եսապաշտութեան ժխտմամբ եւ երկրային բոլոր ուժերը դէպի մարդկային կեանքն ուղղելով՝ նրանք մղւում են դէպի ապագան, երբ մարդկութիւնն ինքնին դառնալու է Աստծուն ընդունելի ընծայ[6]*:*

Որպէս այս յոյսի գրաւական եւ ճամփորդութեան ընթացքում սնունդ, Տէրն իրեններին պարգեւել է հաւատքի այն Խորհուրդը, որում մարդու կողմից մշակուած բնական տարրեր այլափոխւում են Նրա փառաւոր Մարմնին ու Արեանը, եղբայրական հաղորդութեան մի հացկերոյթում, որն երկնային խնջոյքի նախաճաշակն է:

ԼԹ. *Նոր երկիր եւ նոր երկինք*

Անգիտանում ենք ժամանակը, երբ երկիրն ու մարդկութիւնը հասնելու են իրենց վախճանին[7]*, եւ չգիտենք՝ թէ ինչ կերպով է կերպարանափոխուելու տիեզերքը: Ստոյգ է, որ*

---

[1] *Հմմտ.* 2*Կր* 6, 10.

[2] *Հմմտ. Յվհ* 1, 3 *եւ* 14.

[3] *Հմմտ. Եփս* 1, 10.

[4] *Հմմտ. Յվհ* 3, 6; *Հռմ* 5, 8-10.

[5] *Հմմտ. Գրծ* 2, 36; *Մտթ* 28, 18.

[6] *Հմմտ. Հռմ* 15, 16.

[7] *Հմմտ. Գրծ* 1, 7.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

անցնում է մեղքով խաթարուած այս աշխարհի կերպարանքը[1]: Գիտենք սակայն Յայտնութիւնից, որ Աստուած պատրաստում է մի նոր բնակավայր եւ մի նոր երկիր, ուր բնակւում է արդարութիւնը[2], եւ որի երջանկութիւնը գերառատօրէն յագեցնելու է խաղաղութեան բոլոր փափաքները, որ ծնւում են մարդկանց սրտերում[3]: Յայնժամ, մահը պարտութեան մատնուած, Աստծոյ որդիները յարութիւն են առնելու ի Քրիստոս, եւ այն՝ ինչ սերմանուել է հիւանդութեան ու ապականութեան մէջ, զգեստաւորուելու է անապականութեամբ[4]. մնալու է սէրն իր պտուղներով[5], եւ ունայնութեան ծառայութիւնից ազատուելու է այն ամբողջ արարչագործութիւնը[6], որն Աստուած ստեղծել է հէնց մարդու համար:

Անշուշտ, զգուշացուած ենք՝ որ ոչ մի օգուտ չունի մարդու համար, եթէ շահում է ամբողջ աշխարհը, բայց կորցնում է ինքն իրեն[7]: Նոր երկրի սպասումը, սակայն, չպէտք է թուլացնի, այլ ընդհակառակն՝ պէտք է խթանի ներկայ երկրին վերաբերուող աշխատանքի մէջ եռանդին ու հոգածութեանը, քանի որ ներկայ երկրի վրայ է աճում նոր մարդկութեան այն մարմինը, որն արդէն իսկ կարողանում է ընծայել մի որոշակի նախապատկերում, որն ուրուագծում է նոր աշխարհը: Ուստի, թէեւ հարկաւոր է ուշադիր ճշգրտութեամբ զանազանել երկրային զարգացումը Քրիստոսի Արքայութեան ծաւալումից, այսու հանդերձ, այն չափով՝ որքանով կարող է լաւագոյնս նպաստել կարգաւորելու մարդկային հասարակութիւնը, այդ զարգացումը մեծ կարեւորութիւն ունի Աստծոյ Արքայութեան համար[8]:

Եւ իրօք, այն արժէքները, ինչպիսիք են մարդու արժանապատուութիւնը, եղբայրական հաղորդութիւնը եւ ազատութիւնը, եւ, այսինքն, բնութեան եւ մեր գործունէութեան բոլոր բարի պտուղները, այն բանից յետոյ՝ ինչ Տիրոջ Հոգիով եւ Իր պատուիրանի համաձայն սփռած կը լինենք դրանք երկրի վրայ, յետոյ կրկին վերագտնելու ենք դրանք, բայց որեւէ բծից ու արատից մաքրագործուած, լուսաւորուած ու այլակերպուած, երբ Քրիստոսն Հօրը կը յանձնի «յաւիտենական եւ տիեզերական Արքայութիւնը. Արքայութիւն ճշմարտութեան եւ կեանքի, Արքայութիւն սրբութեան եւ շնորհի, Արքայութիւն արդարութեան, սիրոյ ու խաղաղութեան»[9]: Այստեղ՝ երկրի վրայ, Արքայութիւնն արդէն ներկայ է, խորհրդի ներքոյ. բայց Տիրոջ գալստեամբ հասնելու է իր կատարելութեանը:

ԳԼՈՒԽ Դ.

ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Խ. Եկեղեցու եւ աշխարհի միջեւ փոխադարձ յարաբերութիւնները

Այն ամէնն՝ ինչ ասացինք մարդկային անձի արժանապատուութեան, մարդկային հասարակութեան, մարդկային գործունէութեան խորին իմաստի ու նշանակութեան վերաբերեալ, կազմում է Եկեղեցու եւ աշխարհի միջեւ յարաբերութիւնների, ինչպէս նաեւ

---

[1] Հմմտ. 1Կր 7, 31; Սբ. Երանոս, *Adversus Haereses*, V, 36: *PG* 8, 1221.

[2] Հմմտ. 2Կր 5, 2; 2Պտ 3, 13.

[3] Հմմտ. 1Կր 2, 9; Յյտ 21, 4-5.

[4] Հմմտ. 1Կր 15, 42 եւ 53.

[5] Հմմտ. 1Կր 13, 8; 3, 14.

[6] Հմմտ. Հռմ 8, 19-21.

[7] Հմմտ. Ղկս 9, 25.

[8] Հմմտ. Փիո ԺԱ, Կոնդակ *Quadragesimo anno*: *AAS* 23 (1931), p. 207.

[9] Հռոմէական Պատարագամատոյց, «Քրիստոս Թագաւոր» տօնի Ժամամուտ:

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

նրանց միջեւ երկխօսութեան հիմքը[1]: Ուստի այս գլխում, նախադրելով այն ամէնն՝ ինչ Ժողովն արդէն ուսուցանել է Եկեղեցու խորհրդի վերաբերեալ, կրկին քննարկման է վերցնում միեւնոյն Եկեղեցին, աշխարհում գտնուելու եւ նրա հետ ապրելու ու գործելու տեսանկիւնից դիտուած:

Եկեղեցին, յաւիտենական Հօր սիրուց բխելով[2], ժամանակի մէջ Քրիստոս Փրկչի կողմից հիմնուած, Սուրբ Հոգու մէջ համախմբուած[3], ունի փրկագործական եւ վախճանաբանական սահմանում, որին լիակատար կերպով հնարաւոր է հասնել միմիայն գալիք աշխարհում: Բայց այն արդէն ներկայ է այստեղ՝ երկրի վրայ, եւ կազմուած է մարդկանցից, որոնք արդարեւ անդամ են երկրային քաղաքին, կանչուած՝ մարդկութեան պատմութեան ներսում արդէն կազմելու Աստծոյ որդիների ընտանիքը, որը պէտք է յարատեւ կերպով աճի մինչեւ Տիրոջ գալուստը: Երկնային բարիքների հեռանկարով միաւորուած եւ դրանցով հարստացած, այդ ընտանիքը Քրիստոսի կողմից «հաստատուեց ու կարգաւորուեց որպէս հասարակութիւն այս աշխարհում»[4] եւ օժտուեց «միջոցներով, որոնք ի զօրու են ապահովելու իր տեսանելի եւ հասարակական միութիւնը»[5]: Ուստի Եկեղեցին, որը միաժամանակ «տեսանելի ընկերակցութիւն է եւ հոգեւոր հասարակութիւն»[6], քայլում է ամբողջ մարդկութեան հետ միասին եւ աշխարհի հետ միասին ապրում է երկրային միեւնոյն վիճակը. Եկեղեցին մարդկային հասարակութեան կարծես խմորիչն է եւ գրեթէ հոգին[7], սահմանուած՝ վերանորոգուելու ի Քրիստոս եւ վերափոխուելու Աստծոյ ընտանիքին:

Երկրային քաղաքի եւ երկնային քաղաքի այսօրինակ փոխադարձ ներթափանցումը կարող է ընկալուել անշուշտ հաւատքի միջոցով միայն. մանաւանդ թէ, մնում է մարդկային պատմութեան խորհուրդը, որը խռովքի է մատնուած մեղքի կողմից, մինչեւ Աստծոյ որդիների փառքի լիակատար յայտնութիւնը: Բայց Եկեղեցին, հետապնդելով փրկագործական իր իւրայատուկ սահմանումը, ո՛չ միայն հաղորդում է մարդուն աստուածային կեանքը, այլ ամբողջ աշխարհի վրայ որոշակի կերպով տարածում է նաեւ, անդրադարձումով, լոյսը, որն այդ աստուածային կեանքը շողարձակում է, եւ դա անում է յատկապէս նրանով, որ բարւոքում եւ վերամբարձում է մարդկային անձի արժանապատուութիւնը, ամրապնդում է մարդկային հասարակութեան ներսում միմեանց միջեւ սերտօրէն կապուած զանազան մասերի միութիւնը, եւ մարդկանց ամէնօրեայ աշխատանքին տալիս է մի առաւել խոր իմաստ ու նշանակութիւն: Այդպիսով Եկեղեցին, իր անհատ անդամներով եւ իր ամբողջական հասարակութեամբ, կարծում է՝ որ կարող է մեծապէս նպաստել մարդկանց ընտանիքը եւ նրա պատմութիւնը առաւել մարդկային դարձնելու գործին:

Ինչպէս նաեւ, Կաթողիկէ Եկեղեցին սիրայօժար կերպով մեծապէս գնահատում է նպաստը, որն այդ միեւնոյն նպատակի իրագործման համար տուել եւ տալիս են, միասին համագործակցելով, միւս Եկեղեցիներն ու եկեղեցային համայնքները:

Միաժամանակ նաեւ համոզուած է, որ Աւետարանի ճանապարհները պատրաստելու համար՝ աշխարհն իրեն զանազան եղանակներով կարող է արժէքաւոր օգնութիւն ընծայել, լինի՛ անհատների, լինի՛ հասարակութեան մակարդակով, նրանց ձիրքերի եւ գործունէութեան շնորհիւ: Այդ փոխադարձ փոխանակումն ու օգնութիւնը պատշաճ կերպով խթանելու նպատակով, այն ասպարէզներում՝ որոնք Եկեղեցու եւ աշխարհի միջեւ որոշակի կերպով ընդհանուր են, այստեղ ներկայացւում են մի քանի ընդհանուր սկզբունքներ:

---

[1] Հմմտ. Պողոս Զ, Կոնդակ *Ecclesiam suam*, III: *AAS* 56 (1964), pp. 637-659.

[2] Հմմտ. Տիտ 3, 4. «մարդասիրութիւն»:

[3] Հմմտ. Եփս 1, 3; 5-6; 13-14; 23.

[4] Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ. *Lumen Gentium*, Ա 8: *AAS* 57 (1965), p. 12.

[5] Նոյն, Բ 9: *AAS* 57 (1965), p. 14; Հմմտ. թիւ 8: *AAS* 57 (1965), p. 11.

[6] Նոյն, Ա 8: *AAS* 57 (1965), p. 11.

[7] Հմմտ. Նոյն, Դ 38: *AAS* 57 (1965), p. 43.

© «Ընդհանրական» Հրապարակչություն
www.mashtoz.org

ԽԱ. *Օգնությունը, որը Եկեղեցին մտադիր է ընծայել անհատներին*

Այսօրուայ մարդն ընթանում է իր անհատականութեան առաւել լիակատար զարգացման եւ սեփական իրաւունքների աստիճանական բացայայտման ու հաստատման ճանապարհով: Եկեղեցին, քանի որ ստացել է Աստծոյ խորհուրդը ցուցաբերելու առաքելութիւնը, Աստծոյ՝ որը մարդու վերջին նպատակակէտն է, միաժամանակ մարդուն յայտնում է նաեւ նրա սեփական գոյութեան իմաստը, այսինքն՝ մարդու վերաբերեալ խորին ճշմարտութիւնը: Եկեղեցին քաջ գիտէ, որ միմիայն Աստուած, որի ծառայութեանն է ինքը նուիրուած, պատասխանում է մարդկային սրտի ամենախորին փափաքներին, մինչ մարդկային սիրտը երկրային տարրերով երբեք չի կարող լիովին յագենալ: Գիտէ նաեւ, որ մարդը, Աստծոյ Հոգու կողմից շարունակաբար դրդուած, երբեք չի կարող ամբողջովին անտարբեր մնալ կրօնական խնդրի դիմաց, ինչպէս ցոյց են տալիս ո՛չ միայն անցեալ դարերի փորձառութիւնը, այլ նաեւ մեր ժամանակներին պատկանող բազմաթիւ ու բազմատեսակ վկայութիւնները: Մարդն, իրօք, միշտ էլ փափաքելու է իմանալ, գէթ մթին ու անորոշ կերպով, թէ ո՛րն է իր կեանքի, իր գործունէութեան եւ իր մահուան իմաստը: Եւ Եկեղեցին, պարզապէս աշխարհում իր ներկայութեամբ միայն, մարդուն մտաբերել է տալիս այս խնդիրները: Բայց միմիայն Աստուած, որ ստեղծել է մարդուն Իր պատկերի համաձայն եւ որ փրկել է նրան մեղքից, կարող է լիովին պատշաճ պատասխան ընծայել այդ խնդիրներին, եւ դա անում է Յայտնութեան միջոցով, որն ի կատար է ածուել յանձինս Քրիստոսի՝ Իր մարդացեալ Որդու: Իւրաքանչիւր ոք, որ հետեւում է Քրիստոսին, կատարեալ մարդուն, ինքը նոյնպէս աւելի մարդ է դառնում:

Այս հաւատքից մեկնելով, Եկեղեցին կարող է մարդկային բնութեան արժանապատուութիւնը ազատել բոլոր կարծիքների ու ենթադրութիւնների անորոշ ծփանքից, որոնք, օրինակի համար, կա՛մ չափազանց ստորացնում են մարդկային մարմինը, կա՛մ չափազանց պանծացնում են այն: Մարդկային ոչ մի օրէնք ի զօրու չէ ապահովելու մարդու անձնական արժանապատուութիւնն ու ազատութիւնը, այնքան՝ որքան Քրիստոսի Աւետարանը, որ վստահուել ու յանձնուել է Եկեղեցուն: Այդ Աւետարանն, իրօք, աւետում եւ հռչակում է Աստծոյ որդիների ազատութիւնը. մերժում է ստրկութեան որեւէ դրսեւորում, որը, վերջնական վերլուծմամբ, ծագում է մեղքից[1]. որպէս սրբազան իրականութիւն պատւում է խղճի արժանապատուութիւնը եւ նրա ազատ վճիռները. անդադար յորդորում է կրկնապատկելու մարդկային բոլոր ձիրքերն Աստծոյ ծառայութեան եւ մարդկանց բարիքի համար. ի վերջոյ, բոլորին յանձնարարում է սիրելու բոլորին[2]: Ինչը որ համապատասխանում է քրիստոնէական տնօրինութեան հիմնական օրէնքին: Թէեւ, յիրաւի, Փրկիչ Աստուածը եւ Արարիչ Աստուածը միշտ միեւնոյն Աստուածն են, եւ այդպէս նոյնանում են նաեւ մարդկային պատմութեան Տէրը եւ փրկութեան պատմութեան Տէրը, այսու հանդերձ, այս միեւնոյն աստուածային կարգում, արարածի, յատկապէս մարդու, արդարացի ինքնուրոյնութիւնը, ջնջուելուց ու դադարեցուելուց հեռու, ընդհակառակն՝ վերադարձւում է իր արժանապատուութեանը եւ դրանում ամրապնդւում է:

Ուստի Եկեղեցին, իրեն վստահուած Աւետարանի զօրութեամբ, հռչակում է մարդկային իրաւունքները եւ ընդունում ու մեծապէս գնահատում է այն կորովի շարժումը, որով մեր օրերում այդ իրաւունքներն ամէնուր խթանւում են: Այս շարժումը, սակայն, պէտք է թաթախուած լինի Աւետարանի ոգիով եւ պէտք է պաշտպանուած լինի որեւէ տեսակի կեղծ ինքնուրոյնութեան դէմ: Յիրաւի, ենթակայ ենք մտածելու փորձութեանը, թէ մեր անձնական իրաւունքները լիովին ապահովւում են միայն այն դէպքում, երբ ազատւում ենք աստուածային օրէնքի բոլոր կանոններից: Բայց այս ճանապարհով ընթանալով, մարդկային անձի արժանապատուութիւնը ո՛չ թէ ապահովւում, այլ ընդհակառակն՝ տուժում է:

---

[1] *Հմմտ. Հռմ* 8, 14-17.

[2] *Հմմտ. Մտթ* 22, 39.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

ԽԲ. *Օգնությունը, որը Եկեղեցին մտադիր է ընծայել մարդկային հասարակությանը*

Մարդկային ընտանիքի միությունը մեծապէս ամրապնդւում եւ ամբողջացւում է Աստծոյ որդիների ընտանիքի միութեան կողմից, ընտանիք՝ որն հիմնուած է Քրիստոսի վրայ[1]*: Անշուշտ, բուն առաքելութիւնը, որը Քրիստոս յանձնել է Իր Եկեղեցուն, քաղաքական, տնտեսական կամ հասարակական կարգի չէ. նպատակակէտն, իրօք, որ սահմանել է նրա առաջ, կրօնական կարգի է*[2]*: Եւ սակայն, հէնց այս կրօնական առաքելութիւնից բխում են պարտականութիւններ, լոյսեր եւ ուժեր, որոնք կարող են նպաստել կառուցելու եւ ամրապնդելու մարդկանց հասարակութիւնը աստուածային օրէնքի համաձայն: Այսպէս նաեւ, ուր զգացուի դրա անհրաժեշտութիւնը, ըստ ժամանակների ու վայրերի պարագաների, Եկեղեցին նոյնպէս կարող է, մանաւանդ թէ՝ պարտաւոր է, ծնունդ տալ գործերի՝ որոնք սահմանուած են ծառայելու բոլորին, բայց յատկապէս՝ կարիքաւորներին, ինչպէս, օրինակի համար, ողորմութեան գործերն ու նմանատիպները:*

Ինչպէս նաեւ, Եկեղեցին ճանաչում է այն բոլոր բարի իրականութիւնները՝ որոնք ներկայ են ժամանակակից հասարակական շարժման մէջ, յատկապէս՝ միութեանը ձգտող շարժման, ողջամիտ հասարակականացման եւ քաղաքական ու տնտեսական համերաշխութեան զարգացման մէջ: Միութեան խթանումն իրօք համապատասխանում է Եկեղեցու ինքնայատուկ առաքելութեանը, Եկեղեցու՝ որն յիրաւի «Քրիստոսի մէջ է գրեթէ որպէս խորհուրդ, այսինքն՝ որպէս Աստծոյ հետ սերտ միաւորումի եւ մարդկային ամբողջ զարմի միութեան նշան եւ գործիք»[3]*: Այսպիսով նա աշխարհին ցոյց է տալիս, որ իրական հասարակական արտաքին միութիւնը ծնւում է մտքերի եւ սրտերի միութիւնից, այսինքն՝ այն հաւատքից եւ այն սիրուց, որոնցով իր միութիւնն անքակտելիօրէն հիմնուել է Սուրբ Հոգու մէջ: Յիրաւի, ուժը՝ որը Եկեղեցին կարողանում է ներարկել մարդկային ժամանակակից հասարակութեան մէջ, կայանում է գործնականապէս ապրուած այդ հաւատքի եւ սիրոյ, եւ ո՛չ թէ արտաքին, սոսկ մարդկային միջոցներով կիրարկուած ինչ որ մի գերիշխանութեան մէջ:*

Ինչպէս նաեւ, քանի որ իր առաքելութեան եւ իր էութեան զօրութեամբ իսկ կապուած չէ մարդկային մշակոյթի ինչ որ մի մասնաւոր կերպի կամ քաղաքական, տնտեսական կամ հասարակական ինչ որ մի կարգի, Եկեղեցին իր այս ընդհանրականութեան շնորհիւ կարող է սերտագոյն կապ հանդիսանալ մարդկային տարբեր հասարակութիւնների եւ ազգերի միջեւ, միայն թէ նրանք վստահեն իրեն եւ գործնականապէս ճանաչեն եւ տան իրեն իրական ազատութիւն իր առաքելութեան կատարման համար:

Այս պատճառով Եկեղեցին յորդորում է իր որդիներին, ինչպէս նաեւ՝ բոլոր մարդկանց, Աստծոյ որդիներին բնորոշ այս ընտանեկան ոգիով յաղթահարելու ազգերի եւ ցեղախմբերի միջեւ գոյութիւն ունեցող որեւէ տարաձայնութիւն, եւ ներքուստ ամրապնդել մարդկային օրինաւոր ընկերակցութիւնները:

Ժողովն, հետեւաբար, մեծ յարգանքով է ի նկատի առնում այն ամէնը՝ ինչը ճշմարիտ, բարի եւ արդար է այն հաստատութիւններում, որոնք, միմեանցից այսքա՜ն տարբեր լինելով հանդերձ, մարդկութիւնն իր համար ստեղծել է եւ շարունակում է ստեղծել: Ինչպէս նաեւ ծանուցում է, որ Եկեղեցին կամենում է օգնել եւ նպաստել բոլոր այդ հաստատութիւններին, որքանով դա կախումնաւոր է իրենից եւ հաշտ ու համաձայն է իր առաքելութեան հետ:

---

[1] *Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ.* Lumen Gentium, Բ 9: *AAS* 57 (1965), p. 12-14.

[2] *Հմմտ. Փիո ԺԲ, Պատմագէտների ու արուեստագէտների առաջ ընթերցուած ճառը,* 9 *Մարտ* 1956: *AAS* 48 (1956), p. 212: *«Իր Աստուածային Հիմնադիրը՝ Յիսուս Քրիստոսը, մշակութային կարգի ոչ մի հրահանգ չի տուել, ո՛չ էլ նմանատիպ նպատակակէտ է հաստատել: Նպատակը, որը Քրիստոս Ինքը սահմանել է, սերտօրէն կրօնական է (...): Եկեղեցին պէտք է մարդկանց առաջնորդի դէպի Աստուած, որպէսզի նրանք անվերապահօրէն յանձնուեն Նրան (...): Եկեղեցին երբեք չի կարող իր տեսադաշտից կորցնել այդ սերտօրէն կրօնական, գերբնական նպատակակէտը: Եկեղեցու ամբողջ գործունէութեան, ինչպէս նաեւ նրա Կանոնագրքի իւրաքանչիւր կանոնի խմաստը չի կարող ա՛յլ բան լինել, եթէ ոչ միայն՝ այդ նպատակի գործադրմանը ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն նպաստելը»:*

[3] *Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ.* Lumen Gentium, Ա 1: *AAS* 57 (1965), p. 5.

Ոչինչ Եկեղեցուն այնքան հոգեհարազատ չէ, որքան բոլորի բարիքին ծառայելը եւ կարողանալը ազատօրէն տարածուել ու զարգանալ որեւէ վարչակարգի ներքոյ, որը յարգում է անձի ու ընտանիքի հիմնական իրաւունքները եւ ճանաչում ու ընդունում է հասարակաց բարիքի պահանջները:

ԽԳ. Օգնութիւնը, որը Եկեղեցին մտադիր է ընծայել մարդկային գործունէութեանը քրիստոնեաների միջոցով

Ժողովն յորդորում է քրիստոնեաներին, որոնք քաղաքացիներն են ե՛ւ մէկ ե՛ւ միւս քաղաքների, ջանալ հաւատարմօրէն կատարել իրենց երկրային պարտականութիւնները, Աւետարանի հոգիով առաջնորդուելով: Սխալւում են նրանք՝ ովքեր, գիտենալով՝ որ մենք այստեղ հաստատուն բնակութիւն չունենք, այլ ձգտում ենք ապագայ օթեւաններին[1], կարծում են՝ թէ այս պատճառով իսկ կարող են անտեսել իրենց երկրային պարտականութիւնները եւ չեն մտածում, որ ընդհակառակն՝ ինքնին հաւատքը է՛լ աւելի է պարտաւորեցնում իրենց կատարելու դրանք, իւրաքանչիւրի կոչման համաձայն[2]: Իրենց հերթին, սակայն, նուազ սխալ չեն նրանք՝ ովքեր կարծում են, թէ կարող են այն աստիճան ընկղմուել երկրային գործերի մէջ, կարծես դրանք ամբողջովին դուրս են կրօնական կեանքի ծիրից, որը կայանում է, իրենց կարծիքով, բացառաբար պաշտամունքային արարքների եւ բարոյական մի քանի պարտաւորութիւնների մէջ: Տարանջատումը, որ նկատւում է շատերի մօտ, իրենց դաւանած հաւատքի եւ իրենց ամէնօրեայ կեանքի միջեւ, դասւում է մեր ժամանակների ամենածանր սխալների թուին: Այս գայթակղութեան դէմ Հին Կտակարանում արդէն իրենց սաստիկ յանդիմանութիւններն էին բարձրացնում Մարգարէները[3], իսկ աւելի՝ Յիսուս Քրիստոս Ինքը, Նոր Կտակարանում, սպառնում էր ծանր պատուհասներ[4]: Հետեւաբար, արհեստական հակադրութիւն չպէտք է ստեղծուի մի կողմից մասնագիտական գործունէութիւնների, իսկ միւս կողմից՝ կրօնական կեանքի միջեւ: Քրիստոնեան, որն անհոգութեան է մատնում իր երկրային յանձնառութիւնները, անհոգութեան է մատնում իր պարտաւորութիւնները մերձաւորի, մանաւանդ թէ՝ Ինքնին Աստծոյ նկատմամբ, եւ վտանգի տակ է դնում իր իսկ յաւիտենական փրկութիւնը: Ընդհակառակն, հետեւելով Քրիստոսի օրինակին, որն արհեստաւոր էր, քրիստոնեաները պէտք է ուրախանան, երբ կարողանում են իրենց երկրային բոլոր գործերը վարել՝ կենսական մէկ միակ համադրութեան մէջ միաւորելով մարդկային, ընտանեկան, մասնագիտական, գիտական ու արհեստագիտական ջանքերը կրօնական բարիքների հետ միասին, որոնց բարձրագոյն առաջնորդութեան ներքոյ՝ այդ ամբողջութիւնը համակարգւում է ի փառս Աստծոյ:

Աշխարհականներին են վերաբերւում – իրենց յատուկ, բայց ո՛չ բացառիկ կերպով – երկրային յանձնառութիւններն ու գործունէութիւնները: Երբ նրանք, հետեւաբար, գործում են որպէս աշխարհի քաղաքացիներ, լինի անհատաբար՝ թէ խմբակային կերպով, ո՛չ միայն յարգելու են իւրաքանչիւր ասպարէզին յատուկ օրէնքները, այլ ջանալու են ձեռքբերել իրական փորձառու հմտութիւն այդ ասպարէզներում: Իրենց համագործակցութիւնը յօժարութեամբ ընծայելու են բոլոր նրանց՝ ովքեր ձգտում են միեւնոյն նպատակակէտին: Հաւատքի պահանջների նկատմամբ յարգանքով եւ նրա զօրութեամբ լեցուն, ուր հարկաւոր է՝ պէտք է անդադար նոր նախաձեռնութիւններ ծրագրեն եւ հետամուտ լինեն դրանց իրականացմանը: Նրանց պատշաճ կերպով նախապէս ձեւաւորուած խղճի գործն է աստուածային օրէնքն արձանագրել երկրային քաղաքի կեանքում: Քահանաներից աշխարհականները պէտք է ակնկալեն լոյս եւ հոգեւոր ուժ: Չպէտք է սակայն կարծեն, թէ իրենց հովիւները մշտապէս փորձառու են այն աստիճան, որ յառաջ եկող իւրաքանչիւր նոր խնդրի, նաեւ ծանրակշիռներին, կարող են պատրաստի յստակ լուծումներ առաջարկել, կամ՝

[1] Հմմտ. Երր 13, 14.

[2] Հմմտ. 2Թսղ 3, 6-13; Եփս 4, 28.

[3] Հմմտ. Ես 58, 1-12.

[4] Հմմտ. Մտթ 23, 3-23; Մրկ 7, 10-13.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

թէ հէնց սրան է նրանց կանչում իրենց առաքելութիւնը: Մինչդեռ ընդհակառակն, պէտք է ստանձնեն իրենց պատասխանատուութիւնները, քրիստոնէական իմաստութեան լոյսի ներքոյ եւ յարգալիր ուշադրութիւն դարձնելով Վարդապետութեան կողմից տրուող ուսուցումներին[1]:

Ամէն ինչից աւելի, կեանքի քրիստոնէական աշխարհայեացքն է ինքնին, որ որոշակի պարագաներում նրանց կը կողմնորոշի որոշակի լուծումների հանգելու: Ուրիշ հաւատացեալներ, սակայն, ո՛չ սակաւ անկեղծութեամբ կարող են տարբեր կարծիք յայտնել միեւնոյն խնդրի վերաբերեալ, ինչպէս պատահում է բաւականին յաճախ եւ օրինաւոր կերպով: Քանի որ մէկ կամ միւս կողմից առաջարկուած լուծումները, նաեւ կողմերի դիտաւորութիւններից անդին, շատերի կողմից հեշտօրէն կապակցւում են աւետարանական պատգամի հետ, այդպիսի դէպքերում նրանք պէտք է յիշեն՝ որ ոչ ոք իրաւունք չունի բացառաբար իր կարծիքին ի նպաստ պահանջել Եկեղեցու հեղինակութիւնը: Ընդհակառակն, միշտ պէտք է ջանան անկեղծ երկխօսութեամբ փոխադարձաբար լուսաւորել միմեանց, միշտ պահպանելով փոխադարձ սէրը եւ առաջին հերթին համընդհանուր բարիքի նկատմամբ հոգատարութիւն ունենալով:

Այն աշխարհականները, որոնք գործնական պատասխանատուութիւններ ունեն Եկեղեցու ամբողջ կեանքի ներսում, ո՛չ միայն պարտաւոր են ապահովել աշխարհի ոգեւորումը քրիստոնէական հոգիով, այլ կանչուած են նաեւ Քրիստոսի վկաները լինելու որեւէ պարագայում, այսինքն՝ նաեւ մարդկային հասարակութեան ներսում:

Եպիսկոպոսները, մինչդեռ, որոնց է յանձնուել Աստծոյ Եկեղեցին առաջնորդելու պաշտօնը, իրենց քահանաների հետ միասին պէտք է այնպէս քարոզեն Քրիստոսի պատգամը, որ հաւատացեալների երկրային բոլոր գործունէութիւնները ներթափանցուած լինեն Աւետարանի լոյսով: Ինչպէս նաեւ, բոլոր հովիւները պէտք է յիշեն, որ իրենց ամէնօրեայ վարքով ու եռանդով[2] իրենք աշխարհի դիմաց ցոյց են տալիս Եկեղեցու մի պատկեր, որի հիման վրայ մարդիկ կարծիք են կազմում քրիստոնէական պատգամի արդիւնաւորութեան ու ճշմարտացիութեան վերաբերեալ: Կեանքով եւ խօսքով, կրօնաւորների եւ հաւատացեալների հետ միասին, նրանք պէտք է ցոյց տան, որ Եկեղեցին սոսկ իր ներկայութեամբ արդէն, այն բոլոր պարգեւներով՝ որ պարունակում է, անսպառ աղբիւրն է այն ուժերի, որոնց բացարձակ կարիքն ունի արդի աշխարհը: Մշտաջան ուսումով պէտք է ընդունակ դառնան ստանձնելու իրենց պատասխանատուութիւնները աշխարհի եւ որեւէ կարծիքի տէր մարդկանց հետ երկխօսութեան մէջ: Ամէն ինչից վեր, սակայն, պէտք է իրենց մտքում ունենան այս Ժողովի խօսքերը. «Քանի որ մարդկութիւնն այսօր միշտ աւելի է կազմակերպւում քաղաքական, տնտեսական եւ հասարակական միութեան մէջ, նոյնքան առաւել հարկաւոր է՝ որ քահանաները, ջանքերն ու միջոցները միաւորելով Եպիսկոպոսների եւ Սրբազան Քահանայապետի առաջնորդութեան ներքոյ, ջնջեն ուժերի սպառում առաջացնող տարացրումի որեւէ պատճառ, որպէսզի մարդկային ամբողջ զարմը վերստին առաջնորդուի Աստծոյ ընտանիքի միութեանը»[3]:

Թէեւ Եկեղեցին, Սուրբ Հոգու զօրութեամբ, մնացել է իր Տիրոջ հաւատարիմ հարսը եւ երբեք չի դադարել աշխարհում փրկութեան նշան լինելուց, այսուհանդերձ նա բոլորովին էլ չի անգիտանում, որ իր լինի՛ կղերական թէ՛ աշխարհական անդամների մէջ[4] անցեալ դարերի երկարաձիգ ընթացքում չեն պակասել այնպիսիք, որ հաւատարիմ չեն եղել Աստծոյ Հոգուն: Եւ մեր օրերում նոյնպէս Եկեղեցին քաջ գիտէ՝ թէ միմեանցից որքան հեռակայ են իր կրած պատգամը եւ մարդկային տկարութիւնը նրանց՝ որոնց յանձնուած է Աւետարանը: Ինչպիսին էլ որ լինի դատաստանը, որ պատմութիւնը կայացնում է այդպիսի թերութիւնների վերաբերեալ, մենք պէտք է գիտակից լինենք դրանց եւ ուժգին ու քաջաբար պայքարենք դրանց դէմ, որպէսզի դրանց պատճառով վնաս չկրի Աւետարանի տարածումը: Նմանապէս,

[1] *Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Mater et Magistra, IV: *AAS* 53 (1961), pp. 456-457; *հմմտ. նոյն,* I: *AAS* 53 (1961), pp. 407, 410-411.

[2] *Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ.* Lumen Gentium, Գ 28: *AAS* 57 (1965), p. 35.

[3] *Նոյն,* Գ 28: *AAS* 57 (1965), p. 35-36.

[4] *Հմմտ. Սբ. Ամբրոսիոս,* De virginitate, VIII, 48: *PL* 16, 278.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

Եկեղեցին քաջ գիտէ նաեւ, թէ որքան պէտք է շարունակաբար հասունանայ՝ ուսանելով դարերի փորձառութիւնից, այն կերպի վերաբերեալ՝ թէ ինչպէս պէտք է իրականացնի իր յարաբերութիւններն աշխարհի հետ: Սուրբ Հոգու կողմից առաջնորդուելով, Մայր Եկեղեցին չի դադարելու «յորդորել իր զաւակներին մաքրագործուելու եւ վերանորոգուելու, որպէսզի Քրիստոսի նշանը է՛լ առաւել պայծառօրէն փայլի Եկեղեցու դէմքին»[1]:

ԽԴ. Օգնութիւնը, որը Եկեղեցին ստանում է ժամանակակից աշխարհից

Ինչպէս աշխարհի համար կարեւոր է, որ Եկեղեցուն ճանաչի եւ ընդունի որպէս պատմութեան հասարակական իրականութիւն եւ նրա խմորիչը, այսպէս նաեւ Եկեղեցին չի անգիտանում՝ թէ որքան է ստացել մարդկային զարմի պատմութիւնից ու յեղաշրջումից:

Անցեալ դարերի փորձառութիւնը, գիտութեան զարգացումը, մարդկային մշակոյթի զանազան կերպերի ներքոյ թաքնուած գանձերը, որոնց միջոցով առաւել լիակատար կերպով բացայայտւում է ինքնին մարդու բնութիւնը եւ նոր ճանապարհներ են բացւում դէպի ճշմարտութիւնը, այս բոլորը շահ եւ օգուտ է նաեւ Եկեղեցու համար: Եկեղեցին, իրօք, իր պատմութեան սկզբից եւեթ սովորեց Քրիստոսի պատգամն արտայայտել՝ գործածելով տարբեր ժողովուրդների մտապատկերներն ու լեզուները. ինչպէս նաեւ, այն ջանաց մեկնաբանել իմաստասէրների իմաստութեամբ. այսինքն, որպէս նպատակ ունեցաւ յարմարեցնել Աւետարանը, պատշաճութեան սահմանների ներսում, է՛ւ բոլորի ըմբռնումին է՛ւ իմաստունների պահանջներին: Եւ Յայտնուած Խօսքի քարոզումի այսօրինակ յարմարեցումը պէտք է որպէս օրէնք մնայ որեւէ տեսակի աւետարանացումի համար: Այսպիսով, իրօք, իւրաքանչիւր ժողովրդի մօտ խրախուսւում է Քրիստոսի պատգամը սեփական ինքնայատուկ կերպով արտայայտելու կարողութիւնը, եւ միաժամանակ զարկ է տրւում մի կենսական փոխանակումի Եկեղեցու եւ ժողովուրդների տարբեր մշակոյթների միջեւ[2]: Այս փոխանակումն աւելացնելու նպատակով, յատկապէս այսօր, երբ փոփոխութիւններն այսքան արագընթաց են եւ բազմաթիւ ու բազմազան են մտածելակերպերը, Եկեղեցին օգնութեան յատուկ կարիքն ունի նրանց՝ ովքեր աշխարհում ապրելով հմտօրէն ճանաչում են նրա զանազան հիմնարկներն ու օրէնքների համակարգերը, եւ ըմբռնում են նրա մտածելակերպը, լինեն նրանք հաւատացեալներ, թէ ոչ-հաւատացեալներ: Աստծոյ ամբողջ ժողովրդի, յատկապէս հովիւների ու աստուածաբանների պարտաւորութիւնն է, Սուրբ Հոգու օգնութեամբ, ուշադրութեամբ ունկնդրել, կշռադատել եւ մեկնաբանել մեր ժամանակուայ բազմազան արտայայտչամիջոցները, եւ կարողանալ դրանց վերաբերեալ դատաստան կայացնել Աստծոյ Խօսքի լոյսի ներքոյ, որպէսզի յայտնուած Ճշմարտութիւնը միշտ աւելի խորը կերպով հասկացուի, լաւագոյնս ըմբռնուի եւ կարողանայ ներկայացուել ամենայարմար կերպով:

Եկեղեցին, հասարակական տեսանելի կառուցուածք ունենալով, որն իսկ Քրիստոսի մէջ իր միութեան նշաններից է, կարող է փորձառութեան դասեր քաղել մարդկային հասարակական կեանքի զարգացումից – եւ արդարեւ այդպէս էլ վարւում է – ո՛չ որովհետեւ ինչ որ մի բան պակասում է Քրիստոսի կողմից նրան տրուած կառուցուածքին, այլ վերջինս առաւել խորը կերպով ճանաչելու, լաւագոյնս արտայայտելու եւ մեր ժամանակներին առաւել յաջողութեամբ յարմարեցնելու համար: Եկեղեցին երախտագիտութեամբ տեսնում է, որ է՛ւ ինքն ամբողջովին է՛ւ իր անհատ զաւակները բազմատեսակ օգնութիւններ են ստանում որեւէ դասակարգի ու կենսապայմանի մարդկանց կողմից: Իւրաքանչիւր ոք, որ զարկ է տալիս մարդկային հասարակութեան զարգացումին՝ ի նպաստ ընտանիքի, մշակոյթի, տնտեսական ու հասարակական կեանքի, ինչպէս նաեւ լինի ազգային թէ միջազգային քաղաքականութեան, ո՛չ սակաւ օգնութիւն է բերում նաեւ, Աստծոյ ծրագրի համաձայն, Եկեղեցու հասարակութեանը, այնքանով՝ որքանով այն կախումնաւոր է արտաքին գործօններից: Մանաւանդ թէ, Եկեղեցին դաւանում է՝ որ մեծ

[1] Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ. Lumen Gentium, Բ 15: AAS 57 (1965), p. 20.

[2] Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ. Lumen Gentium, Բ 13: AAS 57 (1965), p. 17.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

օգտակարութիւն է իրեն եկել եւ դեռ կարող է գալ մինչեւ իսկ ընդդիմութիւնից նրանց՝ ովքեր իրեն հակառակւում են կամ հալածում[1]*:*

ԽԵ. *Քրիստոս. Այբը եւ Քէն*

Եկեղեցին, աշխարհին օգնութիւն ընծայելիս, ինչպէս եւ նրանից շատ ստանալիս, իր ուշադրութեան կենտրոնում միայն մի նպատակակէտ ունի. որ գայ Աստծոյ Արքայութիւնը եւ իրագործուի ամբողջ մարդկութեան փրկութիւնը: Այն ամբողջ բարիքը, որ Աստծոյ ժողովուրդն իր երկրային պանդխտութեան ընթացքում կարող է ընծայել մարդկային ընտանիքին, բխում է այն իրողութիւնից՝ որ Եկեղեցին «փրկութեան ընդհանրական խորհուրդն» է[2]*, որ բացայայտում եւ միաժամանակ իրագործում է մարդու հանդէպ Աստծոյ սիրոյ խորհուրդը:*

Յիրաւի, Աստծոյ Խօսքը, որի միջոցով ամէն ինչ ստեղծուեց, Ինքն իսկ մարմնացաւ, իրագործելու համար – Նա՝ կատարեալ Մարդը – բոլորի փրկութիւնը եւ համընդհանուր վերաբովանդակումը: Տէրն է մարդկային պատմութեան նպատակակէտը, «պատմութեան եւ քաղաքակրթութեան իղձերի կիզակէտը», մարդկային զարմի կենտրոնը, իւրաքանչիւր սրտի բերկրանքը, նրանց ձգտումների լիութիւնը[3]*: Նա է, ում Հայրը յարութիւն է տուել մահից, բարձրացրել ու փառաւորել է եւ բազմել է տուել Իր աջ կողմում, հաստատելով Նրան ողջերի ու ննջեցեալների դատաւոր: Նրա Հոգու մէջ կենագործուած եւ ի մի համախմբուած, իբրեւ պանդուխտներ ընդառաջ ենք գնում մարդկային պատմութեան վերջնական կատարելութեանը, որը լիովին համապատասխանում է Իր սիրոյ ծրագրին. «Ինչ որ երկնքում է եւ ինչ որ երկրի վրայ, ամէն բան վերստին բովանդակել ի Քրիստոս» (Եփս* 1, 10*):*

Տէրն Ինքն ասում է. «Ահա, գալիս եմ շուտով, եւ իմ հետ բերում եմ վարձը, հատուցելու համար իւրաքանչիւրին ըստ իր գործերի: Ես եմ Այբը եւ Քէն, առաջինը եւ վերջինը, սկիզբն ու վերջը» (Յյտ 22, 12-13*):*

---

[1] *Հմմտ. Սբ. Յուստինոս,* Dialogus cum Tryphone judaeo, 110: *PG* 6, 729: *« ... Բայց որքան աւելի են մեզ այդ տառապանքներին ենթարկում, այնքան աւելի բազմաթիւ անձինք հաւատարիմ ու բարեպաշտ են դառնում Յիսուսի Անուամբ»: Հմմտ. Տերտուղիանոս,* Apologeticus, L, 13: *Corpus Christi, ser. lat.* 1, p. 171: *«Միշտ աւելի բազմաթիւ ենք դառնում ամէն անգամ, որ սպանւում ենք ձեր ձեռքով. քրիստոնեաների արիւնը սերմ է»: Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ.* Lumen Gentium, Բ 9: *AAS* 57 (1965), p. 14.

[2] *Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ.* Lumen Gentium, Է 48: *AAS* 57 (1965), p. 53.

[3] *Հմմտ. Պողոս Զ,* 1965*թ. Փետր.* 3*ի ճառը:*

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

ՄԱՄՆ ԵՐԿՐՈՐԴ

ՍԻ ՔԱՆԻ ԱՌԱՒԵԼ ՀՐԱՏԱՊ ԽՆԴԻՐՆԵՐ

ԽԶ. *Նախաբան*

Ներկայացնելուց յետոյ, թէ ինչպիսի արժանապատուութեամբ է ճոխացած մարդկային անձը եւ թէ ինչպիսի – անհատական եւ հասարակական – պաշտօն է կանչուած կատարելու երկրի վրայ, Ժողովը Աւետարանի եւ մարդկային փորձառութեան լոյսի ներքոյ՝ այժմ բոլորի ուշադրութիւնը հրաւիրում է ժամանակակից մի քանի խնդիրների վրայ, որոնք մասնաւորաբար հրատապ բնոյթ են կրում եւ ամբողջովին իւրայատուկ կերպով վերաբերւում են մարդկային զարմին:

Բազմաթիւ խնդիրներից, որոնք այսօր համընդհանուր շահագրգռութիւն են յարուցում, յատուկ կերպով յիշարժան են հետեւեալները. ամուսնութիւնն ու ընտանիքը, մարդկային մշակոյթը, տնտեսական-հասարակական կեանքը, քաղաքական կեանքը, ազգերի միջեւ համերաշխութիւնն ու խաղաղութիւնը:

Սրանցից իւրաքանչիւրի վրայ թող պայծառօրէն շողան Քրիստոսից բխող սկզբունքներն ու լոյսը. այսպիսով, քրիստոնեաները կ՚ունենան մի ուղեցոյց, իսկ բոլոր մարդիկ կը կարողանան լոյս գտնել այսքա՜ն բազմաթիւ ու բարդ խնդիրների լուծման փնտռտուքի ճանապարհին:

ԳԼՈՒԽ Ա.

ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՐԺԵՒՈՐՈՒՄԸ

ԽԷ. *Ամուսնութիւնն ու ընտանիքը այսօրուայ աշխարհում*

Մարդկային եւ քրիստոնեայ անձի եւ հասարակութեան բարիքը սերտօրէն կապակցուած է ամուսնական եւ ընտանեկան համայնքի երջանիկ վիճակի հետ: Քրիստոնեաներն, ուստի, բոլոր նրանց հետ՝ ովքեր բարձր համարում ունեն ընտանեկան համայնքի նկատմամբ, անկեղծօրէն ուրախանում են այն բազմատեսակ օգնութիւնների ու օժանդակութիւնների համար, որոնցով մարդիկ այսօր նպաստում են ընտանիքի ներսում սիրոյ համայնքի ձեւաւորմանը եւ կեանքի հանդէպ յարգանքին ու մեծարանքին: Օժանդակութիւններ, որոնք ամուսիններին ու ծնողներին օգնում են նրանց վսեմ առաքելութեան գործում: Դրանցից քրիստոնեաներն ակնկալում են միշտ աւելի լաւ օգտակարութիւն, մինչ ջանում են զարկ տալ դրանց եւ խթանել:

Այս հիմնարկի արժանապատուութիւնը, սակայն, ամէնուր միեւնոյն յստակութեամբ չի փայլում, քանի որ մթագնում է բազմակնութեան, ամուսնալուծութեան աղէտալի պատուհասի, այսպէս կոչուած ազատ սիրոյ եւ ա՛յլ տձեւացումների կողմից: Սրանց գումարւում են նաեւ այն պարագաները, երբ ամուսնական սէրը շատ յաճախ պղծւում է եսապաշտութեամբ, հաճոյապաշտութեամբ եւ որդեծնութեան դէմ ուղղուած ապօրինի գործողութիւններով: Ինչպէս նաեւ, տնտեսական, հասարակական-հոգեբանական եւ քաղաքական ներկայիս պայմանները ո՛չ թեթեւ խռովքներ են մտցնում ընտանեկան կեանքի մէջ: Եւ վերջում, աշխարհի որոշակի մասերում նկատւում են – ո՛չ առանց մտահոգութիւնների – խնդիրները, որոնք առաջանում են ժողովրդագրական աճի պատճառով: Այս ամէնից ծնւում են դժուարութիւններ, որոնք մտահոգում են խիղճն ու գիտակցութիւնը: Այսուհանդերձ, ամուսնական եւ ընտանեկան հիմնարկի արժէքն ու հաստատութիւնը ցայտուն եւ ակներեւ են դառնում այն իրողութիւնից, որ ժամանակակից

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

հասարակութեան խոր փոփոխութիւնները, չնայած դժուարութիւններին՝ որ բխում են դրանցից, շատ յաճախ տարբեր կերպերով բացայայտում են այս հիմնարկի ճշմարիտ բնոյթը:

Ժողովն, ուստի, յատակ լոյսի ներքոյ դնելով Եկեղեցու վարդապետութեան գլխաւոր կէտերից մի քանիսը, կամենում է լուսաւորել ու քաջալերել քրիստոնեաներին եւ բոլոր մարդկանց, որոնք ջանում են պահել ու պաշտպանել եւ յառաջ մղել ամուսնական վիճակի բնական արժանապատուութիւնն ու սրբազան բարձրակարգ արժէքը:

ԽԸ. Ամուսնութեան եւ ընտանիքի սրբութիւնը

Ամուսնական կեանքի եւ սիրոյ սերտօրէն մտերիմ համայնքը, Արարչի կողմից հիմնուած եւ սեփական օրէնքներով կանոնակարգուած, հաստատւում է ամուսինների դաշինքով, այսինքն՝ անձնական անյետսկոչելի համաձայնութեամբ: Եւ այսպէս, մարդկային արարքից՝ որով ամուսինները փոխադարձաբար տրւում են եւ ընդունւում, ծնւում է, նաեւ հասարակութեան դիմաց, ամուսնական հիմնարկը, որն հաստատութիւն ունի աստուածային օրէնսդրութեամբ: Նպատակաուղղուած լինելով ամուսինների, զաւակների եւ նաեւ հասարակութեան բարիքին, այս սրբազան զօդը կախումնաւոր չէ մարդու անձնիշխան կամքից, քանի որ Աստուած Ինքն է ամուսնութեան հեղինակը, որն այն օժտել է բազմատեսակ արժէքներով ու նպատակներով[1]: Այս ամէնը դերագոյն կարեւորութիւն ունի մարդկային զարմի շարունակութեան, ընտանիքի անդամներից իւրաքանչիւրի անձնական զարգացումի եւ յաւիտենական ճակատագրի, նոյն ինքն ընտանիքի եւ մարդկային ամբողջ հասարակութեան արժանապատուութեան, հաստատութեան, խաղաղութեան ու բարգաւաճումի համար:

Իրենց բնութեամբ իսկ, ամուսնութեան հիմնարկը եւ ամուսնական սէրը նպատակամղուած են դէպի որդեծնութիւնն ու զաւակների դաստիարակութիւնը եւ սրանցում գտնում են իրենց թագադրումը: Եւ այսպէս, այրն ու կինը, որոնք ամուսնական դաշինքի արդիւնքում «այլեւս երկու չեն, այլ միայն մէկ մարմին» (Մտթ 19, 6), անձերի եւ գործունէութիւնների սերտ միութեամբ փոխադարձ օգնութիւն եւ ծառայութիւն ընծայելով՝ իրենց միութեան իմաստի փորձառութիւնն են ունենում եւ միշտ աւելի լիակատար կերպով են նրան ձգտում հասնել:

Այս սերտ միասնութիւնը, քանի որ երկու անձանց փոխադարձ ինքնանուիրում է, ինչպէս նաեւ զաւակների բարիքը, պահանջում են ամուսինների լիակատար հաւատարմութիւնը եւ նրանց անքակտելի միութիւնը[2]:

Քրիստոս Տէրն Իր օրհնութիւնների առատութիւնը հեղել է այս բազմակերպեան սիրոյ վրայ, որը բխում է աստուածային սիրոյ ակունքից եւ կազմաւորուած է Եկեղեցու հետ Նրա միութեան նախատիպ օրինակի համաձայն: Յիրաւի, ինչպէս մի ժամանակ Աստուած ընդառաջ եկաւ Իր ժողովրդին սիրոյ եւ հաւատարմութեան դաշինք կնքելու նախաձեռնութեամբ[3], նմանապէս այժմ մարդկանց Փրկիչը եւ Եկեղեցու Փեսան[4] քրիստոնեայ ամուսիններին ընդառաջ է գալիս ընդմէջ Ամուսնութեան Խորհրդի: Ինչպէս նաեւ մնում է նրանց հետ, որպէսզի ինչպէս Ինքը սիրեց Եկեղեցուն եւ նուիրուեց նրա համար[5], այնպէս էլ ամուսինները կարողանան սիրել մէկը միւսին հաւատարմօրէն, ընդմիշտ, փոխադարձ նուիրումով: Ամուսնական իրական սէրը բարձրացուած ու ստանձնուած է աստուածային

---

[1] Հմմտ. Սբ. Օգոստինոս, *De bono coniugii*: *PL* 40, 375-376.394; Սբ Թովմաս Աքուինացի, *Summa Theologiae*, Suppl. Quaest. 49, art. 3 ad 1; *Decretum pro Armenis*: Denz. 702 (1327); Փիո ԺԱ, Կոնդակ *Casti Connubii*: *AAS* 22 (1930), pp. 547-548; Denz. 2227-2238 (3703-3714).

[2] Հմմտ. Փիո ԺԱ, Կոնդակ *Casti Connubii*: *AAS* 22 (1930), pp. 546-547; Denz. 2231 (3706).

[3] Հմմտ. Ովս 2; Երմ 3, 6-13; Եզկ 16, 59-63; Ես 54.

[4] Հմմտ. Մտթ 9, 15; Մրկ 2, 19-20; Ղկս 5, 34-35; Յվհ 3, 29; Հմմտ. նաեւ 2Կր 11, 2; Եփս 5, 27; Յյտ 19, 7-8; 21, 2 եւ 9.

[5] Հմմտ. Եփս 5, 25.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

սիրոյ մէջ եւ պաշտպանուած ու հարստացած է Քրիստոսի փրկագործ զօրութեամբ եւ Եկեղեցու փրկարար ներգործութեամբ, որպէսզի ամուսիններն արդիւնաւէտ կերպով առաջնորդուեն դէպի Աստուած եւ օգնութիւն ստանան ու ամրապնդուեն հօր եւ մօր վեհ առաքելութեան կատարման գործում[1]: Այս իսկ պատճառով, քրիստոնեայ ամուսինները զօրացւում եւ գրեթէ սրբագործւում են[2] մի յատուկ Խորհրդով, իրենց վիճակի պարտականութիւնների եւ արժանապատուութեան համար: Եւ նրանք, այդ Խորհրդի զօրութեամբ կատարելով իրենց ամուսնական եւ ընտանեկան պարտականութիւնները, Քրիստոսի հոգիով ներթափանցուած, որի շնորհիւ նրանց ամբողջ կեանքն համակւում է հաւատքով, յոյսով եւ սիրով, ձգտում են միշտ աւելի հասնելու սեփական կատարելութեանը եւ փոխադարձ սրբացումին, եւ միասին փառք են մատուցում Աստծուն:

Կանխաւ ստանալով ծնողների օրինակն ու միասնական աղօթքը, զաւակները, եւ մանաւանդ թէ՝ բոլոր նրանք՝ ովքեր միասին ապրում են ընտանեկան յարկի ներքոյ, կարող են առաւել հեշտօրէն գտնել իսկապէս մարդկային կրթութեան ու դաստիարակութեան, փրկութեան եւ սրբութեան ճանապարհը:

Ինչ վերաբերւում է ամուսիններին, հօր եւ մօր արժանապատուութեամբ ու պատասխանատուութեամբ ճոխացած, նրանք պէտք է հոգատար պարտաճանաչութեամբ կատարեն դաստիարակութեան, յատկապէս կրօնական դաստիարակութեան պարտականութիւնը, որն ուրիշ որեւիցէ մէկից առաջ ու աւելի՝ հէնց իրենց վերաբերուող գործն է:

Զաւակները նոյնպէս, որպէս ընտանիքի կենսունակ անդամներ, որոշակի կերպով նպաստում են ծնողների սրբագործմանը: Իրօք, ծնողներից ստացած երախտիքներին պէտք է պատասխանեն երախտագէտ գորովով, որդիական սիրով եւ վստահութեամբ. եւ պէտք է խնամեն նրանց, ինչպէս վայել ու պատշաճ է զաւակներին, կեանքում պատահող ճախորդութիւնների ժամանակ եւ ծերութեան միայնութեան մէջ: Այրիութիւնը, զօրեղ ոգիով որպէս ամուսնական կոչումի շարունակութիւն ընդունուած, պէտք է պատուով մեծարուած լինի բոլորի կողմից[3]: Ընտանիքն ուրիշ ընտանիքների հետ վեհանձնօրէն հասարակաց պէտք է դարձնի սեփական հոգեւոր հարստութիւնները: Այդպիսով քրիստոնեայ ընտանիքը, որ ծնւում է ամուսնութիւնից, որպէս Քրիստոսի եւ Եկեղեցու սիրոյ դաշինքի պատկեր եւ մասնակցութիւն[4], բոլորի առաջ բացայայտ կը դարձնի Փրկչի կենդանի ներկայութիւնն աշխարհում եւ Եկեղեցու իրական էութիւնը. եւ սա կ՚անի լինի՛ ամուսինների սիրով, վեհանձն արգասաւորութեամբ, միասնութեամբ ու հաւատարմութեամբ, թէ՛ իր բոլոր անդամների սիրալիր համագործակցութեամբ:

ԽԹ. Ամուսնական սէրը

Աստծոյ խօսքը նշանուածներին բազմաթիւ անգամներ կոչ է անում սնուցելու եւ զօրացնելու իրենց նշանադրութիւնը ողջախոհ սիրով, իսկ ամուսիններին՝ իրենց ամուսնական միութիւնը չմասնատուած գորովով[5]: Մեր դարաշրջանում նոյնպէս բազմաթիւ մարդիկ մեծ արժէք են ընծայում ամուսնու եւ կնոջ միջեւ իրական սիրոյն, որն ի յայտ է գալիս տարբեր արտայայտութիւններով, ժողովուրդների եւ ժամանակների ուղղամիտ բարքերի համաձայն: Ճիշտ որովհետեւ գերագոյն աստիճանի մարդկային արարք է, ուղղուած լինելով անձից անձ, զգացմունքով՝ որ ծնւում է կամքից, այդ սէրն ընդգրկում է ամբողջ անձի բարիքը. ուստի, հնարաւորութիւնն ունի իւրայատուկ արժանապատուութեամբ

[1] Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ. *Lumen Gentium*: *AAS* 57 (1965), pp. 15-16; 40-41; 47.

[2] Փիո ԺԱ, Կոնդակ *Casti Connubii*: *AAS* 22 (1930), p. 583.

[3] Հմմտ. 1Տմ 5, 3.

[4] Հմմտ. Եփս 5, 32.

[5] Հմմտ Ծնդ 2, 22-24; Առկ 5, 18-20; 31, 10-31; Տբթ 8, 4-8; Երգ 1, 2-3; 2, 16; 4, 16 - 5, 1; 7, 8-11; 1Կր 7, 3-6; Եփս 5, 25-33.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

հարստացնելու մարմնի եւ հոգեկան կեանքի արտայայտութիւնները եւ ազնուականացնելու դրանք որպէս ամուսնական մտերմութեան յատուկ տարրեր ու նշաններ:

Տէրը բարեհաճեց դարմանել, կատարելագործել եւ վերամբարձել այս սէրը շնորհի եւ աստուածային սիրոյ յատուկ պարգեւով: Այսօրինակ սէրը, միասին միաւորելով մարդկային եւ աստուածային արժէքներ, ամուսիններին առաջնորդում է ազատ եւ փոխադարձ ինքնանուիրման, որն արտայայտւում է զգացմունքների եւ գուրգուրանքի արարքների միջոցով, եւ թափանցում է ամուսինների ամբողջ կեանքից ներս[1], մանաւանդ թէ՝ առաւել կատարելագործւում եւ աճում է հէնց իր իսկ վեհանձն գործադրումով: Մեծապէս գերազանց է, ուստի, քան սոսկ տարփանքի հրապոյրը, որն եսապաշտօրէն խնամուելու դէպքում շուտով եւ թշուառօրէն չքանում է:

Այս սէրն արտայայտւում եւ ամբողջովին իւրայատուկ կերպով զարգանում է ամուսնութեանը բնորոշ արարքների կիրառումով: Սրանից հետեւում է, որ արարքները, որոնցով ամուսինները միանում են ողջախոհ սերտ մտերմութեամբ, պարկեշտ են եւ արժանապատիւ. իսկապէս մարդկային կերպով կատարուելով, նպաստում են փոխադարձ անձնանուիրումին, որն իսկ իմաստաւորում են, եւ բերկրանքի ու երախտագիտութեան մէջ փոխադարձ կերպով հարստացնում են իրենց իսկ՝ ամուսիններին: Այս սէրը, փոխադարձ յանձնառութեամբ վաւերացուած եւ յատկապէս՝ Քրիստոսի Խորհուրդներից մէկով սրբագործուած, պէտք է անքակտելիօրէն հաւատարիմ մնայ բարեյաջող եւ ձախորդ իրավիճակներում, ե՛ւ մարմնի ե՛ւ հոգու հարթութեան վրայ. հետեւաբար, բացառում է որեւէ անհաւատարմութիւն եւ որեւէ ամուսնալուծութիւն: Ամուսնութեան միութիւնը, որն հաստատուած է Տիրոջ կողմից, ակներեւ կերպով տեսանելի է նաեւ տղամարդու եւ կնոջ անձնական հաւասար արժանապատուութիւնից, որն հարկաւոր է ճանաչել եւ ընդունել փոխադարձ եւ լիակատար սիրով:

Քրիստոնէական այս կոչման յանձնառութիւններին կայուն ու անդրդուելի կերպով հաւատարիմ մնալու համար պահանջւում է ունենալ արտասովոր առաքինութիւն: Սրա համար է, որ ամուսինները, սուրբ կեանք վարելու համար շնորհի կողմից զօրացուած, պէտք է մշտաջան մշակեն եւ սնուցեն սիրոյ ամուր կայունութիւնը, ոգու մեծութիւնը, զոհողութեան հոգին, եւ այս ամէնը պէտք է հայցեն իրենց աղօթքներում:

Ամուսնական իրական սէրն աւելի բարձր համարում կը վայելի եւ հարցի վերաբերեալ հասարակական առողջ կարծիք կը ձեւացնի, եթէ քրիստոնեայ ամուսինները սիրոյ մէջ հաւատարմութեան ու ներդաշնակութեան, ինչպէս նաեւ որդիների դաստիարակութեան գործում հոգատարութեան վկայութիւն կը տան, եւ եթէ իրենց պատասխանատուութիւնները կը ստանձնեն մշակութային, հոգեբանական եւ հասարակական անհրաժեշտ բարենորոգման գործում ի նպաստ ամուսնութեան եւ ընտանիքի:

Երիտասարդները պէտք է համապատասխան կերպով կրթուեն – շատ աւելի լաւ կը լինի, եթէ դա տեղի ունենայ սեփական ընտանիքի գրկում – ամուսնական սիրոյ արժանապատուութեան, նրա դերի ու նշանակութեան եւ նրա արտայայտութիւնների վերաբերեալ. այնպէս, որ ողջախոհութեան հանդէպ յարգանքով կրթուելով, պատշաճ տարիքին կարողանան ազնուաբարոյ նշանադրութիւնից անցնել ամուսնութեան:

Ե. Ամուսնութեան արգասաւորութիւնը

Ամուսնութիւնը եւ ամուսնական սէրը իրենց բնութեամբ իսկ նպատակամղուած են որդեծնութեանը եւ զաւակների դաստիարակութեանը: Իրօք, զաւակներն ամուսնութեան ամենագերազանց պարգեւն են եւ մեծապէս նպաստում են նաեւ ծնողների բարիքին: Նոյն Ինքն Աստուած, որ ասաց. «Լաւ չէ, որ մարդը միայնակ լինի» (Ծնդ 2, 18), եւ «որ սկզբից մարդուն արու եւ էգ ստեղծեց» (Մտթ 19, 4), կամենալով հաղորդել մարդուն մի իւրայատուկ մասնակցութիւն արարչութեան Իր գործին, օրհնեց տղամարդուն եւ կնոջը, ասելով նրանց. «Աճեցէք եւ բազմացէք» (Ծնդ 1, 28): Հետեւաբար, ամուսնական իրական եւ լաւագոյնս

[1] Հմմտ. Փիո ԺԱ, Կոնդակ Casti Connubii: AAS 22 (1930), pp. 547-548; Denz. 2232 (3707).

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

հասկացուած սէրը եւ ընտանեկան ամբողջ կառոյցը, որ նրանից ծնւում է, ձգտում են, առանց անտեսելու ամուսնութեան միւս նպատակները, տրամադրելու ամուսիններին՝ քաջասիրտ խիզախութեամբ համագործակցելու Արարչի եւ Փրկչի սիրոյն, որն իրենց միջոցով շարունակաբար ընդարձակում եւ հարստացնում է Իր ընտանիքը:

Ամուսինները պէտք է գիտակից լինեն, որ մարդկային կեանքն աւանդելու եւ այն դաստիարակելու գործում իրենք Արարիչ Աստծոյ սիրոյ համագործակիցներն են եւ գրեթէ նրա մեկնաբան թարգմանիչները. սա պէտք է նկատուի որպէս նրանց բնորոշ առաքելութիւնը:

Եւ այդ իսկ պատճառով, իրենց պարտականութիւնը պէտք է կատարեն մարդկային եւ քրիստոնէական պատասխանատուութեամբ, եւ, Աստծոյ նկատմամբ հեզ յարգանքով, միասնական համաձայնութեամբ եւ ընդհանուր ջանքով, պէտք է ուղղամիտ դատողութիւն կայացնեն. ի նկատի ունենալով լինի՛ իրենց անձնական բարիքը, լինի՛ զաւակներինը, ինչպէս արդէն ծնուածներինը, այնպէս էլ նրանցը՝ որոնց ծնունդը նախատեսւում է. գնահատելով իրենց ժամանակաշրջանի եւ իրենց կենսավիճակի ե՛ւ նիւթական ե՛ւ հոգեւոր պայմանները. եւ ի վերջոյ, հաշուի առնելով ընտանեկան համայնքի, երկրային հասարակութեան եւ նոյն ինքն Եկեղեցու բարիքը: Այդ դատողութիւնը վերջնական վերլուծմամբ պէտք է կայացնեն – Աստծոյ առաջ – իրենք իսկ ամուսինները: Իրենց վարքագծում, սակայն, քրիստոնեայ ամուսինները պէտք է գիտակից լինեն, որ չեն կարող ընթանալ կամայական կերպով, այլ պէտք է միշտ կառավարուեն ինքնին աստուածային օրէնքին նոյնակերպ խղճով. եւ պէտք է հեզութեամբ հետեւեն Եկեղեցու վարդապետութեանը, որն աստուածային օրէնքը վաւերական կերպով մեկնաբանում է Աւետարանի լոյսի ներքոյ:

Աստուածային այդ օրէնքը բացայայտում է ամուսնական սիրոյ լիակատար նշանակութիւնը, պաշտպանում է այն եւ առաջնորդում է դէպի նրա իսկապէս մարդկային կատարելութիւնը:

Այսպիսով, երբ քրիստոնեայ ամուսինները, աստուածային Նախախնամութեանը վստահելով եւ զոհողութեան հոգին մշակելով[1], կատարում են իրենց որդեծին դերը եւ վեհանձնօրէն ստանձնում են իրենց մարդկային եւ քրիստոնէական պատասխանատուութիւնները, փառաւորում են Արարչին եւ ձգտում են քրիստոնէական կատարելութեանը:

Ամուսիններից, որոնք այդ կերպ կատարում են Աստծոյ կողմից իրենց յանձնուած առաքելութիւնը, իւրայատուկ կերպով յիշատակելի են նրանք՝ որոնք խոհեմ որոշումով եւ միասնական համաձայնութեամբ, մեծահոգաբար ընդունում են նաեւ առաւել մեծ թուով զաւակներ, որոնց պատշաճ կերպով էլ դաստիարակում են[2]:

Այսուամենայնիւ, ամուսնութիւնը չի հաստատուել միմիայն որդեծնութեան համար. անձանց միջեւ անքակտելի դաշինքի նկարագիրն ինքնին եւ զաւակների բարիքը պահանջում են, որ ամուսինների փոխադարձ սէրը նոյնպէս ունենայ իր արդար ու ճիշտ արտայայտութիւններն ու ցոյցերը, զարգանայ եւ հասնի իր հասունութեանը: Հետեւաբար, նոյնիսկ եթէ զաւակները, շատ յաճախ բուռն ուժգնութեամբ սպասուած լինելով հանդերձ, այնուամենայնիւ չեն ծնւում, ամուսնութիւնը շարունակում է հաստատուն մնալ որպէս ամբողջ կեանքի համայնք եւ հաղորդութիւն, եւ պահպանում է իր արժէքն ու իր անլուծարելիութիւնը:

ԾԱ. Ամուսնական սիրոյ համաձայնութիւնը կեանքի հանդէպ յարգանքի հետ

Ժողովը գիտէ, որ ամուսինները, որոնք կամենում են ներդաշնակ կերպով վարել իրենց ամուսնական կեանքը, յաճախ խոչընդոտւում են այսօրուայ կեանքի որոշակի պայմանների կողմից եւ կարող են այնպիսի պարագաներում գտնուել, որոնք հնարաւորութիւն չեն

[1] Հմմտ. 1Կր 7, 5.

[2] Հմմտ. Փիո ԺԲ, 1958թ. Յունուարի 20ի «Tra le visite» ճառը: AAS 50 (1958), p. 91.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

տալիս, առնուազն մի որոշակի ժամանակով, աւելացնելու զաւակների թիւը, եւ առանց դժուարութեան չէ՝ որ հնարաւոր է լինում պահպանել հաւատարիմ սիրոյ գործադրումը եւ կեանքի լիակատար հաղորդակցութիւնը: Իրօք, այնտեղ՝ ուր ընդհատուած կամ ընդմիջուած է ամուսնական կեանքի սերտ մտերմութիւնը, հազուադէպ չէ՝ որ վտանգի ենթարկուած լինեն հաւատարմութիւնը եւ հետեւաբար՝ նաեւ զաւակների բարիքը. այդպիսի դէպքերում որոշակի վտանգի են ենթարկւում նաեւ զաւակների դաստիարակութիւնը եւ նոր զաւակների ծնունդն ընդունելու քաջութիւնը:

Կան անձինք, որոնք յաւակնում են ո՛չ պարկեշտ լուծումներ տալու այս խնդիրներին, մանաւանդ թէ՝ չեն խուսափում եւ ո՛չ իսկ նոր կեանքերի սպանութիւնից: Եկեղեցին, մինչդեռ, յիշեցնում է, որ իրական հակասութիւն չի կարող գոյութիւն ունենալ կեանքի աւանդումը խնամակալող աստուածային օրէնքների եւ ամուսնական ճշմարիտ սիրոյն նպաստելու պարտականութեան միջեւ:

Յիրաւի, Աստուած, կեանքի Տէրը, մարդկանց վստահել է կեանքը պաշտպանելու բարձրեալ առաքելութիւնը. առաքելութիւն, որը պէտք է ի կատար ածուի մարդուն արժանավայել կերպով: Կեանքն, ուստի, հազիւ թէ յղացուեց՝ պէտք է գերագոյն հոգատարութեամբ պաշտպանուի. կամաւոր կերպով գործադրուած վիժումը եւ մանկասպանութիւնը զգրելի ոճիրներ են: Մարդուն բնորոշ սեռային նկարագիրը եւ ծնելու մարդկային կարողութիւնը սքանչելիօրէն գերազանց են՝ քան այն ամէնը՝ որ տեղի է ունենում կեանքի ստորին աստիճաններում. ուստի, ամուսնական կեանքին բնորոշ արարքները նոյնպէս, մարդկային ճշմարիտ արժանապատուութեան համաձայն կանոնակարգուելով, պէտք է մեծ համարումով յարգուեն: Հետեւաբար, երբ խօսքը վերաբերւում է ամուսնական սէրը կեանքի պատասխանատու աւանդումի հետ համաձայնեցնելուն, գործողութեան բարոյական նկարագիրը կախում չունի միմիայն անկեղծ դիտաւորութիւնից եւ դրդապատճառների գնահատումից, այլ որոշւում է առարկայական չափանիշների համաձայն, որոնք իրենց հիմնաւորումը գտնում են ինքնին մարդկային անձի արժանապատուութեան մէջ եւ նրա գործերում, չափանիշներ՝ որոնք յարգում են, ճշմարիտ սիրոյ բանակարգի ներսում, մարդկային փոխադարձ նուիրումի եւ որդեծնութեան ամբողջական նշանակութիւնը. մի բան, որն անհնարին է դառնում, եթէ անկեղծ հոգիով չի խնամւում ամուսնական ողջախոհութեան առաքինութիւնը: Եկեղեցու զաւակները, այս սկզբունքների վրայ հիմնուելով, որդեծնութեան կանոնաւորման գործում չեն կարող հետեւել ուղիների, որոնք Վարդապետութիւնը դատապարտել է Աստուածային Օրէնքը մեկնաբանելիս[1]:

Բոլորի համար թող յստակ լինի, որ մարդու կեանքը եւ այն աւանդելու պարտականութիւնը սահմանափակուած չեն այս ժամանակուայ մէջ եւ չեն կարող չափուել ու հասկացուել միմիայն այս աշխարհում, այլ վերաբերւում են մարդկանց յաւիտենական ճակատագրին:

ԾԲ. Բոլորի յանձնառու ներդրումն ի նպաստ ամուսնութեան եւ ընտանիքի բարիքի

Ընտանիքը մարդկայնութեան առաւել ամբողջական եւ առաւել հարուստ դպրոց է: Որպէսզի, սակայն, կարողանայ հասնել իր կեանքի լիութեանն ու իր կատարումին, հարկաւոր է՝ որ գոյութիւն ունենայ հոգու փոխադարձ սիրալիր բացուածք ամուսինների միջեւ, իսկ զաւակների դաստիարակութեան գործում՝ փոխադարձ խորհրդակցութիւն ու

[1] Հմմտ. Փիո ԺԱ, Կոնդակ Casti Connubii: AAS 22 (1930), pp. 559-561; Denz. 2239-2241 (3716-3718); Փիո ԺԲ, Իտալիայի Մանկաբարձուհիների Միութեան համաժողովին յղուած ուղերձը, 1951թ. Հոկտ. 29ին. AAS 43 (1951), pp. 835-854; Պօղոս Զ, 1964թ. Յունիսի 23ին Կարդինալներին ուղղուած խօսքը. AAS 56 (1964), pp. 581-589. Մի քանի հարցեր, որոնք յաւելեալ եւ առաւել մանրամասն պրպտումների կարիքն ունէին, Սրբազան Քահանայապետի հրամանով փոխանցուեցին Բնակչութեան, Ընտանիքի եւ Ծննդականութեան Ուսումնասիրութեան Յանձնաժողովին, որպէսզի, երբ այս վերջինը կ՚աւարտի իրեն տրուած յանձնարարութիւնը, Սրբազան Քահանայապետն արտայայտի իր վճիռը: Ուստի, հաշուի առնելով ներկայ հանգրուանը, որում գտնւում է Վարդապետութեան ուսմունքը, ժողովն այժմ մտադիր չէ կոնկրետ լուծումներ առաջարկելու:

© «Ընդհանրական» Հրապարակչություն
www.mashtoz.org

տեւական համագործակցութիւն ծնողների միջեւ: Հօր գործօն ներկայութիւնը մեծապէս դրական է անդրադառնում զաւակների կազմաւորման վրայ: Բայց հարկաւոր է ապահովել նաեւ մօր ներկայութիւնը, որի կարիքն ունեն յատկապէս ամենափոքրահասակ զաւակները, եւ նրա հոգածութիւնը սեփական օջախի նկատմամբ, չանտեսելով հանդերձ կնոջ հասարակական օրինաւոր յառաջխաղացումը: Զաւակներն, ապա, դաստիարակութեան միջոցով պէտք է այնպէս կազմաւորուեն, որ չափահաս տարիքին հասնելով՝ կարողանան պատասխանատուութեան լիակատար զգացումով հետեւել իրենց կոչմանը, ներառեալ սրբազան կոչումը. եւ եթէ ընտրելու են ամուսնական կեանքի վիճակը, կարողանան իրենց սեփական ընտանիքը կազմել բարոյական, հասարակական եւ տնտեսական իրենց համար իսկապէս նպաստաւոր պայմաններով: Ծնողների կամ խնամակալների պարտականութիւնն է նոր ընտանիք կազմելու հարցում խոհեմ եւ իմաստուն խորհուրդներով առաջնորդել ամենաերիտասարդներին, ներկայացնելով այնպէս՝ որ նրանք այդ խորհուրդներն ունկնդրեն յօժարութեամբ: Այսուհանդերձ, յատուկ կերպով պէտք է խուսափեն նրանց ստիպելուց, ուղղակի կամ անուղղակի ճնշման կերպերով, յանձն առնելու կեանքի որոշակի վիճակ կամ որպէս ամուսին (կամ կին) ընտրելու որոշակի մի անձ:

Այս կերպ ընտանիքը, ուր տարբեր սերունդներ հանդիպում են եւ միմեանց փոխադարձաբար օգնում հասնելու մարդկային առաւել ամբողջական իմաստութեան եւ ներդաշնակեցնելու անձի իրաւունքները հասարակական կեանքի ա՛յլ պահանջների հետ, իսկապէս հասարակութեան հիմքն է: Ուստի բոլոր նրանք՝ ովքեր ազդեցութիւն ունեն հասարակութեան եւ նրա տարբեր դասակարգերի վրայ, պէտք է արդիւնաւէտ կերպով նպաստեն ամուսնութեան եւ ընտանիքի բարօրութեան խթանման գործին: Իսկ քաղաքական իշխանութիւններն իրենց սրբազան պարտականութիւնը պէտք է նկատեն յարգել, պաշտպանել եւ օժանդակել ամուսնութեան եւ ընտանիքի իրական նկարագրին, հասարակաց բարոյականութեանն ու ընտանեկան բարեկեցութեանը: Մասնաւորապէս պէտք է պաշտպանուի զաւակներ ծնելու եւ նրանց ընտանիքի գրկում դաստիարակելու ծնողների իրաւունքը: Հոգածու օրէնսդրութեամբ եւ տարբեր նախաձեռնութիւններով, սակայն, պէտք է պատշաճ կերպով պաշտպանուեն եւ օգնութիւն ստանան նաեւ նրանք՝ ովքեր դժբախտաբար զուրկ են սեփական ընտանիքից:

Քրիստոնեաները, լաւ օգտագործելով ներկայ ժամանակը[1] եւ զանազանելով մնայուն իրականութիւնները փոփոխական կերպերից, պէտք է որեւէ միջոց ձեռնարկեն հոգատարութեամբ զարգացնելու եւ ընդլայնելու համար ամուսնութեան եւ ընտանիքի արժէքները, ինչպէս սեփական կեանքի վկայութեամբ, այնպէս էլ բարի կամքի տէր մարդկանց հետ համաձայնեցուած գործողութիւններով: Այսպիսով, յաղթահարելով ներկայ դժուարութիւնները, հոգ կը տանեն ընտանիքի կարիքներին ու շահեկան խնդիրներին, ներկայ ժամանակների հետ համաձայնութեամբ: Այս նպատակին հասնելու համար մեծապէս օգտակար է հաւատացեալների քրիստոնէական զգացողութիւնն ու աշխարհընկալումը, մարդկանց բարոյական ուղղամիտ խիղճն ու գիտակցութիւնը, ինչպէս նաեւ իմաստութիւնն ու քաջատեղեակ ձեռնհասութիւնը նրանց՝ ովքեր հմուտ են սրբազան գիտութիւններում:

Գիտութիւններում, յատկապէս կենսաբանական, բժշկական, հասարակական եւ հոգեբանական գիտութիւններում փորձառու մասնագէտները կարող են մեծ նպաստ բերել ամուսնութեան եւ ընտանիքի բարիքին, եւ խղճի խաղաղութեանը, եթէ, համատեղելով իրենց ուսումնասիրութիւնների արդիւնքները, ջանան միշտ աւելի խորը կերպով լուսաբանել զանազան պայմանները, որոնք նպաստում են մարդկային կանոնաւոր եւ պատուաւոր որդեծնութեանը:

Քահանաներին վերաբերուող պարտականութիւնն է, ընտանեկան կեանքի խնդիրների վերաբերեալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռքբերելով, սիրալիր կերպով օգնել ամուսինների կոչմանը նրանց ամուսնական եւ ընտանեկան կեանքում, գործի դնելով հովուական զանազան միջոցներ – Աստծոյ խօսքի քարոզումը, ծիսական պաշտամունքը եւ հոգեւոր ա՛յլ օգնութիւններ – եւ բարութեամբ ու համբերութեամբ զօրացնել նրանց դժուարութիւններում, սփոփել աստուածային սիրով, որպէսզի կազմաւորուեն իրական խաղաղութեամբ պայծառօրէն փայլող ընտանիքներ:

[1] Հմմտ. Եփս 5, 16; Կող 4, 5.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

Առաքելական կեանքի բազմատեսակ գործերը, յատկապէս ընտանեկան շարժումները, պէտք է բոլոր միջոցները ձեռնարկեն ուսուցումով եւ գործով նեցուկ կանգնելու համար երիտասարդներին եւ իրենց իսկ՝ ամուսիններին, մասնաւորապէս նոր ձեւաւորուած ընտանիքներին, եւ նրանց նախապատրաստելու համար ընտանեկան, հասարակական եւ առաքելական կեանքին:

Ի վերջոյ ամուսիններն իրենք, կենդանի Աստծոյ պատկերով ստեղծուած եւ անձնական իրական արժանապատուութեամբ օժտուած, պէտք է միաւորուած լինեն փոխադարձ հաւասար գորովով, միակերպ զգացողութեամբ ու աշխարհընկալումով, համընդհանուր սրբութեամբ[1], այնպէս՝ որ, իրենց կոչումի ուրախութիւններում ու զոհողութիւններում Քրիստոսին՝ կեանքի սկզբնածին ակունքին հետեւելով[2], իրենց հաւատարիմ սիրոյ միջոցով կարողանան վկաները դառնալ սիրոյ այն խորհրդի, որ Տէրն աշխարհին յայտնեց Իր մահով եւ Իր յարութեամբ[3]:

ԳԼՈՒԽ Բ.

ՄՇԱԿՈՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

ԾԳ. Նախաբան

Մարդկային անձին բնորոշ է կեանքի ճշմարտապէս եւ լիակատար կերպով մարդկային մակարդակի հասնել կարողանալը միմիայն մշակոյթի միջոցով, այսինքն՝ մշակելով բնութեան բարիքներն ու արժէքները: Ուստի, այն ամէն անգամ, երբ խօսւում է մարդկային կեանքի մասին, բնութիւնն ու մշակոյթը ներկայանում են որպէս միմեանց սերտօրէն կապակցուած, այնքան՝ որքան ուրիշ ոչ մի դէպքում:

«Մշակոյթ» ընդհանուր եզրով մատնանշւում են այն բոլոր միջոցները, որոնցով մարդը զարգացնում եւ կատարելագործում է իր հոգու եւ իր մարմնի բազմազան կարողութիւնները. ճանաչողութեամբ ու աշխատանքով իր իշխանութեանն է ենթարկում ինքնին տիեզերքը. առաւել մարդկային է դարձնում հասարակական կեանքը լինի՛ ընտանիքի թէ՛ քաղաքական ամբողջ հասարակութեան ներսում, շնորհիւ բարքերի եւ հիմնարկների յառաջընթացի ու զարգացման. ի վերջոյ, ժամանակի ընթացքում, իր գործերում արտայայտում, հաղորդում եւ պահպանում է հոգեւոր մեծ փորձառութիւններն ու բաղձանքները, որպէսզի կարողանան օգտակար լինել շատերի, մանաւանդ թէ՝ մարդկային ամբողջ զարմի զարգացմանը:

Հետեւաբար, մշակոյթն անհրաժեշտօրէն ներկայանում է պատմական եւ հասարակական կերպարանքով, իսկ «մշակոյթ» եզրը յաճախ ստանում է հասարակագիտական եւ ազգաբանական նշանակութիւն: Այս իմաստով է խօսւում մշակոյթների բազմաքանակութեան մասին: Յիրաւի, գոյքերի գործածման, աշխատելու, արտայայտուելու, կրօնը գործնականօրէն ապրելու եւ բարքերը կազմաւորելու, օրէնքներ ձեւաւորելու եւ իրաւական հիմնարկներ ստեղծելու, գիտութիւններն ու արուեստները զարգացնելու եւ գեղեցիկը մշակելու տարբեր կերպերից են սկիզբ առնում զանազան ապրելակերպերն ու արժէքների տարբեր համակարգները: Այսպիսով, աւանդական սովորոյթներից ձեւաւորւում է մարդկային իւրաքանչիւր խմբին բնորոշ ժառանգութիւնը: Այսպիսով նաեւ կազմւում է պատմականօրէն յստակուած ու սահմանուած միջավայրը, ուր իւրաքանչիւր մարդ, որեւէ՛ տոհմի ու դարաշրջանի, պատուաստւում եւ գտնում է իր տեղը, եւ որտեղից քաղում է բարիքները, որոնք իրեն հնարաւորութիւն են տալիս խթանելու եւ զարգացնելու քաղաքակրթութիւնը:

---

[1] Հմմտ. *Sacramentarium Gregorianum*: *PL* 78, 262.

[2] Հմմտ. Հռմ 5, 15 եւ 18; 6, 5-11; Գղտ 2, 20.

[3] Հմմտ. Եփս 5, 25-27.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

ԲԱԺԻՆ Ա.
ՄՇԱԿՈՅԹԻ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՅՍՕՐՈՒԱՅ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ԾԴ. Նոր ապրելակերպեր

Արդի մարդու կեանքի պայմանները, հասարակական եւ մշակութային տեսանկիւնից դիտուած, խորը կերպով փոփոխուել են, այնքան՝ որ կարելի է խօսել մարդկութեան պատմութեան մէջ մի նոր դարաշրջանի մասին[1]: Այստեղից նոր ճանապարհներ են բացւում մշակոյթը կատարելագործելու եւ առաւել լայնօրէն տարածելու համար: Այդ նոր ճանապարհները նախապատրաստուել են բնական եւ մարդկային, նաեւ հասարակական գիտութիւնների մեծդի զարգացման, գիտարուեստների յառաջընթացի, հասարակական հաղորդակցութեան գործիքների զարգացման ու կազմակերպման կողմից: Այս պատճառով էլ այսօրուայ մշակոյթը բնորոշւում է յատկանշական մի քանի գծերով. այսպէս կոչուած «ճշգրիտ» գիտութիւնները մեծապէս յղկում են քննադատական զգայնութիւնը. հոգեբանութեան նորագոյն ուսումնասիրութիւնները բացատրում են մարդկային գործունէութեան խորքերը. պատմական գիտութիւններն ուժգին մղում են իրողութիւններն իրենց փոփոխականութեան ու յեղաշրջման տեսանկիւնից քննելու. ապրելակերպերն ու բարքերը միշտ աւելի միաձեւ են դառնում. արդիւնաբերականացումը, քաղաքաբնակ կենսակերպն ու մտածելակերպը եւ ա՛յլ պատճառներ, որ նպաստում են հաւաքական կեանքին, ստեղծում են մշակոյթի նոր ձեւեր (զանգուածային մշակոյթ), որից էլ ծնւում են մտածելու, գործելու, ազատ ժամանակը գործածելու նոր կերպեր. տարբեր ազգութիւնների եւ հասարակութեան դասակարգերի միջեւ յարաբերութիւնների զարգացումը բոլորի եւ իւրաքանչիւրի առաջ առաւել ընդարձակ կերպով բացում է մշակոյթի տարբեր կերպերի հարստութիւնները, եւ այսպէս, քիչ առ քիչ, նախապատրաստւում է մարդկային մշակոյթի առաւել համաշխարհային մի կերպ, որն այնքան աւելի է խթանում եւ արտայայտում մարդկային զարմի միութիւնը, որքան լաւագոյնս է յարգում տարբեր մշակոյթների առանձնայատկութիւնները:

ԾԵ. Մարդը մշակոյթի հեղինակ

Միշտ աւելի է աճում որեւէ դասակարգի կամ ազգութեան պատկանող արանց եւ կանանց թիւը, որոնք գիտակից են՝ որ հեղինակներն ու խթանողներն են իրենց հասարակութեան մշակոյթի: Ամբողջ աշխարհում միշտ աւելի է զարգանում ինքնուրոյնութեան եւ պատասխանատուութեան զգացողութիւնը, մի բան՝ որ գերագոյն աստիճանի կարեւոր է մարդկութեան հոգեւոր եւ բարոյական հասունութեան համար: Սա առաւել յստակ կերպով է երեւում, եթէ ի նկատի ենք ունենում աշխարհի միաւորումը եւ առաջադրանքը, որ մարդկութիւնն իր առջեւ դրել է, ճշմարտութեամբ եւ արդարութեամբ կառուցելու մի լաւագոյն աշխարհ: Այսպիսով, վկաներն ենք մի նոր հումանիզմի ծնունդի, ուր մարդը սահմանւում է նախեւառաջ իր եղբայրների եւ պատմութեան նկատմամբ ունեցած իր պատասխանատուութեամբ:

ԾԶ. Դժուարութիւններ եւ առաջադրանքներ

Այսպիսի պայմաններում զարմանալի չէ, որ մարդն իրեն մշակոյթի զարգացման պատասխանատու զգալով՝ սնուցում է մեծ յոյսեր, բայց նաեւ տագնապով նկատում է գոյութիւն ունեցող այն բազմաթիւ խնդիրները – միմեանց հակասական, սակայն միաժամանակ նաեւ փաստարկելի – որոնք նա պէտք է լուծի: Ի՞նչ է հարկաւոր անել,

[1] Հմմտ. սոյն Սահմանադրութեան Ներածական բացատրութիւնը, թիւ Դ-Ժ.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

որպէսզի մշակութային յաճախակի եւ սերտ դարձած յարաբերութիւնները, որոնք պէտք է որ առաջնորդէին տարբեր դասակարգերի եւ ազգութիւնների միջեւ իրական եւ պտղառատ երկխօսութեան, չխռովեն հասարակութիւնների կեանքը, ո՛չ էլ տակնուվրայ անեն հայրերի իմաստութիւնը, ո՛չ էլ վտանգի տակ դնեն իւրաքանչիւր ժողովրդի ինքնատիպ նկարագիրը:

Ինչպէ՞ս խթանել նոր մշակոյթի ուժականութիւնն ու ծաւալումը առանց կորստեան մատնելու աւանդութեան ժառանգութեան հանդէպ կենդանի հաւատարմութիւնը: Այս խնդիրը յատուկ հրատապութեամբ ներկայանում է այնտեղ՝ ուր մշակոյթը, որ ծնւում է գիտական եւ գիտարուեստական մեծ զարգացումից, հարկաւոր է ներդաշնակեցնել մշակոյթի հետ, որը, տարբեր աւանդութիւնների համաձայն, սնուցւում է դասական ուսումներով:

Ինչպիսի՞ եղանակով հաշտեցնել մասնագիտացած գիտութիւնների այսքա՜ն սրընթաց ու աճող տարբերակումը դրանց համադրութիւնը կատարելու հարկաւորութեան եւ մարդու մէջ հայեցողութեան ու հիացումի կարողութիւնները պահպանելու անհրաժեշտութեան հետ, որոնք իսկ առաջնորդում են նրան իմաստութեան:

Ի՞նչ անել, որպէսզի ամբողջ աշխարհի մարդիկ մասնակից դառնան մշակոյթի բարիքներին, ճիշտ երբ մասնագէտների մշակոյթը միշտ աւելի խորն է դառնում ու բաղադրեալ:

Ինչպէ՞ս, ի վերջոյ, որպէս օրինաւոր ճանաչել ինքնուրոյնութիւնը, որ մշակոյթը պահանջում է իր համար, առանց որ դա հասցնի սոսկ երկրային, մանաւանդ թէ՝ կրօնին ներհակ հումանիզմի:

Այս հակասութիւնների մէջ, մարդկային մշակոյթին այսօր պէտք է զարգացման այնպիսի ուղղութիւն տրուի, որ մարդկային անձն ամբողջովին կատարելագործուի ճիշտ կարգով եւ որ մարդիկ օգնութիւն ստանան կատարման մէջ այն առաջադրանքների, որոնց կատարմանը կանչուած են բոլորը, բայց յատկապէս՝ մարդկային միակ ընտանիքի գրկում եղբայրաբար միացած քրիստոնեաները:

ԲԱԺԻՆ Բ.

ՄԻ ՔԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔ
ՄՇԱԿՈՅԹԻ ՃԻՇՏ ԽԹԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ԾԷ. *Հաւատք եւ մշակոյթ*

Քրիստոնեաները, որ քայլքի մէջ են դէպի երկնային քաղաքը, պէտք է վերին իրականութիւնները փափաքեն եւ ճաշակեն[1]: Սա այնուամենայնիւ չի նուազեցնում, մանաւանդ թէ՝ աւելացնում է առաւել մարդկային աշխարհի կերտման գործում բոլոր մարդկանց հետ համագործակցելու նրանց պարտաւորութեան կարեւորութիւնը: Եւ իրօք, քրիստոնէական հաւատքի խորհուրդը նրանց ընծայում է գերազանց դրդապատճառներ եւ օգնութիւններ՝ առաւել նուիրուածութեամբ կատարելու համար այս առաջադրանքը եւ յատկապէս՝ բացայայտելու համար այս գործունէութեան լիակատար նշանակութիւնը, որի շնորհիւ մարդկային մշակոյթը մարդու ամբողջական կոչման մէջ ձեռք է բերում կարեւոր մի տեղ:

Մարդն, յիրաւի, երբ իր բազուկների աշխատանքով կամ գիտարուեստի օգնութեամբ մշակում է երկիրը, որպէսզի այն պտղաբերի եւ մարդկային ամբողջ ընտանիքին արժանի օթեւան դառնայ, եւ երբ գիտակից կերպով մասնակցում է հասարակական խմբերի կեանքին, իրագործում է Աստծոյ ժամանակների սկզբում յայտնած ծրագիրը՝ տիրելու երկրին[2] եւ կատարելագործելու արարչութիւնը, եւ մշակում է ինքն իրեն. միաժամանակ, գործադրում է Քրիստոսի մեծ պատուիրանը՝ նուիրուելու եղբայրների ծառայութեանը:

---

[1] *Հմմտ. Կղս* 3, 1-2.

[2] *Հմմտ. Ծնդ* 1, 28.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

Մարդը, սրանից բացի, նուիրուելով տարբեր գիտութիւնների ուսումնասիրութեանը, ինչպիսիք են իմաստասիրութիւնը, պատմութիւնը, չափագիտութիւնը, բնական գիտութիւնները, եւ մշակելով արուեստը, կարող է մեծագոյն չափի նպաստել վերամբարձելու մարդկային ընտանիքը ճշմարիտի, բարու եւ գեղեցիկի ամենաբարձրակարգ գաղափարներին, եւ իրողութիւնների մի տեսութեան՝ որն համընդհանուր արժէք ունի: Այդպիսով մարդկութիւնն առաւել վառ կերպով լուսաւորուած կը լինի այն սքանչելի Իմաստութեան կողմից, որն ի յաւիտենից Աստծոյ հետ էր, Նրա հետ տնօրինելով ամէն բան, շրջելով երկրագնդի վրայ եւ Իր բերկրանքն ու վայելքը մարդկանց որդիների հետ մնալու մէջ գտնելով[1]:

Սրանով իսկ մարդկային հոգին որքան աւելի ազատ է արարուած իրականութիւնների ստրկութիւնից՝ այնքան առաւել պատրաստակամութեամբ ու արագութեամբ կարող է վերամբառնալ Արարչի պաշտամունքին ու հայեցողութեանը: Մանաւանդ թէ, շնորհի ազդեցութեան ներքոյ կը տրամադրուի ճանաչելու Աստծոյ Խօսքը, որն ամէնքին եւ ամէն բան փրկելու եւ Իր մէջ վերաբովանդակելու համար մարմնանալուց առաջ արդէն «աշխարհում» էր որպէս «ճշմարիտ Լոյսը, որ լուսաւորում է իւրաքանչիւր մարդու» (Յվհ 1, 9-10)[2]:

Անշուշտ, գիտութիւնների եւ գիտարուեստի մերժամանակեայ զարգացումը – որոնք իրենց իսկ մեթոդի պատճառով չեն կարող թափանցել իրականութիւնների ներքնագոյն գոյապատճառներից ներս – կարող է նպաստել որոշակի երեւութապաշտութեան եւ անտարբեր անգիտապաշտութեան ձեւացումին, երբ այդ գիտութիւնների կողմից գործածուած հետազօտման մեթոդը յանիրաւի բարձրացւում է որպէս ամբողջական ճշմարտութեան որոնման գերագոյն կանոն: Աւելին, վտանգ է ստեղծւում, որ մարդը, չափազանց ապաւինելով մերժամանակեայ գիւտերին, մտածի՝ թէ ինքն իրեն բաւական է եւ այլեւս չփնտռի բարձրագոյն արժէքները:

Այս պախարակելի իրողութիւնները, սակայն, անհրաժեշտօրէն չեն բխում մերժամանակեայ մշակոյթից, ո՛չ էլ պէտք է մեզ գցեն նրա դրական արժէքները չճանաչելու եւ չընդունելու փորձութեան մէջ: Այդ դրական արժէքների շարքին են դասւում գիտութիւնների նկատմամբ հետաքրքրութիւնը եւ գիտական հետազօտութիւնների ժամանակ խստապահանջ հաւատարմութիւնը ճշմարիտին. արհեստագիտութեան մասնագիտական խմբերի ներսում միւսների հետ համագործակցելու անհրաժեշտութիւնը. միջազգային համերաշխութեան զգացողութիւնը. մասնագէտների պատասխանատուութեան միշտ աւելի վառ գիտակցութիւնը՝ օգնելու եւ պաշտպանելու մարդկանց. կեանքի պայմանները բոլորի համար առաւել բարեբաստիկ դարձնելու կամքը, մանաւանդ նրանց համար՝ ովքեր տառապում են անձնական պատասխանատուութիւնից զրկուած լինելու կամ մշակութային աղքատութեան պատճառով: Բոլոր այս արժէքները որոշակի կերպով կարող են որպէս նախապատրաստութիւն հանդիսանալ Աւետարանի բարի լուրն ընդունելու համար. նախապատրաստութիւն, որը կարող է կրթուել եւ կերպարանք ստանալ աստուածային սիրոյ կողմից Նրա՝ ով եկել է փրկելու աշխարհը:

ԾԸ. Բազմապիսի յարաբերութիւնները Քրիստոսի Աւետարանի եւ մշակոյթի միջեւ

Փրկութեան պատգամի եւ մշակոյթի միջեւ գոյութիւն ունեն բազմապիսի յարաբերութիւններ: Աստուած, յիրաւի, յայտնուելով Իր ժողովրդին, մինչեւ Իր լիակատար բացայայտումը յանձինս մարդացեալ Որդու, խօսել է պատմական տարբեր ժամանակաշրջաններին բնորոշ մշակոյթի յատկանշական կերպերի համաձայն:

Եկեղեցին նոյնպէս, դարերի ընթացքում տարբեր պայմանների մէջ ապրելով, գործածել է տարբեր մշակոյթները՝ Քրիստոսի պատգամը տարածելու եւ այն իր քարոզչութեան մէջ

[1] Հմմտ. Առկ 8, 30-31.

[2] Հմմտ. Սբ. Երանոս, *Adversus Haereses*, III, 11, 8 (ed. Sagnard, p. 200; Հմմտ. նոյն., 16, 6: pp. 290-292; 21, 10-22: pp. 370-372; 22, 3: p. 378; եւ այլն).

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

բոլոր ժողովուրդներին բացատրելու համար, այն ուսումնասիրելու եւ նրա վերաբերեալ ունեցած գիտելիքները խորացնելու համար, ծիսական կեանքում եւ հաւատացեալների բազմազգ հասարակութեան կեանքում այն լաւագոյնս արտայայտելու համար:

Բայց միաժամանակ, առաքուած լինելով բոլոր ժամանակների եւ բոլոր վայրերի բոլոր ժողովուրդների մօտ, բացառիկ եւ անքակտելի կերպով կապուած չէ ոչ մի ցեղի կամ ազգութեան, մասնաւոր ոչ մի ապրելակերպի, հին կամ նոր ոչ մի բարքի ու սովորոյթի: Հաւատարիմ իր սեփական աւանդութեանը եւ միաժամանակ գիտակից իր առաքելութեան ընդհանրականութեանը, կարող է հաղորդութեան մէջ մտնել մշակոյթի զանազան ձեւերի հետ. այսօրինակ հաղորդութիւնը հարստացնում է ե՛ւ ինքնին Եկեղեցուն ե՛ւ տարբեր մշակոյթները:

Քրիստոսի Աւետարանը տեւականօրէն վերանորոգում է անկեալ մարդու կեանքն ու մշակոյթը, ընդդիմանում եւ հեռացնում ու ջնջում է մեղքի մշտապէս սպառնացող հրապուրանքից սերող սխալներն ու չարիքները: Շարունակաբար մաքրագործում եւ վերամբարձում է ժողովուրդների բարոյականութիւնը: Գերբնական հարստութեամբ՝ ներքուստ ի Քրիստոս արգասաւորում, զօրացնում, ամբողջացնում եւ վերանորոգում է իւրաքանչիւր ժողովրդի հոգեւոր յատկութիւններն ու ձիրքերը[1]: Այս կերպ Եկեղեցին, կատարելով իր առաքելութիւնը[2], դրանով իսկ արդէն խթանում եւ իր նպաստն է բերում մարդկային եւ քաղաքացիական մշակոյթին, իսկ իր գործունէութեամբ, նաեւ ծիսական արարքներով, մարդուն կրթում է ներքին ազատութեան:

ԾԹ. Մշակոյթի տարբեր տեսանկիւնների ներդաշնակեցումը

Վերոյիշեալ պատճառներից ելնելով, Եկեղեցին բոլորին յիշեցնում է՝ որ մշակոյթը որպէս նպատակակէտ պէտք է ունենայ մարդկային անձի ամբողջական կատարելութիւնը, համայնքի եւ մարդկային ամբողջ հասարակութան բարիքը: Ուստի անհրաժեշտ է մշակել հոգին, այնպէս՝ որ զարգանան հիանալու, ներիմացումի, հայեցողութեան կարողութիւնները, եւ մարդն ընդունակ դառնայ անձնական դատողութիւն կայացնելու եւ մշակելու կրօնական, բարոյական եւ հասարակական զգացողութիւնը:

Մշակոյթն, իրօք, բխելով մարդու բանական եւ հասարակական բնութիւնից, արդարացի ազատութեան անդադար կարիքն ունի զարգանալու համար եւ հարկաւոր է ընդունել նրա ինքնուրոյն գործադրման օրինաւոր հնարաւորութիւնը սեփական սկզբունքների համաձայն: Այն, ուստի, իրաւացիօրէն է յարգանք պահանջում եւ մի որոշակի անձեռնմխելիութիւն է վայելում, պահպանելով անշուշտ անձի եւ հասարակութեան լինի՛ մասնաւոր թէ՛ ընդհանուր իրաւունքները, հասարակաց բարիքի սահմանների ներսում:

Սրբազան Ժողովը, վերակոչելով այն՝ ինչ ուսուցանել է Վատիկանեան Առաջին Ժողովը, ծանուցում է՝ որ «գոյութիւն ունեն ճանաչողութեան երկու» միմեանցից զատ եւ ուրոյն «կարգեր», այսինքն՝ հաւատքինը եւ բանականութեանը, եւ որ Եկեղեցին չի արգելում՝ որ «արուեստներն ու մարդկային գիտութիւնները (...) կիրառեն, իւրաքանչիւրն իրեն յատուկ բնագաւառում, սեփական սկզբունքներն ու սեփական մեթոդը»: Ուստի, «ճանաչելով այս արդարացի ազատութիւնը», Եկեղեցին հաստատում է մշակոյթի եւ յատկապէս գիտութիւնների օրինաւոր ինքնուրոյնութիւնը[3]:

Այս ամէնը պահանջում է նաեւ, որ մարդը, յարգելով բարոյական կարգը եւ հասարակաց օգտակարութիւնը, կարողանայ ազատօրէն փնտռել ճշմարտութիւնը, յայտնել եւ տարածել իր կարծիքները, եւ մշակել որեւէ արուեստ. պահանջում է, ի վերջոյ, որ

---

[1] Հմմտ. Եփս 1, 10.

[2] Հմմտ. Փիո ԺԱ.ի խօսքերը Ռոլան Գոսսըլէնին. «Երբեք չպէտք է մոռանալ, որ Եկեղեցու նպատակն աւետարանումն է եւ ո՛չ թէ քաղաքակրթումը: Եթէ Եկեղեցին քաղաքակրթում է, դա աւետարանումի համար է» (*Semaines sociales de France*, Versaille 1936, pp. 461-462).

[3] Վատիկան. Ա. Ժողով, Դաւ. Սահմ. *De fide catholica*, IV: Denz. 1795, 1799 (3015, 3019). Հմմտ. Փիո ԺԱ, Կոնդակ *Quadragesimo anno*: *AAS* 23 (1931), p. 190.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

ճշմարտության համաձայն տեղեկացուած լինի հասարակական բնոյթ ունեցող իրադարձութիւնների մասին[1]:

Հանրային իշխանութիւնների պարտականութիւնն է ո՛չ թէ սահմանել եւ որոշել մշակոյթի ձեւերին յատուկ նկարագիրը, այլ ապահովել պայմաններ եւ օժանդակ օգնութիւններ, որոնք յարմար եւ ընդունակ լինեն մշակութային կեանքը բոլորի, նաեւ պետութեան փոքրամասնութիւնների միջեւ խթանելուն[2]: Ուստի նախեւառաջ հարկաւոր է պահանջել, որ մշակոյթը սեփական նպատակակէտից չեղելով չհարկադրուի ծառայելու քաղաքական իշխանութեանը կամ տնտեսական իշխանութեանը:

ԲԱԺԻՆ Գ.

ՄՇԱԿՈՅԹԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՒԵԼ ԱՆՅԱՊԱՂ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կ. *Իւրաքանչիւր անձի մշակութային իրաւունքի ճանաչումը եւ այդ իրաւունքի կիրառումը*

Քանի որ ընծայւում է հնարաւորութիւնն այժմ բազմաթիւ մարդիկ ազատելու տգիտութեան պատուհասից, մեր ժամանակաշրջանին գերագոյն աստիճանի պատշաճ առաջադրանք է, յատկապէս քրիստոնեաների համար, անխոնջ կերպով գործի լծուել ինչպէս տնտեսական՝ այնպէս էլ քաղաքական մարզերում, որպէսզի ե՛ւ ազգային ե՛ւ միջազգային մակարդակով կայացուեն հիմնական որոշումներ, որոնց միջոցով ամէնուր ճանաչուի եւ գործադրուի բոլորի իրաւունքը՝ ստանալու անձի արժանապատուութեանը համապատասխանող մարդկային մշակոյթ, առանց ցեղային, սեռային, ազգային, կրօնական կամ հասարակական պայմանների խտրականութեան: Ուստի հարկաւոր է բոլորի համար հայթայթել մշակութային բարիքների բաւականաչափ քանակ, յատկապէս այն բարիքների՝ որոնք կազմում են այսպէս կոչուած հիմքի տարրական մշակոյթը, որպէսզի բազմաթիւ անձինք անգրագիտութեան եւ պատասխանատու գործունէութիւնից զրկուած լինելու պատճառով անընդունակ չդարձուեն իրենց իսկապէս մարդկային գործակցութիւնն ընծայելու հասարակաց բարիքին:

Հարկաւոր է, ուստի, ամէն ջանք գործածել, որպէսզի նրանք՝ ովքեր կարողութիւնն ունեն, բարձրակարգ ուսումներ կատարելու հնարաւորութիւնն ունենան. բայց այնպէս՝ որ, որքանով հնարաւոր է, նրանք կարողանան մարդկային հասարակութեան ներսում զբաղուել այն պաշտօններով, յանձնարարութիւններով ու ծառայութիւններով, որոնք համապատասխանում են նրանց բնական ընդունակութիւններին եւ ձեռքբերուած մասնագիտական կարողութիւններին[3]: Այսպիսով, իւրաքանչիւր ոք եւ իւրաքանչիւր ժողովրդի հասարակական խմբերը կը կարողանան հասնել իրենց մշակութային կեանքի լիակատար զարգացմանը, իրենց ձիրքերին եւ իրենց բնորոշ աւանդութիւններին համապատասխան:

Ինչպէս նաեւ հարկաւոր է ամէն բան անել, որպէսզի իւրաքանչիւր ոք գիտակցութիւնն ունենայ ո՛չ միայն մշակոյթի իր սեփական իրաւունքի, այլ նաեւ սեփական անձի վրայ աշխատելու եւ ուրիշներին օգնելու իր պարտականութեան: Պատահում են երբեմն կեանքի եւ աշխատանքի պայմաններ, որոնք խոչընդոտում են մշակութային ջանքին եւ հետեւաբար կործանում են մշակոյթի նկատմամբ հետաքրքրութիւնը: Սա յատուկ կերպով վերաբերւում է գիւղատնտեսական ոլորտի աշխատողներին եւ բանուորներին, որոնց համար հարկաւոր է ապահովել աշխատանքի այնպիսի պայմաններ, որոնք ո՛չ թէ կը խոչընդոտեն, այլ կը

[1] *Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Pacem in terris: *AAS* 55 (1963), p. 260.

[2] *Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Pacem in terris: *AAS* 55 (1963), p. 283; *Փիո ԺԲ, Սբ. Ծննդեան ձայնասփիւռային պատգամ*, 24 *Դեկտ.* 1941: *AAS* 34 (1942), pp. 16-17.

[3] *Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Pacem in terris: *AAS* 55 (1963), p. 260.

© «Ընդհանրական» Հրապարակչություն

www.mashtoz.org

խթանեն նրանց մշակութային կեանքը: Կանայք արդէն աշխատում են կեանքի գրեթէ բոլոր բնագաւառներում. պատշաճ է սակայն, որ նրանք կարողանան լիովին կատարել իրենց պարտականութիւններն իրենց յատուկ ինքնութեան համաձայն: Բոլորի պարտաւորութիւնն է այնպէս անել, որ մշակութային կեանքին կանանց իւրայատուկ եւ հարկաւոր մասնակցութիւնը ճանաչուի եւ խթանուի:

ԿԱ. Մարդու դաստիարակումը ամբողջական մշակոյթի

Այսօր մի ժամանակուանից աւելի դժուարին է համադրել գիտութեան տարբեր առարկաներն ու արուեստները: Իրօք, մինչ աճում է մշակոյթը կազմող տարրերի ծաւալն ու բազմազանութիւնը, միաժամանակ նուազում է անհատ մարդկանց կարողութիւնը ընկալելու եւ կանոնաւոր կերպով ներդաշնակեցնելու դրանք, այնպէս որ «ընդհանրական մարդու» պատկերը միշտ աւելի ցնդող է դառնում: Այսու հանդերձ, իւրաքանչիւր մարդ պարտաւոր է անսասան պահել մարդկային ամբողջական անձի գաղափարը, որի մէջ գերազանց տեղ են զբաղեցնում մտքի ու իմացականութեան, կամքի, խղճի ու գիտակցութեան եւ եղբայրութեան արժէքները, որոնք բոլորն էլ իրենց հիմքն ունեն Արարիչ Աստծոյ մէջ եւ հիասքանչ կերպով դարմանուել ու վերամբարձուել են Քրիստոսի մէջ:

Նախեւառաջ ընտանիքը այս դաստիարակութեան կարծես մայրն է եւ սնուցող դայեակը: Նրա գրկում զաւակները, սիրոյ մթնոլորտում ապրելով, առաւել հեշտութեամբ են ընկալում արժէքների դասակարգումն ըստ կարեւորութեան, մինչ մշակութային աւանդաբար փորձուած ձեւերը գրեթէ բնական ինքնահոսութեամբ հեղուում են պատանու աստիճանաբար զարգացող հոգու մէջ:

Այդ միեւնոյն դաստիարակութեան համար մերօրեայ հասարակութիւնում գոյութիւն ունեն նպաստաւոր պայմաններ, որոնք բխում են յատկապէս գրքի տարածման ընդլայնումից եւ մշակութային ու հասարակական հաղորդակցութեան նոր գործիքներից, որոնք կարող են նպաստել համամարդկային մշակոյթին: Աշխատաժամի քիչ թէ շատ ընդհանուր դարձած կրճատումն օրէցօր աւելացնում է մշակութային հնարաւորութիւնները բազմաթիւ մարդկանց համար: Ազատ ժամանակը պէտք է գործածուի հոգին հանգստացնելու եւ սթափեցնելու, հոգու եւ մարմնի առողջութիւնը ամրապնդելու համար, ազատ ընտրութեամբ կատարուած զբաղումների եւ ուսումների, ուրիշ երկրներ կատարուած այցելութիւնների (զբօսաշրջութեան) միջոցով, որոնցով յղկւում է մարդու հոգին եւ մարդիկ հարստանում են փոխադարձ ճանաչողութեամբ. նաեւ մարզական վարժումների ու միջոցառումների միջոցով, որոնք նպաստում են պահպանելու հոգու հաւասարակշռութիւնը եւ օգնում են եղբայրական յարաբերութիւններ հաստատելու տարբեր ազգութիւնների կամ ցեղերի պատկանող բոլոր դասակարգերի մարդկանց միջեւ: Քրիստոնեաներն, ուստի, պէտք է համագործակցեն, որպէսզի մեր ժամանակաշրջանին յատուկ մշակութային հաւաքական միջոցառումներն ու գործունէութիւնները տոգորուած լինեն մարդկային եւ քրիստոնէական հոգիով:

Այսու ամենայնիւ, այս բոլոր դիւրացումները չեն կարող ապահովել մարդու մշակութային լիակատար եւ ամբողջական կազմաւորումը, եթէ միեւնոյն ժամանակ անհոգութեամբ անտեսում ենք խորաթափանց մտքով ինքներս մեր առջեւ հարց դնելու մարդկային անձի համար մշակոյթի եւ գիտութեան ունեցած նշանակութեան վերաբերեալ:

ԿԲ. Մարդկային մշակոյթի եւ քրիստոնէական վարդապետութեան միջեւ համաձայնութիւնը

Թէեւ Եկեղեցին մեծապէս նպաստել է մշակոյթի զարգացմանը, փորձառութիւնը սակայն ցոյց է տալիս, որ դիպուածական պարագաների պատճառով միշտ չէ՝ որ մշակոյթի եւ քրիստոնէական կազմաւորման միջեւ համաձայնութիւնն իրականացել է առանց դժուարութիւնների:

Այդ դժուարութիւններն անհրաժեշտաբար վնաս չեն հասցնում հաւատքին. մանաւանդ թէ, կարող են խթանել հոգին ձեռքբերելու հաւատքի առաւել խնամուած եւ խորացուած իմացում: Յիրաւի, գիտութիւնների, ինչպէս նաեւ պատմութեան եւ իմաստասիրութեան վերջին ուսումնասիրութիւններն ու նոր յայտնաբերումները յարուցում են նոր խնդիրներ, որոնք էլ իրենց հետ բերում են հետեւանքներ նաեւ գործնական կեանքի համար եւ պահանջում են նոր քննարկումներ նաեւ աստուածաբանների կողմից: Սրանից բացի, աստուածաբանները կանչուած են, յարգելով աստուածաբանական գիտութեանը յատուկ մեթոդներն ու պահանջները, որոնել միշտ աւելի յարմար ձեւեր՝ քրիստոնէական վարդապետութիւնն իրենց դարաշրջանի մարդկանց հաղորդելու համար, քանի որ ա՛յլ է հաւատքի աւանդը կամ ճշմարտութիւնները, ա՛յլ է ձեւը՝ որով դրանք արտայայտւում են, անշուշտ պայմանով՝ որ ամբիծ պահպանուի դրանց նշանակութիւնն ու խոր իմաստը[1]: Հովուական առաքելութեան մէջ պէտք է բաւականաչափ ճանաչուեն եւ գործածուեն ո՛չ միայն աստուածաբանութեան սկզբունքները, այլ նաեւ աշխարհային գիտութիւնների, նախեւառաջ հոգեբանութեան եւ հասարակագիտութեան յայտնաբերումները, այնպէս՝ որ հաւատացեալները նոյնպէս առաջնորդուեն հաւատքի առաւել մաքուր եւ առաւել հասուն կեանքի:

Իրենց ձեւով, գրականութիւնն ու արուեստները նոյնպէս մեծ կարեւորութիւն ունեն Եկեղեցու կեանքի համար: Դրանց նպատակն է, յիրաւի, արտայայտել մարդուն իւրայատուկ բնութիւնը, ինքն իրեն եւ աշխարհը ճանաչելու եւ կատարելագործելու ջանքում ունեցած նրա խնդիրներն ու նրա փորձառութիւնը. բացայայտել մարդու դիրքը պատմութեան մէջ եւ տիեզերքում. լուսաբանել նրա խեղճութիւններն ու նրա ուրախութիւնները, նրա կարիքներն ու նրա կարողութիւնները. եւ հեռանկարել նրա համար մի լաւագոյն վիճակի կարելիութիւնը: Այսպիսով կարող են վերամբարձել մարդկային կեանքը, որն իսկ արտայայտում են բազմակերպ ձեւերով, ժամանակների եւ վայրերի համաձայն:

Հարկաւոր է, հետեւաբար, այնպէս վարուել, որ արուեստագէտներն իրենց գործունէութեան մէջ Եկեղեցու կողմից հասկացուած զգան իրենց եւ, կանոնաւոր ազատութիւն վայելելով, առաւել դիւրին յարաբերութիւններ հաստատեն քրիստոնէական համայնքի հետ: Եկեղեցու կողմից պէտք է ճանաչուեն եւ ընդունուեն մեր ժամանակներին յարմար արուեստագիտական նոր ոճերը, տարբեր ազգութիւնների եւ երկրամասերի ինքնութեան համաձայն: Դրանց տեղադրումը թող թոյլատրուի նաեւ պաշտամունքային շինութիւններում, եթէ ծիսական պահանջներին յարմար եւ համապատասխան արտայայտչամիջոցներով հոգին վերամբարձում են առ Աստուած[2]:

Այսպիսով Աստծոյ ճանաչումը լաւագոյնս բացայայտւում է եւ աւետարանական քարոզչութիւնն առաւել դիւրընկալելի է դառնում մարդկանց իմացականութեանը եւ երեւում է որպէս գոյութեան իրենց պայմանների հետ համաբնութենակից:

Հաւատացեալներն, ուստի, սերտագոյն միութեամբ պէտք է ապրեն իրենց ժամանակուայ մարդկանց հետ եւ ջանան անթերի կերպով թափանցել նրանց մտածելու եւ զգալու կերպերից ներս, որոնք էլ հէնց արտայայտւում են մշակոյթի միջոցով: Պէտք է կարողանան նոր գիտութիւնների, նոր ուսմունքների եւ ամենանոր բացայայտումների ճանաչումը ներդաշնակեցնել քրիստոնէական բարոյականութեան եւ մտքի հետ, որպէսզի կրօնական զգացողութիւնն ու բարոյական ուղղամտութիւնը նրանց մօտ համաքայլ ընթանան գիտական ճանաչողութեան եւ գիտարուեստի տեւական զարգացման հետ: Այդպիսով կը կարողանան բոլոր իրողութիւնները քրիստոնէական իրական զգացողութեամբ դատել եւ մեկնաբանել:

Նրանք՝ ովքեր կղերական վարժարաններում եւ համալսարաններում նուիրւում են աստուածաբանական գիտութիւնների ուսումնասիրմանը, պէտք է ջանան գործակցել միւս գիտութիւններում հմուտ մարդկանց հետ, համատեղելով իրենց ուժերն ու տեսութիւնները:

---

[1] Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Վատիկան. Բ. ժողովի բացման ճառը 1962թ. Հոկտ. 11ին. *AAS* 54 (1962), p. 792.

[2] Հմմտ. Վատիկան. Բ. ժողով, Սահմ. *Sacrosanctum Concilium*, 123: *AAS* 56 (1964), p. 131; Պողոս Զ, 1964թ. Մայիսի 7ին հռոմէացի արուեստագէտներին ուղղուած ճառը. *AAS* 56 (1964), pp. 439-442.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

Աստուածաբանական փնտռտուքը, մինչ ձգտում է հասնելու յայտնուած ճշմարտութեան խորաթափանց ճանաչողութեանը, չպէտք է անտեսի շփումը սեփական ժամանակաշրջանի հետ, որպէսզի կարողանայ գիտութեան տարբեր մասնաճիւղերում փորձագէտ մարդկանց օգնել ձեռքբերելու հաւատքի առաւել լիակատար ճանաչում: Այս համագործակցութիւնը մեծապէս օգտակար կը լինի սրբազան պաշտօնեաների կրթութեանը, որոնք կը կարողանան մեր ժամանակակիցներին առաւել յարմար եղանակով ներկայացնել Աստծոյ, մարդու եւ աշխարհի վերաբերեալ Եկեղեցու վարդապետութիւնը, այնպէս՝ որ այն առաւել յօժարութեամբ կ՚ընդունուի նրանց կողմից[1]: Մանաւանդ թէ, փափաքելի է, որ բազմաթիւ աշխարհականներ պատշաճ կրթութիւն ստանան սրբազան գիտութիւններում եւ որ նրանցից շատերը նպատակասլաց կերպով նուիրուեն այդ ուսումներին եւ խորացնեն դրանք գիտական համապատասխան միջոցներով: Բայց որպէսզի կարողանան կատարել իրենց առջեւ դրուած առաջադրանքները, ինչպէս եկեղեցական՝ այնպէս էլ աշխարհական հաւատացեալներին պէտք է տրուի արդարացի ազատութիւն՝ խոնարհութեամբ եւ քաջութեամբ պրպտելու, մտածելու եւ արտայայտելու իրենց կարծիքը իրենց ձեռնհասութեան մարզում[2]:

ԳԼՈՒԽ Գ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԿԳ. Տնտեսական կեանքը եւ ժամանակակից մի քանի յատկանշական երեւոյթներ

Տնտեսական-հասարակական կեանքում նոյնպէս գերագոյն աստիճանի կարեւորութիւն պէտք է տրուի եւ խթանուի մարդկային անձի արժանապատուութիւնը եւ նրա ամբողջական կոչումը, ինչպէս նաեւ ամբողջ հասարակութեան բարիքը: Մարդն, յիրաւի, տնտեսական-հասարակական ամբողջ կեանքի հեղինակն է, կենտրոնն ու նպատակակէտը:

Ժամանակակից տնտեսութիւնը, ինչպէս հասարակական կեանքի միւս բոլոր մարզերը, յատկանշւում է բնութեան վրայ մարդու աճող տիրապետութեամբ, քաղաքացիների, խմբերի եւ ժողովուրդների միջեւ յարաբերութիւնների բազմապատկմամբ ու սերտացմամբ եւ նրանց փոխկախուածութեամբ, ինչպէս նաեւ հանրային իշխանութիւնների առաւել ուժգին միջամտութեամբ: Միաժամանակ, արտադրողական արդիւնաւէտութեան եւ փոխանակումների ու ծառայութիւնների լաւագոյն կազմակերպման զարգացումը տնտեսութիւնը դարձրել է յարմար գործիք՝ աւելի լաւ գոհացնելու մարդկային ընտանիքի ընդարձակուած կարիքները:

Այսու հանդերձ, չեն պակասում մտահոգուելու առիթները: Բազմաթիւ մարդիկ, յատկապէս տնտեսապէս զարգացած երկրամասերում, թւում է՝ թէ կառավարւում են բացառապէս տնտեսութեան պահանջներով, այնպէս՝ որ նրանց անձնական եւ հասարակական գրեթէ ամբողջ կեանքից ներս է թափանցում տնտեսապաշտական մի մտածելակերպ, եւ սա տարածւում է ե՛ւ հաւաքական տնտեսութիւն ունեցող երկրներում ե՛ւ միւսների մօտ: Մի ժամանակաշրջանում, երբ տնտեսական կեանքի զարգացումը բանական եւ մարդկային կերպով կողմնորոշուած եւ համակարգուած լինելու դէպքում կարող էր հնարաւոր դարձնել հասարակական անհաւասարութիւնների մեղմացումը, շատ յաճախ ինքն իսկ վերածւում է այդ անհաւասարութիւնների ծանրացման պատճառի, կամ, որոշակի վայրերում, մինչեւ իսկ տկարների հասարակական պայմանների յետադիմութեան եւ աղքատների հանդէպ արհամարհանքի: Մինչ մարդկանց վիթխարի բազմութիւնների համար պակասում են կեանքի սերտօրէն անհրաժեշտ պարագաները, ոմանք, նաեւ նուազ զարգացած երկրներում, ապրում են փարթամ ճոխութեան մէջ կամ վատնում ու մսխում են կեանքի

[1] Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, «Optatam totius» եւ «Gravissimum educationis» Վճռագրերը:

[2] Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ. Lumen Gentium, Դ 37: AAS 57 (1965), p. 42-43.

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

բարիքները: Ճոխութիւնը կցւում է խեղճութեանը: Եւ մինչ սակաւաթիւ մարդիկ ունեն որոշումներ կայացնելու բաւականին ընդարձակ իշխանութիւն, շատերին գրեթէ ամբողջովին պակասում է սեփական նախաձեռնութեամբ կամ սեփական պատասխանատուութեամբ գործելու հնարաւորութիւնը, յաճախ մնալով կեանքի եւ աշխատանքի այնպիսի պայմաններում, որոնք վայել չեն մարդկային անձին:

Տնտեսական եւ հասարակական նման անհաւասարակշռութիւններ են նկատւում գիւղատնտեսութեան, արդիւնաբերութեան եւ ծառայութիւնների բնագաւառի, ինչպէս նաեւ միեւնոյն պետութեան տարբեր մարզերի միջեւ: Օրէցօր աւելի է ծանրանում տնտեսապէս առաւել յառաջադիմեալ եւ միւս պետութիւնների միջեւ հակադրութիւնը, ինչը որ կարող է վտանգի ենթարկել խաղաղութիւնն ամբողջ աշխարհում:

Մեր ժամանակուայ մարդիկ միշտ աւելի զգայուն գիտակցութեամբ են հակազդում նմանօրինակ անհաւասարութիւնների դիմաց. նրանք խորապէս համոզուած են, որ ժամանակակից աշխարհին բնորոշ գիտարուեստական եւ տնտեսական ամենալայն հնարաւորութիւնները կարող էին եւ պարտաւոր էին ուղղել այս տխուր իրավիճակը: Բայց դրա համար հարկաւոր է բազմաթիւ բարեփոխումներ կատարել տնտեսական-հասարակական կեանքի կառոյցներում. անհրաժեշտ է նաեւ, որ բոլորը փոխեն իրենց մտածելակերպն ու կենցաղային սովորոյթները: Սա ի նկատի ունենալով, պատմութեան ընթացքում Եկեղեցին Աւետարանի լոյսի ներքոյ բանաձեւել եւ, յատկապէս այս վերջին ժամանակներում, ընդարձակ կերպով ուսուցանել է արդարութեան եւ անկողմնակալութեան սկզբունքները, որոնք պահանջում է մարդկային ուղղամիտ բանականութիւնը եւ որոնք վաւերական են լինի՛ անհատական կամ հասարակական, լինի՛ միջազգային կեանքի համար: Սրբազան Ժողովը, հաշուի առնելով ներկայ ժամանակաշրջանի իւրայատկութիւնները, մտադիր է վերահաստատել այդ սկզբունքները եւ սահմանել կողմնորոշիչ մի քանի ուղղութիւններ, ի մասնաւորի՝ տնտեսական զարգացման պահանջների վերաբերեալ[1]:

ԲԱԺԻՆ Ա.
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԿԴ. Տնտեսական զարգացումը պէտք է ծառայի մարդուն

Այսօր առաւել քան երբեք, բնակչութեան աճին դիմագրաւելու եւ մարդկութեան յարաճուն ձգտումներին պատասխանելու համար, արդարացի հակում կայ բազմապատկելու բարիքների արտադրութիւնը գիւղատնտեսութեան եւ արդիւնաբերութեան մէջ եւ ծառայութիւնների արդիւնաւէտութիւնը: Ուստի հարկաւոր է սատարել գիտարուեստի զարգացմանը, բարեփոխումների ոգուն, նոր ձեռնարկութիւնների ստեղծմանը եւ նրանց ընդլայնմանը, արտադրողական գործընթացի եւ արտադրութեան բոլոր մասնակիցների ներդրած ջանքի մեթոդների պատշաճեցմանը, մի խօսքով՝ այն ամէնին՝ ինչը որ կարող է նպաստել այս զարգացմանը: Բայց նմանօրինակ զարգացման վերջնական եւ հիմնական նպատակակէտը չի կայանում սոսկ արտադրուած բարիքների աճի մէջ, ո՛չ էլ սոսկ շահի հետապնդման կամ տնտեսական գերակշռութեան մէջ, այլ աւելի՝ մարդուն ծառայելու մէջ. մարդն ամբողջովին վերցուած, այսինքն՝ հաշուի առնելով նրա նիւթական կարիքների եւ նրա մտային, բարոյական, հոգեւոր եւ կրօնական պահանջների դասակարգութիւնն ըստ կարեւորութեան աստիճանի. իւրաքանչի՛ւր մարդու, ի նկատի ունենք, եւ մարդկային իւրաքանչի՛ւր խմբի, որեւէ՛ ցեղի կամ ցամաքամասի: Ուստի, տնտեսական գործունէութիւնը պէտք է յառաջ տարուի տնտեսութեանը իւրայատուկ օրէնքների եւ մեթոդների համաձայն,

[1] *Հմմտ. Փիո ԺԲ*, 1952*թ. Մարտի* 23*ի Քարոզը*. AAS 44 (1952), p. 273; *Յովհաննէս ԻԳ*, 1959*թ. Մայիսի* 1*ին Իտալացի Բանուորների Կաթողիկէ Շարժման ներկայացուցիչներին ուղղուած Խօսքը*. AAS 51 (1959), p. 358.

© «Ընդհանրական» Հրապարակչություն
www.mashtoz.org

բայց բարոյական կարգի սահմաններից ներս[1], այնպէս՝ որ համապատասխանի մարդու վերաբերեալ Աստծոյ ծրագրին[2]:

ԿԵ. Տնտեսական զարգացումը պէտք է մարդու յսկողութեան ներքոյ լինի

Տնտեսական զարգացումը պէտք է մարդու յսկողութեան ներքոյ մնայ: Պէտք է թողնուի սակաւաթիւ անձանց կամ խմբերի կամայականութեանը, որոնք իրենց ձեռքում կը կենտրոնացնեն տնտեսական չափազանց իշխանութիւն, ո՛չ էլ միայն քաղաքական հասարակութեանը, ո՛չ էլ առաւել հզօր մի քանի պետութիւնների: Ընդհակառակն, պատշաճ է՝ որ բոլոր մակարդակների եւ, երբ խօսքը վերաբերւում է միջազգային յարաբերութիւններին, բոլոր ազգութիւնների հնարաւորինս մեծ թուով մարդիկ կարողանան գործօն կերպով մասնակցել տնտեսութեանը ուղղութիւն եւ կողմնորոշում տալու գործին: Հաւասարապէս անհրաժեշտ է, որ անհատների եւ նրանց ազատ ընկերակցութիւնների ինքնակամ նախաձեռնութիւնները պատշաճ եւ կանոնաւոր կերպով համակարգուեն եւ ներդաշնակեցուեն հանրային իշխանութիւնների բազմապիսի գործունէութեան հետ:

Տնտեսական զարգացումը չի կարող թողնուել սոսկ անհատների տնտեսական գործունէութեան գրեթէ մեքենայական ընթացքին, ո՛չ էլ՝ միմիայն հանրային իշխանութեան որոշմանը: Այս իսկ պատճառով, հարկաւոր է մատնացոյց անել ու մեղադրել սխալները ե՛ւ այն ուսմունքների, որոնք յանուն ազատութեան կեղծ գաղափարի հակառակւում են հարկաւոր բարեփոխումներին, ե՛ւ այն ուսմունքների, որոնք անհատ անձանց եւ խմբերի հիմնական իրաւունքները զոհում են արտադրութեան հաւաքական կազմակերպմանը[3]:

Միւս կողմից, բոլոր քաղաքացիները պէտք է յիշեն, որ իրենք իրաւունքը եւ պարտականութիւնն ունեն – քաղաքական իշխանութիւնները պէտք է ճանաչեն եւ ընդունեն սա – իրենց կարողութիւնների համաձայն աջակցելու սեփական հասարակութեան զարգացմանը: Յատկապէս տնտեսապէս նուազ յառաջադիմեալ երկրամասերում, ուր հրատապ ստիպողականութեամբ անհրաժեշտ է այնտեղ գոյութիւն ունեցող նիւթական եւ մարդկային բոլոր պաշարների գործածումը, համընդհանուր բարիքին ծանրօրէն վնասում են նրանք՝ ովքեր անգործ են պահում սեփական հարստութիւնները, կամ նրանք՝ ովքեր – բացառութեամբ գաղթելու անձնական իրաւունքի – սեփական հասարակութիւնը զրկում են նիւթական եւ հոգեւոր միջոցներից, որոնց կարիքն այն ունի:

ԿԶ. Տնտեսական-հասարակական վիթխարի անհաւասարութիւններ, որոնք հարկաւոր է վերացնել

Արդարութեան եւ անկողմնակալութեան պահանջներին պատասխանելու համար հարկաւոր է ամէն ճիգ գործադրել, որպէսզի, յարգելով անձնական իրաւունքներն ու իւրաքանչիւր ժողովրդին յատուկ ինքնութիւնը, հնարաւորինս ամենաարագ կերպով փարատուեն տնտեսական վիթխարի անհաւասարութիւնները, որոնք իրենց հետ բերում են խտրականութիւններ անհատական իրաւունքներում եւ հասարակական պայմաններում, ինչպիսիք այսօր պատահում են եւ յաճախ ծանրանում: Նմանապէս, բազմաթիւ

[1] Հմմտ. Փիո ԺԱ, Կոնդակ *Quadragesimo anno*: *AAS* 23 (1931), p. 190ss; Փիո ԺԲ, 1952թ. Մարտի 23ի Քարոզը. *AAS* 44 (1952), p. 276ss; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), p. 450; Վատիկան. Բ. Ժողով, Վճռագիր *Inter mirifica*, Ա 6: *AAS* 56 (1964), p. 147.

[2] Հմմտ. Մտթ 16, 26; Ղկս 16, 1-31; Կղս 3, 17.

[3] Հմմտ. Լեւոն ԺԳ, Կոնդակ *Libertas*: *ASS* 20 (1887-1888), pp. 597ss; Փիո ԺԱ, Կոնդակ *Quadragesimo anno*: *AAS* 23 (1931), p. 191ss; Նոյն, Կոնդակ *Divini Redemptoris*: *AAS* 39 (1937), p. 65ss; Փիո ԺԲ, 1941թ. Սուրբ Ծննդեան Քարոզը. *AAS* 34 (1942), p. 10ss; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), pp. 401-464.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

շրջաններում, հաշուի առնելով գիւղատնտեսական բնագաւառի իւրայատուկ դժուարութիւնները ե՛ւ արտադրութեան ե՛ւ արտադրանքի առեւտրականացման մէջ, գիւղատնտեսութեամբ զբաղուողները պէտք է օժանդակութիւն ստանան՝ արտադրանքն աւելացնելու եւ նրա վաճառքն ապահովելու, անհրաժեշտ բարեփոխումներն ու մեթոդների նորացումն իրականացնելու, ինչպէս նաեւ վարձատրութեան արդար աստիճանի հասնելու համար, որպէսզի չմնան, ինչպէս յաճախ պատահում է, հասարակական ցածր պայմաններում: Գիւղատնտեսներն, իրենց հերթին, յատկապէս երիտասարդները, պէտք է սիրով գործի լծուեն՝ բարելաւելու համար իրենց մասնագիտական փորձն ու կարողութիւնները, առանց որոնց անհնարին է զարգացնել գիւղատնտեսութիւնը[1]*:*

Արդարութիւնն ու անկողմնակալութիւնը նմանապէս պահանջում են, որ շարժականութիւնը, որը բացարձակ կերպով հարկաւոր է զարգացող տնտեսութեան համար, կանոնաւորուի այնպէս՝ որ խուսափուի անհատների եւ նրանց ընտանիքների կեանքն անորոշ ու անկայուն դարձնելուց: Ինչ վերաբերւում է այն աշխատաւորներին, որոնք ուրիշ պետութիւններից կամ երկրամասերից գալով՝ իրենց աշխատանքով մասնակցում են տուեալ պետութեան կամ երկրամասի տնտեսական զարգացմանը, հարկաւոր է բարեխղճօրէն վերացնել վարձատրութեան կամ աշխատանքի պայմաններում գոյութիւն ունեցող ամէն տեսակի խտրականութիւնները: Ինչպէս նաեւ, բոլորը եւ նախեւառաջ հանրային իշխանութիւնները պէտք է ընդունեն նրանց որպէս անձինք եւ ո՛չ թէ պարզապէս արտադրութեան գործիք եւ միջոց: Պէտք է օգնեն նրանց, որպէսզի կարողանան իրենց մօտ ունենալ իրենց ընտանիքներին եւ ձեռքբերել վայելուչ բնակարան: Պէտք է նաեւ նպաստեն հիւրընկալող ժողովրդի կամ երկրամասի հասարակական կեանքում նրանց համարկմանը: Այսուամենայնիւ, որքանով հնարաւոր է, պէտք է աշխատատեղեր ստեղծուեն նրանց իսկ ծննդավայրում:

Տնտեսութիւններում, որոնք ներկայիս գտնւում են նոր ձեւափոխումների փուլում, ինչպէս նաեւ արդիւնաբերական հասարակութեան նոր ձեւերում, ուր, օրինակի համար, հետզհետէ առաւել լայնատարած կերպով կիրառւում է ինքնաշխատութիւնը, հարկաւոր է միջոցներ ձեռնարկել՝ բաւարար եւ յարմար աշխատանքով ապահովելու համար իւրաքանչիւրին, արհեստավարժական եւ մասնագիտական պատշաճ կրթութիւն ստանալու հնարաւորութեան հետ միասին: Սրանից բացի, հարկաւոր է գոյապահպանման միջոցներով ապահովել եւ մարդկային արժանապատուութիւնը երաշխաւորել նրանց՝ ովքեր, յատկապէս առողջութեան եւ տարիքի պատճառով, գտնւում են իւրայատուկ դժուարութիւնների մէջ:

ԲԱԺԻՆ Բ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԱՄԲՈՂՋՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՒՈՂ ՄԻ ՔԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔ

ԿԷ. *Աշխատանք, աշխատանքի պայմաններ եւ ազատ ժամանակ*

Մարդկային աշխատանքը, որի միջոցով արտադրւում եւ փոխանակւում են ինչքեր կամ մատուցւում են տնտեսական ծառայութիւններ, գերազանց արժէք ունի՝ քան տնտեսական կեանքի միւս տարրերը, քանի որ դրանք միայն գործիքային արժէք ունեն:

Այդ աշխատանքն, իրօք, թէ՛ անկախաբար եւ թէ՛ ուրիշի ենթակայութեամբ կատարուած, բխում է ուղղակիօրէն անձից, որը բնութեան մէջ դրոշմում է գրեթէ իր կնիքը եւ այն ենթարկում է իր կամքին: Աշխատանքով մարդը սովորաբար հայթայթում է իր եւ իր ընտանիքի անդամների ապրուստին հարկաւոր պարագաները, հաղորդակցւում է ուրիշների հետ, ծառայութիւն է մատուցում մարդկանց՝ իր եղբայրներին, եւ կարող է գործադրել մի իրական սէր եւ գործօն կերպով համագործակցել աստուածային արարչագործութեան

[1] *Գիւղատնտեսութեան խնդիրների վերաբերեալ հմմտ. յատկապէս՝ Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Mater et Magistra: *AAS* 53 (1961), p. 341ss.

ամբողջացմանը: Է՛լ աւելին. հաւատքով գիտենք, որ սեփական աշխատանքն Աստծուն ընծայելով՝ մարդը մասնակցում է ինքնին Քրիստոսի փրկչական գործին, որը Նազարէթում սեփական ձեռքերով աշխատելով՝ աշխատանքին հաղորդել է վսեմագոյն արժանապատուութիւն: Այստեղից էլ բխում են, իւրաքանչիւր մարդու համար, ե՛ւ հաւատարմօրէն աշխատելու պարտականութիւնը, ե՛ւ աշխատանք ունենալու իրաւունքը: Համապատասխանաբար, հասարակութեան պարտականութիւնն է, նրանում գոյութիւն ունեցող պայմաններին համեմատ, իր կողմից օգնելու քաղաքացիներին՝ գտնելու բաւարար աշխատանք: Ի վերջոյ, աշխատանքը պէտք է այնպէս վարձատրուի, որ բաւարար միջոցներ ապահովի՝ նիւթական, հասարակական, մշակութային եւ հոգեւոր հարթութիւններում անհատի եւ նրա ընտանիքի արժանապատիւ կեանքը հնարաւոր դարձնելու համար, հաշուի առնելով իւրաքանչիւրի աշխատանքի տեսակն ու տնտեսական եկամտաբերութեան աստիճանը, ինչպէս նաեւ պայմանները, որոնց մէջ գտնւում է ձեռնարկութիւնը, եւ հասարակաց բարիքը[1]:

Քանի որ տնտեսական գործունէութիւնը մեծաւ մասամբ իրականանում է արտադրողական խմբերում, ուր միմեանց միանում են բազմաթիւ մարդիկ, անարդար եւ անմարդկային է այդ գործունէութիւնը կազմակերպել այնպիսի կառուցուածքներով եւ օրէնսդրութիւններով, որոնք վնաս եւ կորուստ են հասցնում նրանց՝ ովքեր այդտեղ աշխատում են: Զափազանց յաճախ պատահում է, սակայն, նաեւ մեր օրերում, որ աշխատողները որոշակի իմաստով ծառայ են դառնում իրենց աշխատանքին: Դա բացարձակապէս արդարացում չի գտնում այսպէս կոչուած տնտեսական օրէնքներում: Հարկաւոր է, հետեւաբար, արտադրողական ամբողջ գործընթացը յարմարեցնել անձի կարիքներին եւ նրա կենսակերպին, նախեւառաջ նրա ընտանեկան կեանքի պահանջներին, յատկապէս ընտանիքի մայրերի առընչութեամբ, միշտ հաշուի առնելով իւրաքանչիւրի սեռն ու տարիքը: Աշխատաւորներին հարկաւոր է ապահովել նաեւ իրենց ունակութիւնները զարգացնելու եւ աշխատանքի կատարման մէջ իսկ իրենց անձնականութիւնն արտայայտելու հնարաւորութեամբ: Աշխատանքային այդ գործունէութեանը պարտուպատշաճ պատասխանատուութեամբ ժամանակ եւ ուժեր տրամադրելով հանդերձ, բոլոր աշխատաւորները, սակայն, պէտք է վայելեն բաւարար հանգիստ եւ ազատ ժամանակ, որոնք իրենց թոյլ կը տան հոգ տանելու իրենց ընտանեկան, մշակութային, հասարակական եւ կրօնական կեանքին: Մանաւանդ թէ, պէտք է հնարաւորութիւն ունենան նուիրուելու ազատ գործունէութիւնների, որոնք կը նպաստեն զարգացնելու այն ուժերն ու ընդունակութիւնները, որոնք թերեւս կարելիութիւնը չեն ունենում մշակելու իրենց մասնագիտական աշխատանքում:

ԿԸ. Ձեռնարկութեան եւ տնտեսական ընդհանուր ուղղուածութեան մէջ մասնակցութիւնը. աշխատանքային ընդհարումներ

Տնտեսական ձեռնարկութիւններում միմեանց միանում են անձինք, այսինքն՝ Աստծոյ պատկերով ստեղծուած ազատ եւ ինքնուրոյն մարդիկ: Ուստի, ի նկատի առնելով իւրաքանչիւրի պաշտօնն ու դերը – ե՛ւ սեփականատէրերի, ե՛ւ ձեռնարկատէրերի, ե՛ւ ղեկավարողների, ե՛ւ աշխատաւորների – եւ պահպանելով ձեռնարկութեան ղեկավարման անհրաժեշտ միասնականութիւնը, հարկաւոր է խրախուսել եւ խթանել բոլորի գործօն մասնակցութիւնը ձեռնարկութեան տնօրինմանը, կերպերով՝ որոնք հարկաւոր է յարմար

[1] Հմմտ. Լեւոն ԺԳ, Կոնդակ *Rerum Novarum*: *ASS* 23 (1890-1891), p. 649, p. 662; Փիո ԺԱ, Կոնդակ *Quadragesimo anno*: *AAS* 23 (1931), pp. 200-201; Նոյն, Կոնդակ *Divini Redemptoris*: *AAS* 29 (1937), p. 92; Փիո ԺԲ, 1942թ. Սբ. Ծննդեան ձայնասփիւռային պատգամը. *AAS* 35 (1943), p. 20; Նոյն, 1943թ. Յունիսի 13ի Քարոզը. *AAS* 35 (1943), p. 172; Նոյն, 1951թ. Մարտի 11ի ձայնասփիւռային պատգամը Իսպանիայի բանուորներին. *AAS* 43 (1951), p. 215; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), p. 419.

© «Ընդհանրական» Հրապարակագրություն
www.mashtoz.org

եղանակներով ձեւակերպել[1]: Քանի որ, սակայն, բազմաթիւ դէպքերում ո՛չ թէ ձեռնարկութեան, այլ առաւել բարձրակարգ հաստատութիւնների վերադաս մակարդակով են այլեւս կայացւում տնտեսական եւ հասարակական ընդհանուր պայմանների վերաբերեալ որոշումները, որոնցից կախումնաւոր է աշխատաւորների եւ նրանց զաւակների ապագան, հարկաւոր է՝ որ նրանք գործօն մասնակցութիւն ունենան նաեւ այդ որոշումների կայացմանը, անձամբ կամ ազատօրէն ընտրուած ներկայացուցիչների միջոցով:

Մարդկային անձի հիմնական իրաւունքների շարքին հարկաւոր է դասել աշխատաւորների իրաւունքը՝ ազատօրէն հիմնելու իրենց արհեստակցական միութիւնները, որոնք կարող են իսկապէս ներկայացնել իրենց եւ նպաստել տնտեսական կեանքի արդարացի կազմակերպմանը, ինչպէս նաեւ՝ այդ միութիւնների գործունէութեանը ազատօրէն մասնակցելու իրաւունքը, առանց բացասական հետեւանքների կամ վրէժխնդրութիւնների վտանգին ենթարկուելու: Նմանատիպ կազմակերպուած մասնակցութեան շնորհիւ, տնտեսական եւ հասարակական յարաճուն կրթութեան հետ մէկտեղ, բոլորի մօտ միշտ աւելի կ՚աճի սեփական պաշտօնի ու դերի եւ պատասխանատուութեան գիտակցութիւնը. այսպիսով նրանք կը մղուեն զգալու իրենց գործօն մասնակիցներ, իւրաքանչիւրի կարողութիւնների եւ ընդունակութիւնների համաձայն, տնտեսական եւ հասարակական զարգացման ամբողջ գործին եւ համաշխարհային համամարդկային բարիքի կերտմանը:

Տնտեսական-հասարակական բախումների դէպքում հարկաւոր է ամէն ջանք գործածել՝ հասնելու համար խաղաղ լուծումների: Թէեւ միշտ հարկաւոր է նախեւառաջ դիմել կողմերի միջեւ անկեղծ երկխօսութեանը, գործադուլը կարող է սակայն մնալ, այսօրուայ ժամանակակից պարագաներում եւս, որպէս անհրաժեշտ – թէեւ՝ ծայրայեղ – միջոց, սեփական իրաւունքների պաշտպանութեան եւ աշխատաւորների արդարացի ձգտումների գոհացման համար: Հարկաւոր է, սակայն, որքան հնարաւոր է արագ գտնել յարմար ուղիները՝ վերսկսելու համար երկխօսութիւնը բանակցութիւնների եւ հաշտեցման նպատակով:

ԿԹ. Երկրի բարիքները եւ նրանց սահմանումը բոլոր մարդկանց

Աստուած երկիրը եւ նրանում պարունակուած ամէն բան սահմանել է բոլոր մարդկանց եւ բոլոր ժողովուրդների գործածութեանը, ուստի ստեղծուած բարիքներին պէտք է արդար ու անկողմնակալ կերպով մասնակից դառնան բոլորը, որպէս առաջնորդ ունենալով արդարութիւնը եւ գոհացնելով սիրոյ պահանջները[2]: Հետեւաբար, ինչպիսիք էլ որ լինեն սեփականութեան առարկայական կերպերը, յարմարեցուած՝ ժողովուրդների օրինական կանոնակարգումներին ըստ բազմազան ու փոփոխական պարագաների, միշտ հարկաւոր է հաշուի առնել բարիքների այս համընդհանուր սահմանումը: Գործածելով այդ բարիքները, մարդն արտաքին առարկաները, որոնց օրինաւոր կերպով տիրապետում է, պէտք է համարի ո՛չ միայն որպէս իրենը, այլ նաեւ որպէս ընդհանուր, այն իմաստով՝ որ դրանք կարող են օգտակար լինել ո՛չ միայն իրեն, այլ նաեւ ուրիշների[3]: Ակնյայտ է, որ բոլոր մարդկանց

---

[1] Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), pp. 408, 424, 427. Ձեռնարկութեան «տնօրինում» բառը, տնօրինումը՝ հոգածութեան իմաստով, քաղուած է Փիո ԺԱ.ի հետեւեալ Կոնդակի լատիներէն բնագրից. *Quadragesimo anno*: *AAS* 23 (1931), p. 199. Խնդրի զարգացման տեսանկիւնից դիտուած, հմմտ. նաեւ. Փիո ԺԲ, 1950թ. Յունիսի 3ի Քարոզը. *AAS* 42 (1950), pp. 485-488; Պօղոս Զ, 1964թ. Յունիսի 8ի Քարոզը. *AAS* 56 (1964), pp. 574-579.

[2] Հմմտ. Փիո ԺԲ, Կոնդակ *Sertum laetitiae*: *AAS* 31 (1939), p. 642; Յովհաննէս ԻԳ, *Allocutio concistorialis*: *AAS* 52 (1960), pp. 5-11; Նոյն, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), p. 411.

[3] Հմմտ. Սբ. Թովմաս Աքուինացի, *Summa Theologiae*, II-II, q. 32, a. 5 ad 2; Նոյն, q. 66, a. 2; Հմմտ. Լեւոն ԺԳ.ի բացատրութիւնը, Կոնդակ *Rerum Novarum*: *ASS* 23 (1890-91), p. 651; Հմմտ. նաեւ. Փիո ԺԲ, 1941թ. Յունիսի 1ի Քարոզը. *AAS* 33 (1941), p. 199; Նոյն, 1954թ. Սբ. Ծննդեան ձայնասփիւռային պատգամը. *AAS* 47 (1955), p. 27.

© «Կնիքահրատարակ» Հրատարակչություն
www.mashtoz.org

իրաւունքն է ունենալ բաւականաչափ բարիքների մի մաս, իրենց եւ իրենց ընտանիքների համար: Սա արդարացի էին համարում Եկեղեցու Հայրերն ու Վարդապետները, որոնք ուսուցանում էին, որ մարդիկ պարտականութիւնն ունեն օգնելու աղքատներին, եւ ո՛չ միայն իրենց աւելորդով[1]: Նա՝ ով գտնւում է ծայրագոյն կարիքի մէջ, իրաւունքն ունի անհրաժեշտ պարագաները հայթայթելու ուրիշների հարստութիւններից[2]: Հաշուի առնելով ամբողջ աշխարհում քաղցից լլկուածների բաւականին բարձր թուի փաստը, սրբազան Ժողովը բոլորին անյապաղ յորդորում է, ե՛ւ անհատներին ե՛ւ հանրային իշխանութիւններին, որպէսզի Հայրերի խօսքը յիշելով. «Կերակրիր նրան՝ ով մահամերձ է քաղցի պատճառով, որովհետեւ եթէ նրան չկերակրես, նրան սպանած կը լինես»[3], իսկապէս տրամադրեն եւ օգտաշատ կերպով գործածեն սեփական բարիքները, իւրաքանչիւրն ըստ իր սեփական կարողութիւնների, յատկապէս տրամադրելով անհատներին եւ ժողովուրդներին միջոցներ, որոնցով նրանք կը կարողանան հոգալ իրենք իրենց եւ զարգանալ:

Տնտեսապէս նուազ զարգացած հասարակութիւններում բարիքների համընդհանուր սահմանումը յաճախ մասամբ իրագործւում է հասարակական սովորոյթների ու աւանդութիւնների մի համակարգի միջոցով, որոնք անդամներից իւրաքանչիւրին ապահովում են ամենաանհրաժեշտ բարիքները: Հարկաւոր է սակայն խուսափել, որ որոշակի սովորոյթներ համարուեն բացարձակապէս անփոփոխելի, եթէ դրանք այլեւս չեն համապատասխանում ներկայ ժամանակուայ նոր պահանջներին. միւս կողմից սակայն, չպէտք է անխոհեմ կերպով վարուել ընդդէմ այն արդար ու պատուաւոր սովորոյթների, որոնք չեն դադարում բաւականին օգտակար լինելուց, միայն թէ պատշաճ կերպով յարմարեցուեն արդի հանգամանքներին: Նմանապէս, տնտեսական գետնի վրայ շատ զարգացած պետութիւններում հասարակական կանխատեսումի ու ապահովութեան հասարակական հիմնարկների մի ցանց կարող է մասամբ նպաստել իրագործելու բարիքների համընդհանուր սահմանումը: Ինչպէս նաեւ, կարեւոր է առաւել եւս զարգացնել ընտանիքին եւ հասարակական կարիքներին ծառայող հիմնարկները, յատկապէս նրանք՝ որոնք հոգ են տանում մշակութային եւ դաստիարակչական հարցերին: Բայց այս բոլոր հիմնարկները կազմակերպելիս հարկաւոր է հսկել, որպէսզի քաղաքացիները չմղուեն հասարակութեան դիմաց դրաւելու կրաւորական դիրքորոշում, կամ ստանձնած պարտականութիւններում անպատասխանատուութիւն, կամ էլ՝ ծառայութեան մերժում:

---

[1] *Հմմտ. Սբ. Բարսեղ Կեսարացի,* Homilia in illud Lucae «Destrum horrea mea», 2: *PG* 31, 263; *Լաքթանցիուս,* Divinarum Institutionum, lib. V, *de iustitia*: *PL* 6, 565B; *Սբ. Օգոստինոս,* In Evangelium Ioannis tractatus 50, 6: *PL* 35, 1760; *Նոյն,* Enarratio in Psalmum CXLVII, 12: *PL* 37, 192; *Սբ. Գրիգոր Մեծ,* Homiliae in Evangelium, hom. 20: *PL* 76, 1165; *Նոյն,* Regulae Pastoralis liber, pars III, c. 21: *PL* 77, 87; *Սբ. Բոնաւենտուրա,* In III Sententiarum, d. 33, dub. 1 (*ed. Quaeracchi* III, 728); *Նոյն,* In IV Sententiarum, d. 15, p. II, a. 2, q. 1 (*ed. cit.* IV, 371b); *Նոյն,* q. *de superfluo* (ms. *Assisi, Bibl. comun.* 186, ff. 112.a-113.a); *Սբ. Ալբերտ Մեծ,* In III Sententiarum, d. 33, a. 3, sol. 1 (*ed. Borgnet* XXVIII, 611); *Նոյն,* In IV Sententiarum, d. 15, a. 16 (*ed. cit.* XXIX, 494-497). *Ինչ ապա վերաբերւում է աւելորդի չափորոշմանը մեր ժամանակներում, հմմտ. Յովհաննէս ԻԳ,* 1962*թ. Սեպտ.* 11*ի ճայնասփիւռային եւ հեռատեսիլային Քարոզը.* AAS 54 (1962), p. 682, *ուր ի մասնաւորի շեշտում է. «Իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն է, քրիստոնեայի ստիպողակա՛ն պարտականութիւնն է աւելորդը գնահատել ուրիշների կարիքների չափով, եւ արթուն կերպով հսկել, որպէսզի ստեղծուած բարիքների տնօրինումն ու բաշխումը դրուի ի նպաստ բոլորի»:*

[2] *Այդպիսի դէպքերում վաւերական է հնագոյն սկզբունքը. «Ծայր աստիճան կարիքի դէպքում ամէն ինչ պէտք է հասարակաց, այսինքն՝ հաղորդակցուած լինի»: Միւս կողմից, առաջադրուած սկզբունքի գործադրման դատանիշների, տարածումի եւ կերպերի վերաբերեալ, արդի փորձուած հեղինակներից բացի, հմմտ. Սբ. Թովմաս Աքուինացի,* Summa Theologiae, II-II, q. 66, a. 7. *Ինչպէս ակնյայտ է, այս սկզբունքի ուղղամիտ կիրարկման համար հարկաւոր է պահպանել բարոյականութեան կողմից պահանջուած բոլոր պայմանները:*

[3] *Հմմտ. Գրացիանուս,* Decretum, C. 21, dist. LXXXVI (*ed. Friedberg* I, 302). *Այս խօսքը գտնւում է արդէն* PL 54, 591 A *(Հմմտ.* Antonianum, 27 (1952), pp. 349-366*):*

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

Հ. Ներդրումներ եւ դրամ

Ներդրումներն, իրենց հերթին, պէտք է նպաստեն աշխատանքի հնարաւորութեամբ եւ բաւականաչափ աշխատավարձով ապահովելու ինչպէս այսօրուայ, այնպէս էլ ապագայ աշխատունակ բնակչութեանը: Այդպիսի ներդրումների եւ համապարփակ տնտեսական կեանքի կազմակերպման բոլոր պատասխանատուները – լինեն անհատներ, թէ խմբեր կամ հանրային իշխանութիւններ – պէտք է միշտ ի նկատի ունենան այս նպատակակէտերը եւ գիտակցութիւն դրսեւորեն իրենց ծանր պարտականութեան նկատմամբ. մի կողմից պէտք է հսկեն, որպէսզի հայթայթուեն անհրաժեշտ բարիքները, որոնք պահանջւում են լինի անհատների, թէ ամբողջ հասարակութեան վայելուչ կեանքի համար. միւս կողմից պէտք է ջանան կանխատեսել ապագայ իրավիճակները եւ պատշաճ հաւասարակշռութիւն ապահովել սպառողական ներկայ կարիքների – լինեն դրանք անհատական, թէ հաւաքական – եւ յաջորդ սերնդի համար ներդրումային պահանջների միջեւ: Ինչպէս նաեւ, միշտ ի նկատի պէտք է ունենան տնտեսապէս նուազ զարգացած ժողովուրդների կամ տարածաշրջանների անյապաղ կարիքները:

Դրամական դաշտում հարկաւոր է խուսափել սեփական ժողովրդի կամ ուրիշ պետութիւնների բարիքին վնաս հասցնելուց: Հարկաւոր է նաեւ հոգ տանել, որպէսզի նրանք՝ ովքեր տնտեսապէս տկար են, անարդար կերպով վնասներ չկրեն դրամի արժէքի տատանումներից:

ՀԱ. Սեփականութեան ձեռքբերումը եւ բարիքների առանձնական տիրապետումը. երկրագործական կալուածքների խնդիրները

Քանի որ սեփականութիւնը եւ արտաքին բարիքների վրայ առանձնական տիրապետումի ա՛յլ կերպերը նպաստում են անձնականութեան արտայայտութեանը եւ մարդուն առիթ են ընձեռում իր պատասխանատու նպաստը բերելու հասարակութեանն ու տնտեսութեանը, մեծապէս շահաւէտ է նպաստել արտաքին բարիքների վրայ անհատների կամ խմբերի որոշակի իշխանութեան ձեռքբերմանը:

Առանձնական սեփականութիւնը կամ արտաքին բարիքների վրայ ունեցած որոշակի իշխանութիւնը իւրաքանչիւր մարդու համար ապահովում են անձնական եւ ընտանեկան ինքնուրոյնութեան մի անհրաժեշտ տարածք, եւ պէտք է համարել դրանք որպէս մարդկային ազատութեան հարկաւոր արդիւնքներից մէկը: Ի վերջոյ, պատասխանատուութեան զգացումի մարզումը խթանելով, դրանք կազմում են քաղաքացիական ազատութիւնների պայմաններից մէկը[1]:

Այդպիսի իշխանութեան կամ այդպիսի սեփականութեան ձեւերն այսօր բազմապիսի են եւ օրէցօր փոփոխւում են միշտ աւելի: Չնայած հասարակական հիմնադրամների, հասարակութեան կողմից երաշխաւորուած իրաւունքների ու ծառայութիւնների գոյութեանը, այդպիսի իշխանութեան կամ այդպիսի սեփականութեան ձեւերն այնուամենայնիւ մնում են որպէս ապահովութեան ո՛չ թերագնահատելի աղբիւր: Այս ամէնը չի վերաբերւում միայն նիւթական, այլ նաեւ աննիւթական բարիքների սեփականութեանը, ինչպիսիք են օրինակի համար՝ մասնագիտական կարողութիւնները:

Առանձնական սեփականութեան օրինաւորութիւնը հակասութեան մէջ չէ հանրային սեփականութեան բազմապիսի ձեւերի հետ: Բարիքների փոխադրումը հանրային սեփականութեան, սակայն, կարող է իրականացուել միմիայն իրաւասու իշխանութիւնների կողմից, հասարակաց բարիքի պահանջների համաձայն եւ դրանց սահմանների ներսում, եւ

[1] Հմմտ. Լեւոն ԺԳ, Կոնդակ *Rerum Novarum*: *ASS* 23 (1890-1891), pp. 643-646; Փիո ԺԱ, Կոնդակ *Quadragesimo anno*: *AAS* 23 (1931), p. 191; Փիո ԺԲ, 1941թ. Յունիսի 1ի ձայնասփիւռային Քարոզը. *AAS* 33 (1941), p. 199; Նոյն, 1942թ. Սբ. Ծննդեան ձայնասփիւռային պատգամը. *AAS* 35 (1943), p. 17; Նոյն, 1944թ. Սեպտ. 1ի ձայնասփիւռային Քարոզը. *AAS* 36 (1944), p. 253; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), pp. 428-429.

© «Ընդհանրական» Հրապարակչություն

www.mashtoz.org

արդար փոխհատուցում վճարելով: Մինչ հանրային իշխանությունների պարտականությունն է արգելքներ դնել, որպէսզի ոմանք առանձնական սեփականությունը չչարաշահեն գործելով հասարակաց բարիքի դէմ[1]:

Առանձնական իւրաքանչիւր սեփականութիւն իր էութեամբ իսկ ունի նաեւ հասարակական նկարագիր, որն հիմնւում է բարիքների համընդհանուր սահմանումի վրայ[2]: Եթէ անտեսուի այս հասարակական նկարագիրը, սեփականությունը բազմապիսի եղանակներով կարող է դառնալ անսանձ ընչաքաղցութեան եւ ծանր անկարգութիւնների պատճառ, այնպէս՝ որ կարող է դիւրին պատրուակներ ընծայել նրանց՝ ովքեր հակառակւում են սեփականութեան իրաւունքին իսկ:

Տնտեսապէս նուազ զարգացած բազմաթիւ երկրներում կան երկրագործական ընդարձակ կամ նոյնիսկ վիթխարի սեփականութիւններ, որոնք քիչ են մշակուած կամ էլ պահւում են ամբողջովին անմշակ, սոսկ շահագիտական նկատառումներով, մինչ բնակչութեան մեծամասնութիւնը զուրկ է մշակելի հողակտորներից կամ հնարաւորութիւնն ունի գործածելու չափազանց սահմանափակ հողակտորներ միայն, իսկ միւս կողմից՝ գիւղատնտեսական արտադրութեան աճը ներկայանում է որպէս ակնյայտօրէն հրատապ նկարագիր ունեցող խնդիր: Հազուադէպ չէ, որ նրանք՝ ովքեր այդ ընդարձակ կալուածքների սեփականատէրերի կողմից աշխատանքի են ընդունւում որպէս կախումնաւոր աշխատաւորներ, կամ նաեւ նրանք՝ ովքեր մշակում են այդ կալուածքների մի փոքր մասը վարձակալական իրաւունքով, ստանում են այնպիսի աշխատավարձ կամ վարձատրութեան ա՛յլ կերպեր, որոնք անվայել են մարդուն, չունեն վայելուչ բնակարան կամ չարաչար շահագործւում են միջնորդների կողմից: Այդպիսի միջավայրում պակասելով ապահովութեան բոլոր կերպերը, մարդիկ ապրում են անձնական կախուածութեան մի այնպիսի վիճակում, որ նրանց արգելւում է սեփական նախաձեռնութեամբը եւ անձնական պատասխանատուութեամբը գործելու գրեթէ որեւէ հնարաւորութիւն եւ նրանց առջեւ խոչընդոտւում են մարդկային քաղաքակրթութեան արտայայտութիւնների մարզում որեւէ զարգացման եւ հասարակական ու քաղաքական կեանքում որեւէ գործուն մասնակցութեան ուղիները: Ուստի անհրաժեշտ են, տարբեր իրավիճակների համաձայն, օրէնսդրական բարեփոխումներ, որոնց նպատակը պէտք է լինի աշխատավարձերի բարձրացումը, աշխատանքի պայմանների բարելաւումը, աշխատատեղի ապահովութեան աւելացումը եւ անձնական նախաձեռնութեան նպաստումը. ինչպէս նաեւ բարեփոխումներ, որոնք հնարաւորութիւն կը տան անբաւարար չափով մշակուած կալուածքները բաժանելու նրանց՝ ովքեր ընդունակ են դրանք լաւագոյնս մշակելու: Այդպիսի դէպքերում, նրանց համար պէտք է ապահովուեն անհրաժեշտ միջոցներն ու գործիքները, յատկապէս՝ կրթութեան միջոցները եւ համագործակցական ընկերութիւնների արդարացի կազմակերպման հնարաւորութիւնները: Ամէն անգամ, որ հասարակաց բարիքը պահանջում է սեփականութեան իրաւունքից զրկում, փոխհատուցումը պէտք է հաշուարկուի եւ վճարուի ըստ արդարութեան, հաշուի առնելով բոլոր պարագաներն ու հանգամանքները:

ՀԲ. Տնտեսական-հասարակական գործունէութիւնը եւ Քրիստոսի Արքայութիւնը

Քրիստոնեաները, որոնք իրենց գործուն մասնակցութիւնն են բերում տնտեսական-հասարակական ժամանակակից զարգացմանը եւ յանուն արդարութեան ու սիրոյ մղուող պայքարին, պէտք է համոզուած լինեն, որ կարող են մեծապէս նպաստել մարդկային զարմի բարգաւաճմանը եւ աշխարհի խաղաղութեանը: Նման գործունէութիւններում, ե՛ւ երբ գործում են որպէս անհատներ, ե՛ւ երբ գործում են որպէս ընկերակցութիւններում միաւորուած անդամներ, պէտք է փայլեն իրենց օրինակելիութեամբ: Այդ նպատակի համար

[1] Հմմտ. Փիո ԺԱ, Կոնդակ *Quadragesimo anno*: *AAS* 23 (1931), p. 214; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), p. 429.

[2] Հմմտ. Փիո ԺԲ, 1941թ. Հոգեգալստեան ձայնասփիւռային Քարոզը. *AAS* 33 (1941), p. 199; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), p. 430.

© «Ընդհանրական» Հրապարակչություն
www.mashtoz.org

մեծ կարեւորութիւն ունի այն, որ մասնագիտական բացարձակապէս անհրաժեշտ հմտութիւնն ու փորձառութիւնը ձեռքբերելով, մինչ կատարում են իրենց երկրային գործերը՝ պահեն արժէքների արդար դասակարգութիւն, հաւատարիմ մնալով Քրիստոսին եւ Նրա Աւետարանին, այնպէս՝ որ իրենց ամբողջ կեանքը, անհատական եւ հասարակական, ներթափանցուած լինի Երանութիւնների հոգով, յատկապէս՝ աղքատութեան հոգով:

Ով հաւատարիմ կերպով հետեւում է Քրիստոսին, նախեւառաջ փնտռում է Աստծոյ Արքայութիւնը եւ այնտեղ գտնում է առաւել վաւերական ու ջինջ սէր, օգնելու համար իր եղբայրներին եւ իրականութեան կոչելու համար – սիրոյ ներշնչմամբ – արդարութեան գործերը[1]:

ԳԼՈՒԽ Դ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԸ

ՀԳ. Ժամանակակից հանրային կեանքը

Մեր օրերում խոր փոփոխութիւններ են նկատւում նաեւ ժողովուրդների կառուցուածքներում եւ հաստատութիւններում. այդօրինակ փոփոխութիւնները ժողովուրդների մշակութային, տնտեսական եւ հասարակական յեղաշրջման հետեւանքն են: Դրանք մեծ ազդեցութիւն են գործում, յատկապէս այն մարզում, որը վերաբերւում է բոլորի իրաւունքներին ու պարտականութիւններին՝ քաղաքացիական ազատութեան կիրարկման եւ հասարակաց բարիքի ձեռքբերման գործում, ինչպէս նաեւ այն ասպարէզում, որը վերաբերւում է քաղաքացիների յարաբերութիւնների կանոնակարգմանը միմեանց միջեւ եւ հանրային իշխանութիւնների հետ:

Մարդկային արժանապատուութեան առաւել վառ գիտակցութիւնից բխում է, աշխարհի տարբեր երկրամասերում, քաղաքական-իրաւական մի այնպիսի կարգ հաստատելու ջանքը, որի համաձայն՝ հանրային կեանքում լաւագոյնս պաշտպանուած լինեն անձի իրաւունքները. օրինակ, ազատօրէն հաւաքուելու ու համախմբուելու, ընկերակցելու, սեփական կարծիքներն արտայայտելու եւ կրօնն առանձնաբար եւ հասարակաց դաւանելու իրաւունքը: Անձի իրաւունքների պաշտպանութիւնն, իրօք, անհրաժեշտ պայմանն է, որպէսզի քաղաքացիները, անհատաբար կամ խմբովին, կարողանան գործուն մասնակցութիւն ունենալ հանրային պետութեան կեանքին եւ կառավարմանը:

Մշակութային, տնտեսական եւ հասարակական յառաջընթացի հետ միասին, շատերի մօտ ամրապնդւում է քաղաքական հասարակութեան կեանքի կազմակերպման գործում առաւել մեծ պատասխանատուութիւններ ստանձնելու փափաքը:

Շատերի գիտակցութեան մէջ աճում է պետութեան ներսում բնակուող փոքրամասնութիւնների իրաւունքները պաշտպանելու մտահոգութիւնը, առանց որ այդ փոքրամասնութիւնների անդամները մոռանան քաղաքական հասարակութեան հանդէպ իրենց պարտականութիւնները: Ինչպէս նաեւ աճում է այլախոհ եւ այլադաւան անձանց նկատմամբ յարգանքը: Միաժամանակ հաստատւում է մի առաւել ընդարձակ համագործակցութիւն, որն որպէս նպատակ ունի ապահովելու բոլոր քաղաքացիներին, եւ ո՛չ թէ միայն սակաւաթիւ առանձնաշնորհեալների, անձնական իրաւունքների իրական վայելումը:

Դատապարտւում են որոշ տարածաշրջաններում գործող քաղաքական վարչակարգի այն բոլոր կերպերը, որոնք խոչընդոտում են քաղաքացիական կամ կրօնական ազատութիւնը, բազմապատկում են քաղաքական կրքերի ու ոճիրների զոհերի թիւը եւ

[1] Նոր Կտակարանի վարդապետութեան համաձայն բարիքների արդար գործածման մասին, հմմտ. Ղկս 3, 11; 10, 30...; 11, 41; 1Պտ 5, 3; Մրկ 8, 36; 12, 29-31; Յկբ 5, 1-6; 1Տմ 6, 8; Եփս 4, 28; 2Կր 8, 13...; 1Յվհ 3, 17...

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

իշխանության կիրարկումը խեղաթիւրելով հեռացնում են հասարակաց բարիքից, այն ծառայեցնելու համար մի խմբակցութեան կամ հէնց իշխանաւորների իսկ շահին:

Իսկապէս մարդկային քաղաքական կեանք հաստատելու համար լաւագոյն միջոց չկայ, քան սեփական սրտում արդարութեան, սիրոյ եւ հասարակաց բարիքին ծառայելու գիտակցութեան սնումը եւ ամրապնդումն այն հիմնական համոզումների, որոնք վերաբերւում են քաղաքական հասարակութեան իրական էութեանը եւ հանրային իշխանութեան նպատակին, ճիշտ կիրարկմանն ու իրաւասութիւնների սահմաններին:

ՀԴ. Քաղաքական հասարակութեան էութիւնն ու նպատակը

Մարդիկ, ընտանիքներն ու տարբեր խմբերը, որոնք կազմում են քաղաքացիական հասարակութիւնը, գիտակից են, որ միայնակ ի վիճակի չեն կերտելու մի այնպիսի կեանք, որն ընդունակ լինի լիովին համապատասխանելու մարդկային բնութեան պահանջներին, եւ զգում են մի առաւել ընդարձակ հասարակութեան անհրաժեշտութիւնը, որի ներսում բոլորը, ամէն օր, ներդնեն սեփական կարողութիւնների նպաստը[1], հասարակաց բարիքին միշտ լաւագոյնս հասնելու նպատակով:

Այս նպատակով էլ հաստատում են քաղաքական հասարակութիւններ, ըստ կազմակերպչական տարբեր տիպարների:

Քաղաքական հասարակութիւնն, ուստի, գոյութիւն ունի հէնց ծառայելու համար այն հասարակաց բարիքին, որի մէջ է գտնում իր իմաստն ու ամբողջական արդարացումը եւ որն է հանդիսանում իր գոյութեան իրաւունքի սկզբնածին հիմքը:

Հասարակաց բարիքն իրականանում է հասարակական կեանքի այն պայմանների ամբողջութեան մէջ, որոնք մարդկանց, ընտանիքներին եւ ընկերակցութիւններին հնարաւորութիւն են ընձեռում եւ նրանց համար հեշտացնում են սեփական կատարելութեան առաւել լիակատար ձեռքբերումը[2]:

Քաղաքական հասարակութեան ներսում, սակայն, միմեանց են միանում բազմաթիւ եւ տարբեր մարդիկ, որոնք կարող են օրինաւոր կերպով կողմնորոշուել դէպի տարբեր որոշումներ: Որպէսզի քաղաքական հասարակութիւնը չկործանուի իւրաքանչիւրի տարուղղուածութիւնից դէպի իր սեփական կարծիքը, հարկաւոր է մի իշխանութիւն, որն ընդունակ լինի բոլոր քաղաքացիների ուժերն ուղղելու դէպի հասարակաց բարիքը, ո՛չ մեքենայական կամ բռնապետական կերպով, այլ նախեւառաջ որպէս բարոյական ուժ, որն յենւում է ազատութեան եւ ստանձնած պաշտօնի ու պարտականութեան գիտակցութեան վրայ:

Ակնյայտ է, ուստի, որ քաղաքական հասարակութիւնն ու հանրային իշխանութիւնը մարդկային բնութեան մէջ ունեն իրենց հիմքը եւ, հետեւաբար, պատկանում են Աստծոյ կողմից սահմանուած կարգին, թէեւ քաղաքական վարչակարգերի որոշումն ու կառավարողների ընտրութիւնը թողնուած են քաղաքացիների ազատ վճռին[3]:

Սրանից հետեւում է նաեւ, որ քաղաքական իշխանութեան կիրարկումը, լինի՛ հասարակութեան կողմից որպէս այդպիսին, լինի՛ Պետութեան ներկայացուցչական կառոյցների կողմից, միշտ պէտք է տեղի ունենայ բարոյական կանոնակարգի շրջանակներում, հասարակաց բարիքի ձեռքբերման համար – հասարակաց բարիքը, սակայն, դինամիկ կերպով հասկացուած – , արդէն սահմանուած կամ տակաւին սահմանուելիք իրաւական կարգի կանոնների համաձայն: Յայնժամ քաղաքացիներն ի խղճէ պարտաւորուած են հնազանդուելու[4]:

---

[1] Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Mater et Magistra*: *AAS* 53 (1961), p. 417.

[2] Նոյն:

[3] Հմմտ. Հռմ 13, 1-5.

[4] Հմմտ. Հռմ 13, 5.

© «Ընդհանրական» Հրապարակչություն
www.mashtoz.org

Սրանից յստակ կերպով հետեւում է պատասխանատուութիւնը, արժանապատուութիւնը եւ դերի կարեւորութիւնը նրանց՝ ովքեր կառավարում են:

Ուր քաղաքացիները ճնշւում են հանրային իշխանութիւնների կողմից, որոնք գործում են իրենց իրաւասութիւններից անդին, քաղաքացիներն իրենք թող չմերժեն այն՝ ինչն իսկապէս պահանջւում է հասարակաց բարիքի համար. օրինաւոր է, սակայն, որ պաշտպանեն իրենց եւ իրենց համաքաղաքացիների իրաւունքները իշխանութիւնների չարաշահումների դէմ, յարգելով սահմանները, որոնք թելադրում են բնական օրէնքն ու Աւետարանը:

Կոնկրետ ձեւերը, որոնցով քաղաքական հասարակութիւնը կազմակերպում է սեփական կառոյցներն ու հանրային իշխանութիւնների հաւասարակշռութիւնը, կարող են փոփոխուել տարբեր ժողովուրդների նկարագրի եւ պատմութեան ընթացքի համաձայն. բայց դրանք միշտ պէտք է ուղղուած լինեն կիրթ, խաղաղասէր եւ բոլորի նկատմամբ բարեացակամ մարդու կազմաւորմանը, ի շահ մարդկային ամբողջ ընտանիքի:

ՀԵ. Բոլորի համագործակցութիւնը հանրային կեանքին

Մարդկային բնութեանը լիովին համապատասխան է, որ գտնուեն իրաւական-քաղաքական կառոյցներ, որոնք միշտ աւելի լաւ ընծայեն բոլոր քաղաքացիներին, առանց որեւէ խտրականութեան, իրական հնարաւորութիւնը՝ ազատօրէն եւ գործուն եղանակով մասնակցելու ե՛ւ քաղաքական հասարակութեան իրաւական հիմքերի մշակմանը, ե՛ւ հանրային գործերի կառավարմանը, ե՛ւ տարբեր հաստատութիւնների իրաւասութիւնների եւ սահմանափակումների որոշմանը, ե՛ւ կառավարիչների ընտրութեանը[1]:

Բոլոր քաղաքացիները թող յիշեն, ուստի, իրենց իրաւունքը, որը միաժամանակ նաեւ պարտականութիւն է, գործածելու իրենց ազատ քուէն հասարակաց բարիքի խթանման համար:

Եկեղեցին գովասանքի ու գնահատանքի արժանի է համարում գործը նրանց՝ ովքեր մարդկանց ծառայելու նպատակով նուիրւում են հանրութեան բարիքին եւ ստանձնում են համապատասխան պատասխանատուութիւնների ծանրութիւնը:

Որպէսզի քաղաքացիների գիտակից եւ պատասխանատու համագործակցութիւնը կարողանայ դրական արդիւնքներ ունենալ ամէնօրեայ քաղաքական կեանքում, հարկաւոր է ունենալ իրաւական դրական օրէնսդրութիւն, որի համաձայն կազմակերպուի իշխանութեան պաշտօնների եւ հաստատութիւնների պատշաճ բաժանումը, իրաւունքների արդիւնաւէտ պաշտպանման հետ միասին, անկախ որեւէ մէկից:

Անձանց, ընտանիքների եւ խմբերի իրաւունքները եւ այդ իրաւունքների կիրառումը պէտք է ճանաչուեն եւ յարգուեն[2] ո՛չ պակաս քան պարտականութիւնները, որոնք քաղաքացիներից իւրաքանչիւրը պարտաւոր է կատարել: Այս վերջիններից անօգուտ չի լինի յիշել Պետութեանը սեփական նիւթական եւ անձնական ձիրքերով նպաստելու պարտականութիւնը, ինչը որ պահանջում է հասարակաց բարիքը:

Իշխանութեան գլուխ կանգնած անձինք պէտք է խուսափեն ընտանեկան, հասարակական կամ մշակութային խմբերի, միջանկեալ մարմինների կամ հաստատութիւնների գոյութեանը խոչընդոտելուց, ո՛չ էլ պէտք է զրկեն նրանց իրենց օրինաւոր եւ արդիւնաւէտ գործունէութիւնը ծաւալելու հնարաւորութիւնից, այլ ընդհակառակն՝ պէտք է յօժարութեամբ եւ կանոնակարգուած կերպով օժանդակեն նրանց:

Ինչ վերաբերւում է քաղաքացիներին, անհատաբար կամ խմբովին, պէտք է խուսափեն հանրային իշխանութեանը չափազանց իրաւասութիւններ վերագրելուց, ո՛չ էլ պէտք է նրանից անպատշաճ կերպով պահանջեն չափազանց ծառայութիւններ եւ չափազանց

[1] Հմմտ. Փիո ԺԲ, 1942թ. Դեկտ. 24ի ձայնասփիւռային Քարոզը. *AAS* 35 (1943), pp. 9-24; Նոյն, 1944թ. Դեկտ. 24ի ձայնասփիւռային Քարոզը. *AAS* 37 (1945), pp. 11-17; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Pacem in terris*: *AAS* 55 (1963), pp. 263, 271, 277-278.

[2] Հմմտ. Փիո ԺԲ, 1941թ. Յունիսի 1ի ձայնասփիւռային Քարոզը. *AAS* 33 (1941), p. 200; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Pacem in terris*, 1. c.: *AAS* 55 (1963), pp. 273-274.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

նպաստներ ու օժանդակութիւններ, այդպիսով ստեղծելով անձանց, ընտանիքների եւ հասարակական խմբերի պատասխանատուութիւնն ու գիտակցութիւնը նուազեցնելու վտանգը:

Մեր ժամանակներում, առկայ խնդիրների բարդութիւնը հանրային իշխանութիւններին հարկադրում է առաւել յաճախակի միջամտելու հասարակական, տնտեսական եւ մշակութային հարցերում, որոշելու համար առաւել նպաստաւոր պայմանները, որոնք քաղաքացիներին եւ խմբերին թոյլ կը տան առաւել արդիւնաւէտ կերպով հասնելու, ազատօրէն, մարդու ամբողջական բարիքին: Հասարակականացման[1] եւ ինքնուրոյնութեան եւ անձի զարգացման միջեւ յարաբերութիւնը կարող է տարբեր եղանակներով ընկալուել տարբեր երկրամասերում եւ ժողովուրդների պատմական յեղաշրջման հիմքի համաձայն: Բայց ուր իրաւունքների կիրառումը ժամանակաւոր կերպով սահմանափակւում է հասարակաց բարիքի շահերից ելնելով, պէտք է հնարաւորինս ամենաշտապ կերպով վերականգնուի ազատութիւնը, երբ պարագաներն այլեւս փոխուած կը լինեն: Որեւէ դէպքում, սակայն, անմարդկային է, որ քաղաքական իշխանութիւնը ստանձնի ամբողջատիրական կամ էլ բռնատիրական կերպեր, որոնք վնասում են անձի կամ հասարակական խմբերի իրաւունքներին:

Քաղաքացիներն իրենց հոգիներում թող վեհանձնօրէն եւ աննենգ հաւատարմութեամբ սնուցեն հայրենասիրութեան զգացումը, առանց սակայն հոգեւոր տեսադաշտի հորիզոնները սեղմելու, այսինքն այնպէս՝ որ միաժամանակ ընդունակ լինեն նաեւ հաշուի առնելու եւ կամենալու մարդկային ամբողջ ընտանիքի բարիքը, որն անթիւ ու անհամար կապերով միացած է տարբեր ցեղերի, ազգերի ու ժողովուրդների միջեւ:

Բոլոր քրիստոնեաները պէտք է գիտակից լինեն քաղաքական հասարակութեան ներսում ունեցած իրենց յատուկ կոչմանը. նրանք պէտք է որպէս օրինակ հանդիսանան, իրենք իրենց մէջ զարգացնելով պատասխանատուութեան զգացումը եւ նուիրումը հասարակաց բարիքին, այնպէս՝ որ գործերով ցոյց տան՝ թէ ինչպէս կարող են միմեանց միջեւ ներդաշնակ լինել իշխանութիւնն ու ազատութիւնը, անձնական նախաձեռնութիւնն ու հասարակական ամբողջ մարմնի համերաշխութիւնը, պատշաճ միութիւնն ու օգտակար տարբերութիւնները: Այն հարցերում, որոնք վերաբերւում են երկրային իրողութիւնների կազմակերպմանը, պէտք է ընդունեն աշխարհային հարցերում հնարաւոր կողմնորոշումների օրինաւոր բազմազանութիւնն ու տարբերութիւնները եւ պէտք է յարգեն այն քաղաքացիներին, որոնք, նաեւ խմբովին, պարկեշտ կերպով պաշտպանում են իրենց տեսակէտները:

Կուսակցութիւնները պէտք է խթանեն այն՝ ինչն իրենց կարծիքով պահանջում է հասարակաց բարիքը. երբեք, սակայն, օրինաւոր չէ հասարակաց բարիքից վեր դասել սեփական շահը:

Հարկաւոր է մշտական խնամք ցուցաբերել քաղաքացիական եւ քաղաքական կրթութեան նկատմամբ, որն այսօր մասնաւորապէս անհրաժեշտ է ե՛ւ ամբողջ ժողովրդի, ե՛ւ յատկապէս երիտասարդների համար, որպէսզի բոլոր քաղաքացիները կարողանան իրենց դերը կատարել քաղաքական հասարակութեան կեանքում: Նրանք՝ ովքեր ընդունակ են կամ կարող են ընդունակ դառնալ քաղաքական գործարուեստի ի կատար ածմանը, որն այնքա՜ն դժուարին է, բայց եւ միաժամանակ՝ այնքա՜ն վսեմ ու ազնուական[2], պէտք է պատրաստուեն եւ մտահոգուեն իրենց գործը կատարելու առանց սեփական շահին եւ նիւթական օգուտին ուշադրութիւն դարձնելու: Պէտք է արդարամտութեամբ ու իմաստութեամբ գործեն անարդարութիւնների ու հարստահարումների, մէկ անհատ մարդու կամ միայն մէկ քաղաքական կուսակցութեան կամայական իշխանութեան ու անհանդուրժողական կեցուածքի դէմ: Պէտք է անկեղծութեամբ ու անկողմնակալութեամբ նուիրուեն բոլորի ծառայութեանը, մանաւանդ թէ՝ այն սիրով ու հաստատակամութեամբ, որոնք պահանջում է քաղաքական կեանքը:

---

[1] *Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ* Mater et Magistra: *AAS* 53 (1961), p. 416.

[2] *Փիո ԺԱ, Ուղերձ «Կաթողիկէ Համալսարանական Ընկերակցութեան ղեկավարներին». տե՛ս* Discorsi di Pio XI (ed. Bertetto), Torino, vol. 1, 1960, p. 743.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

ՀԶ. Քաղաքական հասարակութիւնը եւ Եկեղեցին

Մեծ կարեւորութիւն ունի, յատկապէս բազմատարր հասարակութեան ներսում, որ ճիշտ եւ իրական գաղափար կազմուի քաղաքական հասարակութեան եւ Եկեղեցու միջեւ յարաբերութիւնների վերաբերեալ, եւ որ գործերն ու արարքները, որոնք հաւատացեալները, անհատաբար կամ խմբովին, կատարում են իրենց սեփական անունից, որպէս քաղաքացիներ, առաջնորդուած իրենց քրիստոնէական խղճի ու գիտակցութեան կողմից, յստակ կերպով զանազանուեն այն գործերից ու արարքներից, որոնք նրանք կատարում են Եկեղեցու անունից, հաղորդութեան մէջ գտնուելով իրենց հովիւների հետ:

Եկեղեցին, որն իր պաշտօնի եւ իր իրաւասութեան բերումով ոչ մի կերպ չի խառնւում կամ շփոթւում քաղաքական հասարակութեան հետ եւ կապուած չէ քաղաքական որեւէ համակարգի, մարդկային անձի վերանցական նկարագրի միաժամանակ նշանն է ու պաշտպանութիւնը:

Քաղաքական հասարակութիւնը եւ Եկեղեցին իրենց գործունէութեան ասպարէզներում մէկը միւսից անկախ են ու ինքնավար: Բայց երկուսն էլ, թէեւ գաղափարային տարբեր հիմքի վրայ, ծառայում են միեւնոյն մարդկանց անձնական եւ հասարակական կոչումին: Նրանք այնքան աւելի արդիւնաւէտ կերպով կը կատարեն իրենց այս ծառայութիւնն ի նպաստ բոլորի, որքան աւելի խնամքով կը մշակեն ուղղամիտ համագործակցութիւն միմեանց միջեւ, տեղի ու ժամանակի պարագաներին յարմար ձեւակերպութիւնների համաձայն:

Մարդն, յիրաւի, սահմանափակուած չէ միայն ժամանակային հորիզոնների ներսում, այլ մարդկային պատմութեան ներսում ապրելով՝ ամբողջական կերպով պահպանում է իր յաւիտենական կոչումը:

Ինչ վերաբերւում է Եկեղեցուն, որն հիմնուած է Փրկչի սիրոյ մէջ, նա նպաստում է սփռելու արդարութեան եւ սիրոյ ազդեցութեան շառաւիղը իւրաքանչիւր ժողովրդի ներսում եւ ժողովուրդների միջեւ: Աւետարանական ճշմարտութիւնը քարոզելով եւ մարդկային գործունէութեան բոլոր բնագաւառներն իր վարդապետութեամբ եւ քրիստոնեաների կողմից ընծայուած վկայութեամբ լուսաւորելով, Եկեղեցին յարգում եւ զարգացնում է նաեւ քաղաքական ազատութիւնն ու քաղաքացիների պատասխանատուութեան զգացումը:

Առաքեալները եւ նրանց յաջորդներն իրենց գործակիցներով, առաքուած լինելով մարդկանց աւետելու Քրիստոսին՝ աշխարհի Փրկչին, իրենց առաքելութեան կատարման գործում յենւում են Աստծոյ զօրութեան վրայ, որը շատ յաճախ վկաների տկարութեան մէջ է բացայայտում Աւետարանի ուժը: Հարկաւոր է, որ բոլոր նրանք՝ ովքեր նուիրւում են Աստծոյ Խօսքի ծառայութեանը, գործի դնեն Աւետարանին յատուկ ճանապարհներն ու միջոցները, որոնք բազմաթիւ կէտերում տարբերւում են երկրային քաղաքին յատուկ միջոցներից:

Անշուշտ, երկրային իրողութիւնները եւ այն իրողութիւնները՝ որոնք մարդկային վիճակում գերազանցում են այս աշխարհին, սերտօրէն միացած են միմեանց, եւ Եկեղեցին ինքը գործածում է երկրային միջոցներն այն չափով, որքանով իր առաքելութիւնը դա պահանջում է: Եկեղեցին, սակայն, իր յոյսը չի դնում այն առանձնաշնորհումների վրայ, որոնք իրեն ընծայւում են քաղաքական իշխանութիւնների կողմից: Մանաւանդ թէ, Եկեղեցին կը հրաժարուի օրինաւոր կերպով ձեռքբերուած իր որոշակի իրաւունքների կիրարկումից այն դէպքերում, երբ կը նկատի՝ որ այդ իրաւունքների գործադրումը կարող է կասկածի տակ դնել իր կողմից ընծայուած վկայութեան անկեղծութիւնը, կամ էլ՝ եթէ նորայայտ պարագաներն ա՛յլ որոշումներ կը պահանջեն:

Բայց միշտ եւ ամէնուր, եւ ճշմարիտ ազատութեամբ, Եկեղեցու իրաւունքն է քարոզել հաւատքը եւ ուսուցանել իր հասարակական ուսմունքը, առանց խոչընդոտների կատարել սեփական առաքելութիւնը մարդկանց մէջ եւ յայտնել իր բարոյական դատաստանը, նաեւ այն հարցերի վերաբերեալ, որոնք վերաբերւում են քաղաքական կարգին, երբ դա պահանջւում է անձի հիմնական իրաւունքների եւ հոգիների փրկութեան համար: Եւ այս ամէնը Եկեղեցին կ՚անի՝ գործի դնելով բոլոր եւ միայն այն միջոցները, որոնք համապատասխանում են Աւետարանին եւ ներդաշնակ են բոլորի բարիքին, ժամանակների տարբերութեան եւ պարագաների համաձայն:

Աւետարանին եւ աշխարհում իր առաքելութեան կատարմանը հաւատարմութեամբ, Եկեղեցին, որն իբրեւ պարտաւորութիւն ունի զարգացնելու եւ վերամբարձելու[1] այն ամէնն՝ ինչը որ մարդկային հասարակութեան ներսում գտնում է ճշմարիտ, բարի ու գեղեցիկ, ամրապնդում է խաղաղութիւնը մարդկանց միջեւ, Աստծոյ փառքի համար[2]:

ԳԼՈՒԽ Ե.

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԵՐԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

ՀԷ. *Նախաբան*

Մեր այս ժամանակներում, որոնցում մարդկանց մէջ տակաւին շարունակում են ներկայ գտնուել մերթ սաստկացող ու մոլեգնող, մերթ վերահաս ու սպառնացող պատերազմներից յառաջ եկող վշտերն ու տագնապները, մարդկային ամբողջ հասարակութիւնն իր հասունացման ընթացքի մէջ հասել է գերագոյն աստիճանի վճռական պահի: Մինչ կամաց կամաց միաւորւում է եւ ամէնուր այլեւս առաւել գիտակից է դառնում սեփական միասնականութեանը, մարդկութիւնը չի կարող, այնուամենայնիւ, ամբողջական կատարումին հասցնել այն գործը, որն իրեն է սպասում, այսինքն՝ կերտելու առաւել մարդկային մի աշխարհ բոլոր մարդկանց համար եւ ամբողջ երկրագնդի վրայ, եթէ մարդիկ բոլորը միասին եւ վերանորոգ հոգիով չուղղուեն դէպի ճշմարիտ խաղաղութիւնը: Այս իսկ պատճառով, աւետարանական պատգամը, ներդաշնակ լինելով մարդկային զարմի ամենավսեմ իղձերի ու գաղափարականների հետ, մեր այս ժամանակներում փայլում է վերանորոգ պայծառութեամբ, երբ երանելի է հռչակում խաղաղութեանն ի նպաստ գործողներին, «որովհետեւ նրանք Աստծոյ որդիներ են կոչուելու» (Մտթ 5, 9*):*

Լուսաբանելով, ուստի, խաղաղութեան իրական ու վեհագոյն իմացքը, ժողովը, դատապարտելով պատերազմի անմարդկայնութիւնը, մտադիր է եռանդուն կոչ ուղղել քրիստոնեաներին, որպէսզի Քրիստոսի՝ խաղաղութեան հեղինակի օգնութեամբ գործակցեն բոլորին, մարդկանց միջեւ հաստատելու համար մի խաղաղութիւն, որն հիմնուած կը լինի արդարութեան ու սիրոյ վրայ, եւ գործի դնեն դրան հասնելուն հարկաւոր միջոցները:

ՀԸ. *Խաղաղութեան բնոյթը*

Խաղաղութիւնը պատերազմի պարզ բացակայութիւնը չէ, ո՛չ էլ կարող է ընկալուել սոսկ որպէս ներհակ ուժերի միջեւ հաւասարակշռութիւնը հաստատուն դարձնող իրավիճակ: Խաղաղութիւնը միահեծան տիրապետութեան արդիւնքը չէ, այլ ամենայն ճշգրտութեամբ սահմանւում է որպէս «արդարութեան գործ» (Ես 32, 7*): Խաղաղութիւնը պտուղն է մարդկային հասարակութեան մէջ իր աստուածային Հիմնադրի կողմից դրոշմուած կարգի եւ այն պէտք է իրագործուի մարդկանց կողմից, որոնք հոգեւոր բաղձանքով ձգտում են միշտ առաւել կատարեալ արդարութեան: Յիրաւի, մարդկային զարմի հասարակաց բարիքն իր էութեամբ կանոնակարգւում է յաւիտենական օրէնքի կողմից, այո՛, բայց իր գործնական պահանջներում՝ ժամանակի ընթացքում ենթակայ է շարունակական փոփոխութիւնների: Այս իսկ պատճառով, խաղաղութիւնը երբեք այնպիսի իրականութիւն չէ, որին կարող ենք ասել՝ թէ հասել ենք մէկընդմիշտ, այլ մի կառոյց է, որն հարկաւոր է շարունակաբար կերտել: Քանի որ, այս ամէնից բացի, մարդկային կամքն անկայուն է եւ, առաւել եւս, մեղքով խոցուած, խաղաղութեան ձեռքբերումը իւրաքանչիւրից պահանջում է տիրապետութիւն կրքերի վրայ եւ օրինաւոր իշխանութիւնների փութաջան հսկողութիւնը:*

---

[1] *Հմմտ. Վատիկան. Բ. Ժողով, Դաւ. Սահմ.* Lumen Gentium, 13: *AAS* 57 (1965), p. 17.

[2] *Հմմտ. Ղկս* 2, 14.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

Այսքանն, այնուամենայնիւ, բաւական չէ: Այդպիսի խաղաղութիւնն անհնարին է ձեռքբերել երկրի վրայ, եթէ պաշտպանուած չէ անձերի բարիքը եւ եթէ մարդիկ չեն կարող վստահութեամբ ու ազատօրէն փոխանակուել իրենց հոգու եւ իրենց հանճարի հարստութիւնները: Ուրիշներին – մարդկանց եւ ժողովուրդներին – եւ նրանց արժանապատուութիւնը յարգելու հաստատուն կամքը, եւ մարդկային եղբայրակցութեան մշտաջան գործադրումը բացարձակապէս անհրաժեշտ են խաղաղութեան կերտման համար: Այդ կերպ, խաղաղութիւնն արդիւնքն է նաեւ սիրոյ, որն իր ազդեցութեամբ շատ աւելի անդին է հասնում, քան որքան կարող է ապահովել պարզ արդարութիւնը:

Երկրային խաղաղութիւնը, որ ծնւում է մերձաւորի սիրուց, այն ինքնին պատկերն ու արդիւնքն է Քրիստոսի խաղաղութեան, որ ճառագայթում է Հօրից: Մարմնացեալ Որդին, յիրաւի, Խաղաղութեան Իշխանը, Իր Խաչի շնորհիւ բոլոր մարդկանց հաշտեցրեց Աստծոյ հետ. վերահաստատելով բոլորի միութիւնը մէկ միակ ժողովրդի եւ մէկ միակ մարմնի մէջ, Նա Իր Մարմնում սպանեց ատելութիւնը[1] եւ, Իր Յարութեան փառքի մէջ, սիրոյ Հոգին սփռեց մարդկանց սրտերում:

Բոլոր քրիստոնեաներն, ուստի, յարատեւ փոյթով կանչուած են գործադրելու ճշմարտութիւնը սիրոյ մէջ (Եփս 4, 15) եւ միանալու բոլոր այն մարդկանց՝ ովքեր անկեղծօրէն սիրում են խաղաղութիւնը, երկնքից աղերսելու այդ խաղաղութիւնը եւ այն իրագործելու համար:

Միեւնոյն ոգուց մղուած, մենք չենք կարող չգովել նրանց՝ ովքեր իրենց իրաւունքների պաշտպանութեան գործում բռնութիւններից հրաժարուելով, դիմում են պաշտպանութեան այնպիսի միջոցների, որոնք հասու են նաեւ ամենատկարներին, միայն թէ դա կատարուի առանց ուրիշների կամ հասարակութեան իրաւունքներին ու պարտականութիւններին վնաս հասցնելու:

Մարդիկ, քանի որ մեղաւորներ են, գտնւում են եւ միշտ էլ գտնուելու են պատերազմի սպառնալիքի տակ, մինչեւ Քրիստոսի գալուստը: Բայց այնքանով՝ որքանով կարողանում են, սիրոյ մէջ միաւորուած, յաղթել մեղքին, նրանք յաղթում են նաեւ բռնութեանը, մինչեւ աստուածային խօսքի իրականացումը. «Նրանք իրենց սուսերներից խոփեր են ձուլելու եւ իրենց սուիններից՝ մանգաղներ: Ոչ մի ժողովուրդ այլեւս սուր չի բարձրացնելու ուրիշ ժողովրդի դէմ եւ այլեւս չեն մարզուելու պատերազմի համար» (Ես 2, 4):

ԲԱԺԻՆ Ա.
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

ՀԹ. Պատերազմի անմարդկային դաժանութիւնը մեղմելու պարտականութիւնը

Թէեւ վերջին ժամանակներում մղուած պատերազմները մեր աշխարհին հասցրել են թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական ծանրագոյն վնասներ, տակաւին ամէն օր, երկրագնդի որոշ տարածաշրջաններում, պատերազմը շարունակում է իր աւերածութիւնները սփռել: Մանաւանդ թէ, երբ նրա ընթացքում գործածւում են ամէն տեսակի գիտական զէնքեր, պատերազմի անգթութիւնը սպառնում է հակամարտողներին մի այնպիսի բարբարոսութեան հասցնել, որն անհամեմատելիօրէն գերազանցում է անցեալ ժամանակների վայրագութիւններին: Ինչպէս նաեւ ժամանակակից աշխարհում տիրող իրավիճակների բարդութիւնը եւ միջազգային յարաբերութիւնների խճճուած ցանցը ստեղծում են մի այնպիսի կացութիւն, որ դաւադիր ու խռովարար նոր մեթոդներով երկարաձգւում են առաւել կամ նուազ քօղարկուած պատերազմները: Շատ դէպքերում, ահաբեկչութեան գործելակերպերին դիմելը նոյնպէս համարւում է պատերազմի նոր ձեւ:

Մարդկութեան վիճակի այսպիսի վատթարացման դիմաց, Ժողովը մտադիր է նախեւառաջ յիշեցնել ժողովուրդների բնական իրաւունքի եւ նրա համամարդկային

[1] Հմմտ. Եփս 2, 16; Կղս 1, 20-22.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

սկզբունքների անփոփոխ արժէքը: Մարդկային զարմի գիտակցութիւնն ինքնին հռչակում է այդ սկզբունքները միշտ առաւել վճռականութեամբ ու կորովով: Գործերն ու արարքներն, ուստի, որոնք գիտակից կամեցողութեամբ ընդդիմանում են այդ սկզբունքներին, եւ հրամանները՝ որոնք պատուիրում են այդ գործերն ու արարքները, ոճիրներ են: Կոյր հնազանդութիւնն էլ չի կարող որպէս չքմեղանք ծառայել նրանց՝ ովքեր գործադրում են այդ հրամանները: Այդպիսի արարքների շարքին նախեւառաջ դասւում են մի ամբողջ ժողովրդի, ազգի կամ ազգային փոքրամասնութեան բնաջնջման համակարգուած մեթոդները: Սա մի սոսկալի ոճրագործութիւն է, որն հարկաւոր է դատապարտել ծայրագոյն խստութեամբ: Պէտք է մինչդեռ օժանդակութիւն գտնի քաջութիւնը նրանց՝ ովքեր չեն երկնչում բացայայտօրէն ընդդիմանալու նրանց՝ ովքեր հրամայում են նման ոճրագործութիւնների կատարումը:

Պատերազմների վերաբերեալ գոյութիւն ունեն միջազգային բազմաթիւ համաձայնագրեր, որոնք մեծ թուով պետութիւններ ստորագրել են նուազ անմարդկային դարձնելու համար պատերազմական գործողութիւններն ու դրանց հետեւանքները: Այդպիսիք են վիրաւոր կամ գերի բռնուած զինուորների ճակատագրին վերաբերուող համաձայնագրերը եւ նմանատիպ բազմաթիւ յանձնառութիւնները: Բոլոր այդ համաձայնագրերը պէտք է պահպանուեն ու գործադրուեն. մանաւանդ թէ, հանրային իշխանութիւնները եւ այսօրինակ հարցերում հմուտ մասնագէտները պէտք է ամէն ջանք գործի դնեն, որքան որ իրենց հնարաւորութիւնների սահմաններում է, որպէսզի այդ համաձայնագրերը կատարելագործուեն, այնպէս՝ որ ընդունակ դառնան մի առաւել պատշաճ ու արդիւնաւէտ կերպով արգելակելու պատերազմական վայրագութիւնները: Ինչպէս նաեւ, անկողմնակալ արդարութեանը համաձայն է թւում, որ օրէնքները մարդկայնօրէն վերաբերուեն պարագային նրանց՝ ովքեր իրենց խղճի թելադրանքներից ելնելով հրաժարւում են զէնքեր գործածելուց, մինչ սակայն ընդունում են մարդկային հասարակութեանը մատուցուած ծառայութեան ինչ որ մի ա՛յլ ձեւ ու եղանակ:

Պատերազմը, ցաւոք, արմատախիլ չի եղել մարդկային վիճակից: Եւ քանի դեռ գոյութիւն կ՚ունենայ պատերազմի վտանգը եւ, ընդհակառակն, գոյութիւն չի ունենայ ազգու ուժերով օժտուած միջազգային իրաւասու հեղինակութիւն, երբ կը սպառուեն խնդիրների խաղաղ կարգաւորման բոլոր հնարաւորութիւնները, կառավարութիւններին կարելի չի լինի մերժել օրինաւոր պաշտպանութեան իրաւունքը: Պետութիւնների ղեկավարները եւ նրանք՝ ովքեր մասնակից են հանրային կեանքին վերաբերուող հարցերի տնօրինման պատասխանատուութեանը, պարտաւորութիւնն ունեն, ուստի, պաշտպանելու իրենց վստահուած ժողովուրդների ողջութիւնը, այսքա՜ն մեծ կարեւորութիւն ունեցող հարցերի նկատմամբ պատասխանատուութեան խորը գիտակցութիւն դրսեւորելով: Բայց ա՛յլ բան է զէնքերը գործածել ժողովուրդների արդար իրաւունքները պաշտպանելու նպատակով, եւ ա՛յլ բան է սեփական տիրապետութիւնը ուրիշ պետութիւններին պարտադրել կամենալը: Ռազմական հզօրութիւնն օրինաւոր չի դարձնում նրա զինուորական կամ քաղաքական որեւէ տեսակի գործածումը: Ո՛չ էլ փաստը, որ պատերազմը դժբախտաբար արդէն բռնկուել է, կարող է ամէն բան թոյլատրելի դարձնել հակամարտող կողմերի միջեւ:

Նրանք, ապա, ովքեր հայրենիքին ծառայելով՝ իրենց աշխատանքը կատարում են բանակի շարքերում, նրանք նոյնպէս պէտք է նկատուեն որպէս իրենց ժողովուրդների ապահովութեան ու ազատութեան պաշտօնակատարները, եւ եթէ ուղղամտութեամբ կատարում են իրենց պարտականութիւնները, նրանք եւս իսկապէս նպաստում են խաղաղութեան կայունութեանը:

Դ. Ամբողջական պատերազմը

Գիտական զէնքերի զարգացումը վիթխարի չափերով բազմապատկել է պատերազմի արհաւիրքներն ու դժանութիւնները: Ռազմական գործողութիւններն, իրօք, եթէ կատարուեն այդ միջոցների կիրառումով, կարող են հսկայական ու անխտիր աւերածութիւններ առաջացնել, որոնք ուստի լայնօրէն խախտում են օրինաւոր պաշտպանութեան սահմանները: Մանաւանդ թէ, եթէ նմանատիպ զէնքերը, ինչպիսիք

այլեւս գտնւում են մեծ տէրութիւնների զինանոցներում, լիովին գործածուէին, հակամարտող կողմերը փոխադարձաբար եւ գրեթէ ամբողջովին կը բնաջնջէին միմեանց, առանց ի նկատի առնելու բազմաթիւ աւերածութիւնները, որոնք դրանց արդիւնքում տեղի կ՚ունենային երկրագնդի մնացած մասերում, եւ մահացու ազդեցութիւնները, որոնք այդպիսի զէնքերի գործածման հետեւանքն են:

Բոլոր այս բաները մեզ հարկադրում են պատերազմի հարցը քննելու ամբողջովին նոր մտածելակերպով[1]: Այս դարաշրջանի մարդիկ թող իմանան, որ իրենց պատերազմական գործողութիւնների համար խստագոյն հաշիւ են տալու, քանի որ գալիք ժամանակների ընթացքը մեծ մասամբ կախում է ունենալու իրենց այսօրուայ կայացրած վճիռներից:

Բոլոր այս բաները լաւագոյնս քննած լինելով, այս Սրբազնասուրբ Ժողովը, իրենը դարձնելով վերջին Սրբազան Քահանայապետների կողմից ամբողջական պատերազմի վերաբերեալ արդէն արտասանուած դատապարտումները[2], յայտարարում է.

Պատերազմական իւրաքանչիւր գործողութիւն, որն իբրեւ նպատակ ունի անխտիր կերպով աւերել ամբողջական քաղաքներ կամ ընդարձակ տարածաշրջաններ եւ բնաջնջել նրանց բնակիչներին, ոճիր է Աստծոյ դէմ եւ ինքնին մարդկութեան դէմ, եւ պէտք է դատապարտուի հաստատամիտ վճռակամութեամբ եւ առանց վարանոտ տարակուսանքի:

Արդի պատերազմներին բնորոշ վտանգը կայանում է նրանում, որ նրանց՝ ովքեր տիրապետում են գիտական ամենաարդիական զէնքերին, այն գրեթէ առիթ է ընծայում կատարելու նման ոճիրներ եւ, որոշակի անողոք կապակցութեամբ, մարդկանց կամքը կարող է մղել ծայր աստիճան դաժան վճիռներ կայացնելու: Ուստի, որպէսզի սա ապագային այլեւս երբեք տեղի չունենայ, ամբողջ աշխարհի Եպիսկոպոսներն, արդ համախմբուած, բոլորին պաղատագին խնդրում են, յատկապէս պետութիւնների ղեկավարներին եւ զինուորական գերագոյն հրամանատարներին, մշտապէս ի նկատի ունենալ, Աստծոյ առաջ եւ ամբողջ մարդկութեան առաջ, իրենց պատասխանատուութեան վիթխարի կշիռը:

ՁԱ. Զինուելու մրցավազքը

Գիտական զէնքերը, ճիշտ է, չեն կուտակւում պատերազմի ժամանակ դրանք գործածել կարողանալու միակ նպատակով: Քանի որ իրօք համարւում է, որ իւրաքանչիւր կողմի պաշտպանութեան հաստատունութիւնը կախում ունի փոխադարձ պատասխան տալու կայծակնային հնարաւորութիւնից, զէնքերի այս կուտակումը, որն աւելանում է տարէցտարի, ծառայում է, անշուշտ տարօրինակ կերպով, հնարաւոր հակառակորդներին պատերազմական գործողութիւններ կատարելուց տարհամոզելուն: Եւ սա շատերի կողմից համարւում է ամենաարդիւնաւէտ միջոցն այսօր պետութիւնների միջեւ որոշակի խաղաղութիւն ապահովելու համար:

Ինչ էլ որ մտածելու լինեն տարհամոզման այս մեթոդի մասին, մարդիկ պէտք է համոզուեն, որ զինուելու մրցավազքը, որին դիմում են բազմաթիւ պետութիւններ, ապահով ճանապարհ չէ խաղաղութիւնը հաստատուն կերպով պահպանելու համար, ո՛չ էլ այսպէս կոչուած հաւասարակշռութիւնը, որ նրանից հետեւում է, կարող է որպէս իրական եւ կայուն խաղաղութիւն համարուել: Պատերազմի դրդապատճառներն այդ մրցավազքի կողմից վերացուելու փոխարէն, ընդհակառակն՝ աստիճանաբար աւելի ծանրանալու սպառնալիքն են ստեղծում: Եւ մինչ վիթխարի հարստութիւններ են ծախսւում միշտ նոր զէնքեր ձեռքբերելու համար, արդիւնքում անհնարին է դառնում բաւականաչափ դարման հասցնել ներկայ աշխարհի այսքա՜ն մեծ թշուառութիւններին: Ժողովուրդների միջեւ գոյութիւն ունեցող

[1] Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ Pacem in terris: AAS 55 (1963), pp. 291: «Մեր այս դարաշրջանում, ուստի, որ պարծենում է հիւլէական ուժով, բանականութեանն հակառակ է միշտ հակուած լինելը պատերազմելու, եւ վերադարձնելու համար ոտնահարուած իրաւունքները»:

[2] Հմմտ. Փիո ԺԲ, 1954թ.ի Սեպտ. 30ի Քարոզը: AAS 46 (1954), p. 589; Նոյն, 1954թ.ի Դեկտ. 24ի Պատգամը ձայնասփիւռով: AAS 47 (1955), pp. 15ss; Յովհաննէս ԻԳ, Կոնդակ Pacem in terris: AAS 55 (1963), pp. 286-291; Պօղոս Զ, ՄԱԿի Համաժողովում արտասանուած Ճառը, 1965թ.ի Հոկտ. 4ին:

© «Ընդհանրական» Հրատարակչություն

www.mashtoz.org

տարաձայնություններն իսկապէս, արմատից, բժշկելու փոխարէն, արդիւնքում վարակը տարածւում է աշխարհի ա՛յլ մասերում եւս: Նոր ճանապարհներ է հարկաւոր փնտռել, մեկնելով հոգիների բարենորոգումից, որպէսզի հնարաւոր լինի մէջտեղից վերացնել այս գայթակղութիւնը եւ իրեն ճնշող մտատանջութիւնից ազատուած աշխարհին հնարաւոր լինի վերադարձնել իրական խաղաղութիւնը:

Հարկաւոր է, ուստի, եւս մէկ անգամ յայտարարել. զինուելու մրցավազքը մարդկութեան ամենաաղէտալի պատուհասներից մէկն է եւ անհանդուրժելի կերպով վնասում է ազգատներին: Եւ մեծապէս հիմնաւորուած է այն վախը, որ եթէ այդ մրցավազքը շարունակուի, մի օր կ'իրականացնի այն բոլոր ջարդերն ու կոտորածները, որոնց միջոցներն է արդէն պատրաստում:

Խրատուելով այն դժբախտ փորձանքներից, որոնք մարդկութիւնն ինքը հնարաւոր դարձրեց, ջանանք օգտուել զինադադարից, որն այժմ վայելում ենք եւ որը մեզ տրուել է ի վերուստ, մեր պատասխանատուութեան վերաբերեալ առաւել չափով գիտակցութիւն ձեռքբերելու համար եւ գտնելու համար ուղիներ՝ մարդուն առաւել արժանի կերպով հարթելու մեր վէճերը: Աստուածային Նախախնամութիւնը մեզնից անդադար պահանջում է, որ մեզ իսկ ազատենք պատերազմի վաղեմի ստրկութիւնից:

Եթէ մերժենք կատարելու այդ ճիգն ու ջանքը, չգիտենք՝ թէ մեզ ուր կը հասցնի չարընթաց ճանապարհը, որի երկայնքին արդէն իսկ քայլել ենք:

ՁԲ. Պատերազմի բացարձակ դատապարտումը եւ միջազգային շարժումը՝ նրանից խուսափելու համար

Յստակ է, ուստի, որ պարտաւոր ենք ամէն ջանք գործի դնելով աշխատել՝ նախապատրաստելու համար այն ժամանակները, երբ պետութիւնների միջեւ համաձայնութեան շնորհիւ հնարաւոր կը լինի ամբողջովին արգելել պատերազմի դիմելու բոլոր փորձերը: Սա բնականաբար պահանջում է, որ հաստատուի միջազգային, բոլորի կողմից ճանաչուած համընդհանուր մի հեղինակութիւն, որն օժտուած կը լինի արդիւնաւէտ իշխանութեամբ՝ բոլոր ժողովուրդներին երաշխաւորելու համար ապահովութիւն, արդարութեան գործադրում եւ իրաւունքների նկատմամբ յարգանք: Բայց մինչ այդ բաղձալի հեղինակութիւնը հնարաւոր կը լինի հաստատել, անհրաժեշտ է, որ միջազգային բարձրագոյն ատեաններն ամենայն յանձնառութեամբ նուիրուեն համընդհանուր ապահովութիւնը հոգալուն ամենապատշաճ միջոցների փնտռտուքին: Քանի որ խաղաղութիւնը պէտք է ինքնայօժար բխի ազգերի միջեւ փոխադարձ վստահութիւնից, աւելի՝ քան ժողովուրդներին պարտադրուի զէնքերի ահով, բոլորը պէտք է պատրաստակամօրէն գործի լծուեն՝ վերջապէս դադարեցնելու զինուելու մրցավազքը, այնպէս՝ որ զէնքերի քանակի նուազեցումն իսկապէս սկիզբ առնի եւ ընթանայ ո՛չ միակողմանի կերպով, անշուշտ, այլ երկու կողմից էլ հաւասար չափով, համատեղ կնքուած համաձայնագրերի հիման վրայ եւ արդիւնաւէտ երաշխիքների ապահովմամբ[1]:

Մինչ այդ, չպէտք է թերագնահատուեն արդէն իսկ կատարուած փորձերը եւ որոնք մինչ այժմ էլ կատարւում են պատերազմի վտանգը հեռացնելու համար: Այլ աւելի՝ հարկաւոր է խրախուսել բազմաթիւ անձանց բարի կամքը, որոնք իրենց զբաղեցրած բարձրագոյն պաշտօններից բխող ահագին մտահոգութիւններով ծանրաբեռնուած լինելով հանդերձ, մղուած պատասխանատուութեան այն ծանր զգացումից, որով իրենց պարտաւորուած են զգում, ամէն ճիգ ու ջանք գործի են դնում պատերազմը վերացնելու համար, որից սոսկում են՝ իրավիճակների բարդ դրութիւնը հաշուի չառնել չկարողանալով հանդերձ: Անդադար աղօթքներ է հարկաւոր ուղղել առ Աստուած, որպէսզի նրանց պարգեւի ուժը՝ յարատեւութեամբ ձեռնարկելու եւ քաջութեամբ աւարտին հասցնելու մարդկանց հանդէպ տածուած ամենամեծ սիրոյ արտայայտութիւնը հանդիսացող այս գործը, որի շնորհիւ առնականօրէն կերտւում է խաղաղութեան կառոյցը: Այդ գործն այսօր

[1] Հմմտ. Յովհաննէս ԻԳ, Կոնդակ *Pacem in terris*: *AAS* 55 (1963), p. 287.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

անտարակոյս պահանջում է, որ նրանք իրենց միտքն ու սիրտն ընդարձակեն սեփական ազգի սահմաններից անդին, մի կողմ թողնելով ազգային բոլոր տեսակի եսասիրութիւնները եւ ուրիշ ազգերի նկատմամբ գերակայութեան բոլոր յաւակնութիւնները, այլ ընդհակառակն՝ խոր յարգանք տածելով ամբողջ մարդկութեան նկատմամբ, մարդկութեան՝ որն այսքա՜ն քրտնաջան կերպով այլեւս ընթանում է դէպի առաւել միութիւն:

Խաղաղութեան եւ զինաթափման խնդիրներին վերաբերուող խորհրդակցութիւնները, որոնք արդէն իսկ անցկացուել են քաջաբար ու անխոնջ ջանքերով, միջազգային համաժողովները, որոնք քննարկել են այս հարցերը, պէտք է նկատուեն որպէս այսքա՜ն լուրջ խնդիրների լուծմանն ուղղուած առաջին քայլերը, եւ հետեւաբար՝ առաւել պնդումով եւ ուժգնութեամբ պէտք է խթանուեն եւ զարգացուեն ապագայում, յստակ եւ շօշափելի արդիւնքներ ստանալու նպատակով: Մարդիկ, այնուամենայնիւ, թող մեծապէս ուշադիր լինեն՝ չվստահելու եւ չյանձնուելու միմիայն ոմանց ջանքերին, առանց նուազագոյն չափով անգամ մտահոգուելու իրենց սեփական զգացումներով: Պետութիւնների ղեկավարները, որոնք իրենց ժողովուրդների հասարակաց բարիքի երաշխաւորներն են եւ միաժամանակ համայն մարդկութեան բարիքի պաշտպանները, մեծ մասամբ իրապէս կախումնաւոր են բազմութիւնների կարծիքներից ու զգացումներից: Իրօք անօգուտ է, որ նրանք հաստատամտութեամբ գործի լծուեն՝ խաղաղութեան կերտման նպատակով, քանի դեռ թշնամանքի, արհամարհանքի ու անվստահութեան զգացումները, ցեղային ատելութիւններն ու հակառակութիւն սերմանող գաղափարախօսութիւնները բաժանում են մարդկանց, նրանց մէկը միւսի դէմ ուղղելով: Այստեղից է ծնւում ծայր աստիճան անյապաղ անհրաժեշտութիւնը՝ մտքերի մի վերանորոգ կրթութեան եւ հասարակաց կարծիքի մի նոր կողմնորոշման: Նրանք՝ ովքեր նուիրւում են դաստիարակիչ գործունէութիւնների, յատկապէս երիտասարդութեան մօտ, եւ նրանք՝ ովքեր նպաստում են հասարակաց կարծիքի ձեւաւորմանը, թող իրենց լրջագոյն պարտքը համարեն բոլորի մտքերում նոր, խաղաղութիւն ներշնչող զգացումներ տպաւորելը: Իսկ մեզնից իւրաքանչիւրը պէտք է գործի լծուի՝ փոխելու իր սեփական սիրտը, աչքերը բացելով ամբողջ աշխարհի եւ այն բոլոր միջոցների վրայ, որոնք մարդիկ կարող են միասին ձեռնարկել՝ մարդկութիւնը դէպի մի լաւագոյն ապագայ առաջնորդելու համար:

Եւ թող չխաբի մեզ կեղծ յոյսը: Եթէ ապագայում չկնքուեն համընդհանուր խաղաղութեան հաստատուն եւ ուղղամիտ պայմանագրեր, հրաժարուելով բոլոր տեսակի ատելութիւններից ու թշնամանքներից, մարդկութիւնը, որը գիտական ասպարէզում հիանալի ձեռքբերումների հասած լինելով հանդերձ արդէն իսկ գտնւում է լուրջ վտանգի ներքոյ, թերեւս դառն ու տխուր կերպով կ՚առաջնորդուի դէպի այն օրը, երբ ա՛յլ խաղաղութիւն չի կարողանայ ունենալ, եթէ ոչ միայն՝ մահուան սոսկալի խաղաղութիւնը:

Քրիստոսի Եկեղեցին, մինչ ներկայ ժամանակուայ տագնապների մէջ գտնուելով արտասանում է այս խօսքերը, այնուամենայնիւ չի դադարում փայփայել ամենահաստատուն յոյսը: Մեր դարաշրջանի մարդկանց նա կամենում է ուժգին պնդումով ներկայացնել Առաքեալի պատգամը, լինի թէ ընդունեն այն բարեհաճութեամբ կամ մերժեն որպէս անպատեհ. «Ահա՛ այժմ է նպաստաւոր ժամանակը» սրտերը փոխակերպելու համար, «ահա՛ այժմ են փրկութեան օրերը»[1]:

ԲԱԺԻՆ Բ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ

ՁԳ. Տարաձայնութիւնների պատճառները եւ դրանց լուծումները

Խաղաղութեան կերտումը նախեւառաջ պահանջում է, որ, անարդարութիւններից սկսած, վերացուեն տարաձայնութիւնների պատճառները, որոնք դրդում են պատերազմելու:

[1] Հմմտ. 2Կր 6, 2.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

Բազմաթիւ առիթներ ծագում են տնտեսական չափազանց անհաւասարութիւններից եւ այն յապաղումից, որով անհրաժեշտ լուծում է տրւում այդ իրավիճակներին: Ուրիշ առիթներ ծնւում են տիրապետութեան ոգուց, անձանց նկատմամբ արհամարհանքից եւ, ակնարկելու համար ամենածածուկ պատճառներին, նախանձից, կասկածոտ անվստահութիւնից, գոռոզ հպարտութիւնից եւ ա՛յլ եսապաշտական կրքերից: Քանի որ մարդիկ չեն կարողանում հանդուրժել այսքա՜ն բազմաթիւ ու բազմապիսի անկարգութիւնների, պատահում է, որ աշխարհը, նաեւ երբ ընկղմուած չէ պատերազմի վայրագութիւնների խորքը, այնուամենայնիւ շարունակ մատնուած է մնում կռիւների ու բռնութիւնների քմահաճոյքին: Այդ նոյն չարիքները հանդիպում են նաեւ ժողովուրդների ու պետութիւնների միջեւ գոյութիւն ունեցող յարաբերութիւններում: Ուստի, այդ չարիքներին յաղթելու եւ դրանք կանխարգելելու, բռնութեան սանձազերծումը զսպելու համար բացարձակապէս անհրաժեշտ է, որ միջազգային հաստատութիւնները զարգացնեն ու ամրապնդեն իրենց համագործակցութիւնն ու գործունէութիւնների համակարգումը եւ որ, առանց յոգնելու, խթանուի այնպիսի կառոյցների ստեղծումը, որոնք յարմար եւ ձեռնհաս են խաղաղութեան խրախուսմանը:

ՁԴ. Ազգերի հասարակութիւնը եւ միջազգային հաստատութիւնները

Հաշուի առնելով փոխադարձ կախուածութեան աճող եւ սերտ կապերը, որոնք այսօր գոյութիւն ունեն երկրի բոլոր բնակիչների ու ժողովուրդների միջեւ, հասարակաց բարիքի պատշաճ փնտռտուքն ու արդիւնաւէտ իրականացումը պահանջում են, որ միջազգային հասարակութիւնն իր համար մի կարգուկանոն սահմանի, որն համապատասխան կը լինի ժամանակակից հիմնախնդիրներին, յատկապէս հաշուի առնելով այն բազմաթիւ երկրամասերը, որոնք այսօր տակաւին գտնւում են անհանդուրժելի չքաւորութեան վիճակում:

Այդ նպատակներին հասնելու համար միջազգային հաստատութիւնները, իւրաքանչիւրն իր պարտաւորութիւնների սահմաններում, պէտք է հոգան մարդկանց տարբեր կարիքները, ինչպէս հասարակական կեանքի ասպարէզում (որին են պատկանում սնունդը, առողջապահութիւնը, կրթութիւնը, աշխատանքը), այնպէս էլ որոշակի իւրայատուկ պարագաներում, որոնք առաջանում են այս կամ այն տեղ. օրինակի համար, զարգացող երկրների ընդհանուր աճին օգնելու հարկաւորութիւնը, կամ տակաւին՝ աշխարհի բոլոր մասերում փախստականների կամ գաղթականների ու նրանց ընտանիքների կարիքներին հասցուելիք սփոփանքը:

Միջազգային, թէ՛ համաշխարհային եւ թէ՛ արդէն գոյութիւն ունեցող երկրամասային հաստատութիւններն անկասկած արժանիքներ են վաստակել մարդկային զարմի նկատմամբ: Դրանք առաջին ջանքերն են հանդիսանում, կառուցելու համար մարդկային ամբողջ հասարակութեան միջազգային հիմքերը, մեր ժամանակաշրջանի ամենածանր խնդիրները լուծելու նպատակով. խթանել զարգացումը երկրագնդի բոլոր մասերում եւ կանխարգելել պատերազմն իր բոլոր ձեւերով: Գործակցութեան այս բոլոր դաշտերում Եկեղեցին ուրախանում է ճշմարիտ եղբայրութեան այն ոգու համար, որը ծաղկում է քրիստոնեաների եւ ոչ-քրիստոնեաների միջեւ, ինչպէս նաեւ՝ հսկայածաւալ թշուառութիւնը դարմանելու ձգտող փորձերն ուժգնացնելու ջանքի համար:

ՁԵ. Միջազգային համագործակցութիւնը տնտեսական հարթութեան վրայ

Մարդկային զարմի ներկայ միասնականութիւնը պարտաւորեցնում է նաեւ, որ միջազգային առաւել սերտ համագործակցութիւն հաստատուի տնտեսական դաշտում: Թէեւ գրեթէ բոլոր ժողովուրդներն իրօք ձեռք են բերել քաղաքական անկախութիւնը, այնուամենայնիւ տակաւին հեռու ենք հաստատել կարողանալուց՝ թէ նրանք ազատուել են չափազանց անհաւասարութիւններից եւ ապօրինի կախուածութեան բոլոր կերպերից, եւ թէ զերծ են ներքին ծանր դժուարութիւնների վտանգից:

Պետության զարգացումը կախումնաւոր է նրա ունեցած մարդկային եւ դրամական պաշարներից: Բոլոր պետությունների քաղաքացիներին հարկաւոր է պատրաստել, դաստիարակության եւ մասնագիտական կրթության շնորհիւ, զանազան յանձնառություններ ստանձնելու տնտեսական եւ հասարակական կեանքում: Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է օտարերկրեայ մասնագէտների գործակցությունը, որոնք իրենց գործը կատարելիս պէտք է վարուեն ո՛չ որպէս իշխողներ, այլ որպէս օգնականներ եւ աջակից օժանդակողներ: Առանց համաշխարհային առեւտրում ներկայումս գործող մեթոդների արմատական փոփոխությունների, զարգացող պետությունները չեն կարող ստանալ նիւթական այն նպաստները, որոնց կարիքն ունեն: Ինչպէս նաեւ, նրանց ա՛յլ միջոցներ եւս պէտք է տրուեն զարգացած պետությունների կողմից, նուէրի ձեւով, կամ էլ՝ փոխատուությունների եւ ֆինանսական ներդրումների. դա պէտք է կատարուի տուողի կողմից վեհանձն առատաձեռնությամբ եւ առանց ընչաքաղցության, իսկ ստացողի կողմից՝ լիակատար ուղղամտությամբ ու խղճամիտ պարկեշտությամբ:

Համաշխարհային տնտեսական ճշմարիտ կանոնակարգ հաստատելու համար հարկաւոր է հրաժարուել չափազանցուած առանձնաշնորհումներից, ազգային փառամոլ յաւակնություններից, քաղաքական տիրապետության տենչանքից, ռազմական բնոյթի հաշուարկներից եւ այնպիսի գործողություններից, որոնք ձգտում են տարածել եւ պարտադրել գաղափարախօսություններ: Բազմաթիւ ու բազմապիսի են առաջարկուած տնտեսական եւ հասարակական համակարգերը. փափաքելի է, որ մասնագէտները նրանցում կարողանան մի ընդհանուր հիմք գտնել համաշխարհային արդար առեւտրի համար: Դա աւելի դիւրին կը լինի, եթէ իւրաքանչիւր ոք, սեփական նախապաշարումներից հրաժարուելով, բաւականաչափ տրամադրուի անկեղծ երկխօսություն վարելու:

ՁԶ. Որոշ պատշաճ կանոններ

Այս համագործակցությունն ի նկատի ունենալով, օգտակար է թւում առաջարկել հետեւեալ կանոնները.

ա) Զարգացող երկրները պէտք է ամէնից աւելի ձգտեն որպէս զարգացման նպատակ սահմանել, յստակ կերպով եւ առանց երկդիմությունների, իրենց քաղաքացիների մարդկային լիակատար աճը: Պէտք է յիշեն, որ այդ զարգացումն իր ծագումն ու աճման ուժը նախեւառաջ գտնում է հէնց տուեալ երկրի բնակչության աշխատանքում եւ հանճարեղ ճարտարամտության մէջ, քանի որ, այո՛, պէտք է կռթնի արտաքին օգնությունների վրայ, բայց նախեւառաջ՝ սեփական պաշարների արժեւորման, ինչպէս նաեւ սեփական մշակոյթի ու աւանդության վրայ, որոնք պէտք է խնամուեն: Այս հարցում, նրանք՝ ովքեր առաւել ազդեցություն ունեն ուրիշների վրայ, պէտք է օրինակ տան:

բ) Զարգացած երկրների ծանրագոյն պարտականությունն է օգնել զարգացող ժողովուրդներին ի կատար ածելու վերոնշեալ յանձնառությունները: Այս իսկ պատճառով, նրանք պէտք է ձեռնարկեն եւ ընթացք տան այն ներքին, հոգեւոր եւ նիւթական վերաքննություններին, որոնք կարող են պահանջուել այս համաշխարհային գործակցության համար:

Այս առումով հարկաւոր է, որ աւելի տկար ու աւելի աղքատ պետությունների հետ կատարուող փոխանակումների ժամանակ յարգանք տածեն նրանց բարիքի նկատմամբ, որոնք իրենց ապրուստի համար՝ իրենց արտադրանքների վաճառքից շահուած հասոյթի կարիքն ունեն:

գ) Միջազգային հասարակությանն է պատկանում զարգացումը համակարգելու եւ խթանելու գործը, հոգալով սակայն, որ այդ նպատակին սահմանուած պաշարները բաշխուեն գերագոյն աստիճանի արդիւնաւէտությամբ ու արդար անկողմնակալությամբ: Բացառությամբ նպաստաւորման սկզբունքի, միջազգային հասարակությանն է պատկանում նաեւ համաշխարհային տնտեսական յարաբերություններն արդարության հրամայականների համաձայն կարգաւորելու գործը:

Լաւ կը լինէր հիմնել հաստատություններ՝ ընդունակ խթանելու եւ կարգաւորելու համաշխարհային առեւտուրը, յատկապէս երբ այդ առեւտուրը կատարւում է նուազ

զարգացած երկրների հետ: Այդ հաստատութիւնները սահմանուած կը լինէին նաեւ հաւասարակշռելու այն անպատեհութիւնները, որոնք առաջանում են պետութիւնների միջեւ կարողութիւնների չափազանց անհաւասարութիւններից: Արհեստագիտական, մշակութային եւ դրամական օգնութեան կողքին, նման կարգաւորումը զարգացման փափաքն ունեցող երկրների տրամադրութեան ներքոյ պէտք է որ դնէր այն պաշարները, որոնք անհրաժեշտ են նրանց տնտեսութիւնների գոհացուցիչ աճն ապահովելու համար:

դ) Շատ դէպքերում հարկաւոր է անյապաղ ձեռնարկել տնտեսական եւ հասարակական կառոյցների վերաքննումին ու վերակազմաւորմանը: Բայց հարկաւոր է ուշադիր լինել եւ խուսափել տեխնիկական վաղահաս լուծումներից, յատկապէս այնպիսիներից, որոնք մինչ մարդուն ընծայում են նիւթական որոշակի օգուտներ, հակասում են նրա հոգեւոր նկարագրին եւ աճին: Քանի որ «միմիայն հացով չէ, որ մարդն ապրում է, այլ՝ Աստծոյ բերանից դուրս ելած իւրաքանչիւրով խօսքով» (Մտթ 4, 4): Մարդկային ընտանիքի իւրաքանչիւր հատուածն իրենում եւ իր լաւագոյն աւանդութիւններում կրում է ինչ որ մի մասնիկ հոգեւոր այն գանձից, որն Աստուած յանձնել ու վստահել է մարդկութեանը, թէեւ շատերն անգիտանում են՝ թէ ո՛ր ակունքից է այն բխում:

ՁԷ. Միջազգային համագործակցութիւնը ժողովրդագրական աճին վերաբերուող հարցերում

Միջազգային համագործակցութիւնն անհրաժեշտ է յատկապէս այն դէպքում, երբ խօսքը վերաբերւում է այն ժողովուրդներին, որոնք բազմաթիւ ա՛յլ դժուարութիւնների շարքին այսօր ամբողջովին իւրայատուկ կերպով կրում են նաեւ ժողովրդագրական արագ աճից առաջացող դժուարութիւնները: Անյապաղ եւ անհրաժեշտ է ուսումնասիրել՝ թէ ինչպէս բոլորի, յատկապէս առաւել հարստացած պետութիւնների ամբողջական եւ շարունակական համագործակցութեամբ կարելի է հայթայթել եւ մարդկային ամբողջ հասարակութեան տրամադրութեան ներքոյ դնել այն բարիքները, որոնք անհրաժեշտ են իւրաքանչիւր անհատի ապրուստի եւ պատշաճ կրթութեան համար: Որոշ ժողովուրդներ կը կարողանային լրջօրէն բարելաւել իրենց կեանքի պայմանները, եթէ պատշաճ կերպով կրթուելով՝ գիւղատնտեսական հին մեթոդներից անցնէին արտադրութեան տեխնիկական նոր մեթոդներին, դրանք հարկաւոր խոհեմութեամբ կիրառելով իրենց պայմաններում. ինչպէս նաեւ, եթէ հաստատէին հասարակական աւելի լաւ կարգեր եւ իրականացնէին հողային սեփականութեան առաւել արդար բաշխում:

Իրենց իրաւասութիւնների սահմաններում, կառավարութիւններն իրաւունքներ եւ պարտականութիւններ ունեն այն հարցերում, որոնք վերաբերւում են իրենց ազգաբնակչութեան ժողովրդագրական խնդրին. ինչպէս, օրինակի համար, այն հարցերում, որոնք վերաբերւում են հասարակական եւ ընտանեկան օրէնսդրութեանը, գիւղական շրջաններից դէպի քաղաք գաղթին, կամ երբ խօսքը վերաբերւում է երկրի վիճակին եւ կարիքներին վերաբերուող տեղեկատուութեանը: Ներկայումս մարդկանց մտքերը մեծապէս խռովուած են այս խնդիրներով: Հարկաւոր է յուսալ, ուստի, որ բոլոր այս հարցերում հմուտ եւ փորձագէտ կաթողիկէները, յատկապէս համալսարաններում, յարատեւօրէն յառաջ կը տանեն արդէն սկիզբ առած ուսումնասիրութիւնները եւ դրանք առաւելագոյնս կը զարգացնեն:

Քանի որ շատերը պնդում են, թէ ժողովրդագրական աճն աշխարհում, կամ առնուազն որոշ երկրներում, պէտք է արմատական եղանակով արգելակուի բոլոր միջոցների կիրառումով եւ կարեւոր չէ՝ թէ հանրային իշխանութեան ինչպիսի միջամտութիւններով, ժողովը բոլորին յորդորում է հեռու մնալ բարոյական օրէնքին հակառակ լուծումներից, լինեն դրանք հրապարակայնօրէն կամ անհատականօրէն խրախուսուած կամ պարտադրուած: Իրօք, ամուսնութեան եւ որդեծնութեան մարդկային անկապտելի իրաւունքի ուժով, աշխարհ բերուելիք զաւակների թուի վերաբերեալ որոշումը կախում ունի ծնողների ուղղամիտ վճռից եւ ոչ մի կերպ չի կարող թողնուել հանրային իշխանութեան կամեցողութեանը: Բայց քանի որ ծնողների այդ վճիռը ենթադրում է ունենալ լաւ կազմաւորուած գիտակցութիւն, մեծ կարեւորութիւն ունի բոլորին հնարաւորութիւն ընծայելը կրթուելու բարոյականութեանը համահունչ պատասխանատուութեան, ինչպէս իրօք վայել է մարդ արարածին, յարգելով

աստուածային օրէնքը եւ հաշուի առնելով պարագաներն ու հանգամանքները: Այս ամէնը գրեթէ ամէնուրեք պահանջում է դաստիարակչական միջոցների եւ հասարակական պայմանների բարելաւում, յատկապէս՝ կրօնական կրթութիւն, կամ առնուազն՝ բարոյական ամրակուռ կրթութիւն: Ազգաբնակչութիւնն, ապա, պէտք է պատշաճ կերպով տեղեկացուած լինի գիտական ձեռքբերումների մասին, որոնք վերաբերւում են այնպիսի մեթոդների փնտռտուքին, որոնք ամուսիններին կարող են օգնել ծնունդների կանոնաւորման հարցում, այն բանից յետոյ՝ երբ յստակ կերպով կը փաստուի այդ մեթոդների արժէքը եւ կը հաստատուի բարոյականութեան հետ նրանց համաձայն լինելը:

ՁԸ. Քրիստոնեաների պարտականութիւններն ուրիշ երկրներին հասցուելիք օգնութեան գործում

Քրիստոնեաները պէտք է ինքնայօժար պատրաստակամութեամբ եւ ամբողջ սրտով համագործակցեն միջազգային կարգի կերտմանը, օրինաւոր ազատութիւնների նկատմամբ յարգանքով եւ բոլորի հանդէպ ընկերական եղբայրութեան ոգով: Առաւել եւս, որ աշխարհի մեծ մասի չքաւորութիւնն այնքա՜ն մեծ է, որ Քրիստոսն Ինքը, յանձինս աղքատների, բարձր ձայնով կարծես պահանջում է Իր աշակերտների մարդասէր գթասրտութիւնը: Քրիստոնեաները պէտք է խուսափեն այս գայթակղութիւնից. մինչ որոշ երկրներ, որոնց բնակչութեան մեծամասնութիւնն իրեն քրիստոնեայ է անուանում, վայելում են բարիքների մեծ առատութիւն, ուրիշ երկրներ զուրկ են հարկաւորից եւ տառապում են քաղցից, հիւանդութիւններից եւ ամէն տեսակ ա՛յլ խեղճութիւններից: Աղքատութեան եւ սիրոյ ոգին, յիրաւի, Քրիստոսի Եկեղեցու փառքն է եւ նրան բնորոշող նշանը:

Գովասանքի եւ խրախուսանքի են արժանի, ուստի, այն քրիստոնեաները, յատկապէս երիտասարդները, որոնք սրտաբուխ կերպով նուիրւում են օգնութեան հասնելու ուրիշ մարդկանց եւ ուրիշ երկրների: Մանաւանդ թէ, Աստծոյ ամբողջ Ժողովրդի գործն է, իր Եպիսկոպոսների խօսքին եւ օրինակին հետեւելով, սեփական ուժերի չափով դարմանել ներկայ ժամանակների թշուառութիւնը. իսկ դա, Եկեղեցու վաղեմի սովորութեան համաձայն, ո՛չ միայն սեփական աւելորդից, այլ նաեւ հարկաւորից վերցնելով:

Նիւթական օգնութիւնների հանգանակութիւնն ու դրանց բաշխումը, առանց չափազանց կարծր ու միակերպ եղանակով կազմակերպուելու, պէտք է կատարուի ըստ թեմական, պետական եւ միջազգային ծրագրի: Ուր դա կարող է բարեպատեհ եւ նպաստաւոր թուալ, կարող է կատարուել կաթողիկէների եւ միւս քրիստոնեայ եղբայրների միջեւ համատեղ ջանքերով: Իրօք, սիրոյ ոգին ոչնչով չի ընդդիմանում հասարակական եւ մարդասիրական նախախնամ եւ կանոնակարգուած գործողութիւնների իրականացմանը. մանաւանդ թէ, պահանջում է դա: Հարկաւոր է, հետեւաբար, որ նրանք՝ ովքեր կամենում են նուիրուել զարգացող երկրների ծառայութեանը, պատշաճ կրթութիւն ստանան տուեալ հարցում մասնագիտացած ուսումնարաններում:

ՁԹ. Եկեղեցու արդիւնաւէտ ներկայութիւնը միջազգային հասարակութիւնում

Եկեղեցին, իր աստուածային առաքելութեան զօրութեամբ, բոլոր ժողովուրդներին քարոզում է Աւետարանը եւ նրանց բոլորին առատօրէն պարգեւում է շնորհի գանձերը: Այսպիսով նպաստում է աշխարհի իւրաքանչիւր մասում խաղաղութիւնն ամրապնդելուն, աստուածային եւ բնական օրէնքի իմացութիւնը դնելով որպէս մարդկանց եւ ժողովուրդների միջեւ եղբայրական համերաշխութեան ամրակուռ հիմք: Այս իսկ պատճառով, Եկեղեցին պէտք է բացարձակ կերպով ներկայ լինի միջազգային հասարակութիւնում, մարդկանց քաջալերելու եւ մղելու համար փոխադարձ համագործակցութեան: Այդ ներկայութիւնը նա կարող է ապահովել ե՛ւ իր հասարակական հաստատութիւնների, ե՛ւ բոլոր քրիստոնեաների ամբողջական եւ ուղղամիտ համագործակցութեան շնորհիւ, համագործակցութիւն՝ որն ոգեշնչուած է բոլորին ծառայելու միակ փափաքից:

Այս նպատակին ամենաարդիւնաւէտ կերպով հասնելու համար, հաւատացեալներն իրենք, գիտակից իրենց մարդկային եւ քրիստոնէական պատասխանատուութեանը, պէտք է ջանան վերարծարծել միջազգային հասարակութեան հետ պատրաստակամ գործակցութեան կամքը, սկսելով իրենց սեփական միջավայրից: Յատուկ հոգատարութիւն պէտք է դրսեւորուի այս հարցում երիտասարդներին կրթելու գործում, լինի կրօնական՝ թէ քաղաքական դաստիարակութեան մարզում:

Ղ. Քրիստոնեաների մասնակցութիւնը միջազգային հաստատութիւններին

Քրիստոնեաների համար միջազգային ասպարէզում գործունէութեան գերագանց կերպ է, անկասկած, գործը, որը նրանց ընձեռնւում է – անհատաբար կամ ընկերակցութիւնների մէջ միաւորուած – արդէն գոյութիւն ունեցող կամ կեանքի կոչուելիք հաստատութիւնների ներսում, որպէս նպատակ ունենալով խրախուսել համագործակցութիւնը երկրների միջեւ: Ինչպէս նաեւ, միջազգային կաթողիկէ տարբեր ընկերակցութիւնները բազմապիսի եղանակներով կարող են օգտակար լինել ժողովուրդների հասարակութեան կերտմանը խաղաղութեան եւ եղբայրութեան մէջ: Ուստի հարկաւոր է զօրացնել դրանք, աւելացնելով լաւ կազմաւորուած գործակիցների թիւը, հարկաւոր նպաստներով եւ ուժերի համապատասխան համակարգման միջոցով: Մեր օրերում, իրօք, գործի արդիւնաւէտութիւնն ու երկխօսութեան անհրաժեշտութիւնը պահանջում են հաւաքական նախաձեռնութիւններ: Առաւել եւս, որ նման ընկերակցութիւնները մեծապէս նպաստում են ներշնչելու այն ընդհանրական զգացողութիւնը, որն այնքա՜ն պատշաճ ու վայել է կաթողիկէներին, եւ կազմաւորելու պատասխանատուութեան ու համերաշխութեան իսկապէս համաշխարհային գիտակցութիւնը:

Ի վերջոյ բաղձալի է, որ կաթողիկէները ջանան գործնական եւ արդիւնաւէտ եղանակով համագործակցել լինի՛ բաժանուած եղբայրների հետ, որոնք նոյնպէս դաւանում են աւետարանական սիրոյ պատուիրանը, լինի՛ ճշմարիտ խաղաղութիւնը փափաքող բոլոր մարդկանց հետ: Այսպէս վարուելով, պարտուպատշաճ կերպով կատարած կը լինեն իրենց պարտականութիւնը միջազգային հասարակութեան ներսում:

Ժողովն, ապա, այն անծայրածիր աղէտների դիմաց, որոնք տակաւին տառապանք են հասցնում մարդկային զարմի մեծամասնութեանը, մեծապէս նպաստաւոր է համարում Եկեղեցու մի համաշխարհային կառոյցի ստեղծումը, աղքատների հանդէպ Քրիստոսի արդարութիւնն ու սէրը ամէնուր արծարծելու նպատակով: Այդ կառոյցը որպէս նպատակ պէտք է ունենայ դրդել կաթողիկէ հասարակութիւնը զարկ տալու կարիքաւոր երկրամասերի զարգացմանը եւ ժողովուրդների միջեւ հասարակական արդարութեանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

ՂԱ. Անհատ հաւատացեալների եւ տեղական Եկեղեցիների պարտականութիւնները

Այն ամէնն՝ ինչ ներկայացւում է այս Սուրբ Ժողովի կողմից, Եկեղեցու ուսմունքային գանձարանի մի մասն է եւ որպէս նպատակ ունի օգնել մեր ժամանակուայ բոլոր մարդկանց – ե՛ւ նրանց՝ ովքեր հաւատում են Աստծուն, ե՛ւ նրանց՝ ովքեր Նրան բացայայտօրէն մերժում են – որպէսզի առաւել վճիտ յստակութեամբ ըմբռնելով իրենց կոչման ամբողջութիւնը՝ աշխարհն առաւել համապատասխան դարձնեն մարդու վեհագոյն արժանապատուութեանը, ձգտեն ամենախոր հիմքերի վրայ կոթնած համաշխարհային եղբայրութեան եւ կարողանան պատասխանել, սիրոյ մղման ներքոյ, վեհանձն ու համատեղ ջանքով, մեր դարաշրջանի ամենաճնշող խնդիրներին:

Իրավիճակների եւ քաղաքակրթութեան կերպերի վիթխարի բազմազանութեան դիմաց, սակայն, այս ներկայացումը բազմաթիւ կէտերում դիտաւորեալ կերպով որդեգրել է ամբողջովին ընդհանուր նկարագիր. մանաւանդ թէ, թէպէտեւ ներկայացւում է Եկեղեցում արդէն ընդհանրացած մի ուսմունք, բայց քանի որ յաճախ խօսքը վերաբերւում է շարունակական յեղաշրջման ենթակայ իրողութիւնների, այստեղ ներկայացուած վարդապետութիւնը պէտք է շարունակուի եւ ընդարձակուի:

Կամենում ենք վստահ լինել, որ բազմաթիւ խնդիրները, որոնց անդրադարձանք Աստծոյ խօսքն ու Աւետարանի հոգին որպէս հիմք ունենալով, կարող են վաւերական օգնութիւն հանդիսանալ բոլորի համար, յատկապէս այն բանից յետոյ, երբ քրիստոնեաները, Հովիւների առաջնորդութեան ներքոյ, կ՚իրականացնեն դրանց յարմարեցումը ժողովուրդներից իւրաքանչիւրին եւ տարբեր աշխարհայեացքներին:

ՂԲ. Երկխօսութիւնը բոլոր մարդկանց միջեւ

Եկեղեցին, իր առաքելութեան զօրութեամբ – առաքելութիւն, որ կայանում է ամբողջ աշխարհն աւետարանական պատգամով լուսաւորելու եւ որեւէ ազգութեան, ցեղի եւ քաղաքակրթութեան պատկանող բոլոր մարդկանց մէկ միակ Հոգիով համախմբելու մէջ – դառնում է նշանն այն եղբայրութեան, որը հնարաւոր է դարձնում եւ ամրապնդում է անկեղծ երկխօսութիւնը:

Սա պահանջում է, որ նախեւառաջ ինքնին Եկեղեցու ներսում զարկ տանք փոխադարձ գնահատանքին, յարգանքին եւ համերաշխութեանը, ընդունելով բոլոր օրինաւոր տարբերութիւնները, միշտ աւելի բեղուն երկխօսութիւն հաստատելու համար բոլոր նրանց միջեւ, ովքեր կազմում են Աստծոյ միակ Ժողովուրդը, խօսքը վերաբերուի հովիւներին՝ թէ միւս քրիստոնեայ հաւատացեալներին: Աւելի հզօր են, իսկապէս, հաւատացեալներին միաւորող իրողութիւնները, քան միւսները՝ որոնք նրանց բաժանում են. թող որ միութիւն լինի կարեւոր հարցերում, ազատութիւն՝ երկբայականներում, սէր՝ ամէն ինչում:

Մեր միտքը միաժամանակ ուղղւում է եղբայրներին եւ նրանց համայնքներին, որոնք տակաւին լիակատար հաղորդութեան մէջ չեն ապրում մեր հետ, բայց որոնց մենք միացած ենք Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու հանդէպ հաւատքի դաւանութեան մէջ եւ սիրոյ կապով, չմոռանալով՝ որ քրիստոնեաների միութիւնն այսօր սպասուած եւ փափաքուած է նաեւ շատերի կողմից, որոնք Քրիստոսի հաւատացեալները չեն:

Որքան աւելի այս միութիւնը կ՚աճի ու կը զարգանայ ճշմարտութեան եւ սիրոյ մէջ, Սուրբ Հոգու հզօր ազդեցութեան ներքոյ, այնքան աւելի համայն աշխարհի համար կը դառնայ միութեան եւ խաղաղութեան նախազգացում: Ուստի, միաւորելով մեր ուժերը եւ գործի դնելով, ներկայ պահին, այսքա՜ն բարձրակարգ նպատակի արդիւնաւէտ իրականացմանը միշտ աւելի համապատասխանող մեթոդներ, ջանանք Աւետարանին ամէն օր աւելի կերպարանակից դարձող վարքով՝ եղբայրաբար համագործակցել մարդկային

ընտանիքի ծառայութեանը, որը կանչուած է Քրիստոս Յիսուսի մէջ դառնալու Աստծոյ որդիների ընտանիքը:

Մեր միտքն ուղղում ենք նաեւ բոլոր նրանց՝ ովքեր հաւատում են Աստծուն եւ իրենց աւանդութիւններում պահպանում են կրօնական եւ մարդկային թանկարժէք տարրեր, մաղթելով՝ որ վստահասիրտ երկխօսութիւնը կարողանայ մեզ բոլորիս առաջնորդել հաւատարմութեամբ ընդունելու Հոգու մղումները եւ դրանք պատրաստակամութեամբ հասցնելու իրենց կատարումին:

Ինչ վերաբերւում է մեզ, փափաքը՝ հաստատելու մի երկխօսութիւն, որը ներշնչուած կը լինի միմիայն ճշմարտութեան հանդէպ սիրուց եւ յառաջ տարուած կը լինի պատշաճ խոհեմութեամբ, չի բացառում ոչ ոքի. ո՛չ նրանց՝ ովքեր մարդկային բարձրակարգ արժէքների պաշտամունքն ունեն, թէեւ տակաւին չեն ճանաչում դրանց Հեղինակին, ո՛չ նրանց՝ ովքեր հակառակւում են Եկեղեցուն եւ նրան տարբեր կերպերով հալածում են:

Հայրն Աստուած լինելով բոլորի սկիզբն ու վախճանը, մենք բոլորս կանչուած ենք եղբայրներ լինելու: Եւ հետեւաբար, մէկ միակ եւ միեւնոյն մարդկային եւ աստուածային կոչմանը կանչուած լինելով, առանց բռնութեան եւ առանց խաբկանքի, կարող ենք եւ պարտաւոր ենք միասին աշխատել՝ ճշմարիտ խաղաղութեան մէջ աշխարհի կերտման գործում:

ՂԳ. Աշխարհ, որն հարկաւոր է կառուցել եւ հասցնել իր կատարումին

Քրիստոնեաները, յիշելով Տիրոջ խօսքերը. «Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը կ՚իմանան, որ դուք իմ աշակերտներն էք» (Յովհ 13, 35), ոչինչ չեն կարող աւելի բուռն կերպով բաղձալ՝ քան առաւել վեհանձնութեամբ ու արդիւնաւէտութեամբ ծառայելը ժամանակակից աշխարհի մարդկանց: Ուստի, հաւատարմօրէն յարելով Աւետարանին եւ որպէս զօրավիգ ունենալով նրա ուժը, միաւորուած բոլոր նրանց հետ՝ ովքեր սիրում եւ գործադրում են արդարութիւնը, ստանձնել են այս երկրի վրայ կատարուելիք մի հսկայական յանձնառութիւն. դրա վերաբերեալ հաշիւ են տալու Նրան, ով բոլորին դատելու է վերջին օրը:

Ո՛չ բոլոր նրանք, իրօք, ովքեր ասում են. «Տէ՛ր, Տէ՛ր», կը մտնեն Երկնքի Արքայութիւն, այլ նրանք՝ ովքեր կատարում են Հօր կամքը[1] եւ քաջաբար գործում են: Որովհետեւ Հօր կամքն այն է, որ բոլոր մարդկանց մէջ մենք տեսնենք եւ գործնականապէս սիրենք Քրիստոսին՝ մեր եղբօրը, խօսքով եւ գործով, այսպիսով վկայելով ճշմարտութեանը, եւ ուրիշներին հաղորդենք երկնաւոր Հօր սիրոյ խորհուրդը:

Այսպէս վարուելով, երկրագնդի բոլոր մարդկանց սրտերում կը վերարծարծենք մի վառ յոյս, որ պարգեւն է Սուրբ Հոգու, որպէսզի վերջում նրանք ընդունուեն դերագոյն խաղաղութեան եւ երանութեան մէջ, հայրենիքում, ուր պայծառափայլ շողում է Տիրոջ փառքը: «Նրան, ով ըստ այն զօրութեան, որ գործում է մեզնում, կարող է անսահմանօրէն աւելին անել, քան այն ամէնն՝ ինչ մենք կարող ենք խնդրել կամ մտածել, Նրան փա՜ռք Եկեղեցում եւ ի Քրիստոս Յիսուս, բոլոր ժամանակներում, յաւիտեանս յաւիտենից: Ամէն» (Եփս 3, 20-21):

[1] Հմմտ. Մտթ 7, 21.

© «Ընդհանրական» Հրատարակչություն
www.mashtoz.org

Սոյն Հովուական Սահմանադրութեան մէջ պարունակուած մտքերի ամբողջութիւնը եւ նրանցից իւրաքանչիւրն առանձին, հաճոյ թուացին Սուրբ Ժողովի Հայրերին: Եւ Մենք, Քրիստոսի կողմից Մեզ տրուած Առաքելական իշխանութեամբ, Հոգեշնորհ Հայրերի հետ միասին, Սուրբ Հոգու մէջ վաւերացնում, սահմանում եւ հաստատում ենք դրանք: Եւ ինչը որ այսպէս միասնաբար վճռուել է, հրամայում ենք, որ հրատարակուի ի փառս Աստուծոյ:

Հռոմ, 7 Դեկտեմբեր 1965թ.

Ես՝ *ՊՕՂՈՍ*, Կաթողիկէ Եկեղեցու Եպիսկոպոս:

(*Հետեւում են ժողովական Հայրերի ստորագրութիւնները*)

© «Ընդհանրական» Հրապարակչություն
www.mashtoz.org

* * * * * * *

Սիրելի ընթերցող,

հոգու մեծ գոհունակությամբ՝ անվճար տրամադրեցինք այս գիրքը քեզ և մեր բոլոր հոգեսեր ու ընթերցասեր ազգակիցներին:

Հուսով ենք այն օգտակար եղավ քեզ:

www.mashtoz.org կայքը և նրան զուգահեռ գործող Ընդհանրական Հրատարակչատունը, լավագույն կերպով շարունակելու համար իրենց ծառայությունը, կարիք ունեն նաև քո գիտակից մասնակցությանը:

Ըստ քո կարողության (այս գրքի 1 օրինակի գինը 1.250 դրամ է), նպաստի՛ր հոգեշահ նոր գրքերի հայացմանն ու տարածմանը: Եթե հնարավորություններիդ սահմաններում է, վճարի՛ր 1, 5, 10, 20, 50, 100 կամ ավելի օրինակների տպագրության համար անհրաժեշտ գումարը և այդպիսով օգնի՛ր հոգեշահ գրքերի հրատարակմանն ու անվճար տարածմանը: Քո այդ նվիրատվության շնորհիվ այս հատորները կհասնեն նաև նրանց, ովքեր դրանք գնելու կամ համացանցում ընթերցելու հնարավորությունն իրոք չունեն:

Մեր հաշվեհամարն է.

«Կոնվերս Բանկ»
հ/հ 19300 340285 90100
Ստացող՝ Ընդհանրական ՍՊԸ
Նպատակ՝ Հրատարակչություն

Փոխանցումներ հնարավոր է կատարել հայաստանյան որևէ դրամատան որևէ մասնաճյուղից:

Սփյուռքից փոխանցումներ հնարավոր է կատարել և՛ դրամատների, և՛ PayPal համակարգի միջոցով, այցելելով www.mashtoz.org կայքի «Մեր մասին» էջը:

Շնորհակալություն առ Աստված, և ամենայն բարիք Ձեզ:

www.mashtoz.org կայքի
խմբագրակազմ

* * * * * * *